

3076

Վ. Եղիազյան

Օրեր և  
Մեծերի Ծառեր

Տիրիս. 1880թ.

82

Շ - 53

0158 - 12/27/78

CONFIDENTIAL

82-2  
B-63

ՎԻԼԵՆՍ ՀԵԿՍՊԻՐ

ՕՏԵԼԼՕ

ՎԵՆԵՏԿԻ ՄԱՐԻ.

ՈՂԵՐԳՈՒԹԻՒՆ

ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԾՈՎ.

ՀԵԿՍՊԻՐԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵՆԱՄԲ

III

[Ժարգմանը թիւն

ՍՅԵՓՈՂՈՒԹ ԾՈՒՂՔՆԵՐԵՆ

Տ Փ Խ Ի Ս

Տիֆլիսի Կարգադրանքի Տպարանում

1880

Шекспир  
Отелло  
ТИФЛИС 1880

*[Faint handwritten text in Armenian script, likely bleed-through from the reverse side of the page.]*



2005 NOV 07. 2013

3076



### ՆՈՒՆԻ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆՅԻՆ

«Քանի որ մեր ազգի մէջ ևս Օտէլլօի պէս մարդիկ նախանձից զրդուած զոհումեն Իեզդէմոնայի նման առարիւնի կանանց՝ քանի որ Եազօի նման սատանաները դէռ ևս զոյութին և աւերիչ ազդեցութիւն ունեն մեր ազգի մէջ Շէկսպիրի «Օտէլլօն» անհրաժեշտ և օգտակար է մեզ»

Եւր թո խօսքերը և ազգիս սէրը քաջալերեցին ինձ ձեռք զարկել այդ մեծ ողբերգութեան թարգմանութեանը, չնայելով ազգուարդելքների:

Ուրեմն ընդունի՛ր քաղցրութեամբ, անկեղծ ընկեր, քաջալերութեանդ պտուղը:

ԹԱՐԳՄԱՆԻԶ.

1001  
2212

Исвол. Цензурою 29 Января 1880 года Тифлисъ.



Типография И. Мартиросянца на Орбелиановской улицѣ д. № 5.



ԳԹ

Յայտնումեմ բոլոր սրտով խորին շնորհա-  
կ պուլթինս և երախտագիտութիւնս Պ. Հա-  
զարապետ Սուլխանեանցին, որ իւր ձեռնառու-  
թեամբ շտապեցրեց «Օտէլլօի» լոյս տեսնելը:

Ս. Ս.

պատմական հարցերի վերաբերյալ հարկադրեալ ընդհանուր հարցազրույցի մասին հարկադրեալ ընդհանուր հարցազրույցի մասին հարկադրեալ ընդհանուր հարցազրույցի մասին

### ՇԷԿՍՊԻՐ

ՇԷԿՍՊԻՐԻ ԿԵՆՍԱԳՐԻ ԻԹԻԻՆԸ:

Վիլեամ Շէկսպիրը, այդ անմահ դրամատիկական  
հանձարը, ազգերի և ժամանակների ամենամեծ բանաստեղծ-  
ներից մէկը, ծնաւ 1564 թուին Նաաֆորդում Ավոնի վերայ  
(Վարվիկեան դքսութեան մէջ) և մեռաւ 1616 թուին Լոնդո-  
նում: Նորա հայրը ձեռնոցաբորժ էր . . . : Նաաֆորդում  
զանուղ իտալական ազատ դպրոցը միջոց տուաւ երիտասարդ  
Շէկսպիրին ուսումնասիրելու կլասիկական լեզուների սկզբունքը:  
Բանաստեղծը շատ վաղ պատահեց դժբաղդութեանց: Հայրը  
դեռ 1578 թուին նեղ գրութեան մէջ ընկաւ և երիտասարդ  
Շէկսպիրը ստիպուած էր մատաղ տարիքից սկսած իւր ապ-  
րուստը հոգալ: Մի ուրիշ դժբաղդութիւն էլ Շէկսպիրի ըն-  
տանեաց համար ազգականներից մէկի 1583 թուին պատժուելն  
էր: Բանաստեղծի երգիծաբանական մի ոտանաւորը մի սեր  
Քովմաս Լիւսի վերայ, որ պարծենուձէր իւր ծագմամբ՝ պատճառ  
եղաւ վերջինի անհաշտ թշնամութեան իրա դէմ, որից ազատուե-  
լու համար Շէկսպիրը ստիպուեցաւ փախչել Լոնդոն 1586—7  
թուին: Այստեղ նա սկսուձէ անկանոն կեանք վարել և մահու-  
մէ թափառական դերասանների խմբի մէջ: «Սյոլ» առաջին  
քայն էր, Հէրվենուսի խօրքերով, որ այն ժամանակ կարող էր  
անել միայն նա, ով իրան բարոյապէս քաջ և այն ժամանա-  
կուայ նախապաշարումներից մինչև անգամ և ընդհանուր-մարդ-  
կային համոզմունքներից ազատ էր համարուձմ: Ամբողջ խումբ

գերասանները-Գրին, Հէմինգ, Սլէյ, Տուլէյ, Բուրբէլ և նորա  
 սրբի Ռիչարդ, որոնք ամէնքն էլ Վարվիկեան դքսութիւնից  
 էին՝ խրախուսեցին Նէկսպիրին այդ ասպարիզում: Բանաստեղծի  
 յաջողութիւնը—վճռողական և արագ էր: Արդէն 1589 թու-  
 ին նա այն գերասանական խմբի գլխաւոր մասնակից և անդամ  
 էր համարվում: «Ահա թէ ինչու, ասումէ Հէրվինուսը, ոչ ոք  
 չի ուզում հաւատալ այն անանգութեան՝ թէ Նէկսպիրը մի  
 ժամանակ Բլակֆրէյրեան թատրոնի նշանաւոր այցելուների  
 ճիւղն էր պահում: Անգլիայի թատերական գրուածները  
 մինչև Նէկսպիր մի շատ տխուր պատեր են ներկայացնում:  
 Հէրվինուսը գրումէ. «Անգլիական դրամատիկական բանաստեղ-  
 ծութիւնը մինչև Նէկսպիր, նման է մի համր ուղեցոյցի, որ  
 չի իմանում թէ ո՞ւր պիտի հասնի. մի ուղի՛ որ անցնումէ  
 խիտ թփերով պատած շաւիղների, բոմանտիկական ամայու-  
 թեանիջով, այնպէս որ մենք արդէն զգումենք տեղի դիրքի  
 վայելչութիւնը, բայց դեռ չենք ճաշակում նորան»: Անգլիա-  
 կան բեմի վերայ առաջ ներկայացնումէին խրատական դրա-  
 մաներ (միստերեա և մօրալ), յետոյ երևեցան նախնիին  
 նմանելու փորձեր և վերջապէս Անգլիացիք ունեցան սեփհա-  
 կան տաղանդաւոր դրամատիկական բանաստեղծներ. Պիլեա,  
 Մարլով և Գրին: Այս վերջինները գրումէին «մենամարտական  
 ձևով» այսինքն պատմում էին սարսափներ և զանազան ան-  
 բնականութիւններ իւրեանց հերոսների վերայ: Ուղիղ հաս-  
 կացողութիւն այդ արուեստի մասին նոքա չունէին: Ճշմարտու-  
 թեան համար պէտքէ ասել, որ Նէկսպիրը սովորեց և նրանց  
 մօտ այն բոլորը, ինչ որ կարելի էր սովորել մեղուի նման նա  
 ծաղկաբաղ արաւ իւր ժամանակակիցների արդիւնքներից:  
 «Այն առանձին յատկութիւնները, գրումէ Հէրվինուսը, որ  
 ժամանակակիցների մէջ առանձին առանձին երևումէր՝ Նէկս-  
 պիրը պարտ ու պատճառ չափով ու ներդաշնակութեամբ

սեփհականացրեց: Նէկսպիրը առաջինը եղաւ, որ մեծ ճար-  
 տարութեամբ կարողացաւ բնաւորութիւնները համախմբել  
 (grouped) և անձնաւորութիւնները ու նոցա փոխադարձ յարա-  
 բերութիւնները որոշ կերպով հանդէս հանել: Առաջին անգամ  
 նա դրամատիկական խառնիխուռն արտադրութեանց մէջ մշա-  
 ցրեց այն զօրաւոր ելեքտրական ոյժը, որ կապեց իրար հետ  
 միւս ցրուած տարրերը: Նէկսպիրի դրամատիկական հանձարին  
 ամենամեծ և անմիջապէս զարթեցնողը—այն ժամանակուայ  
 բեմական արուեստի ծաղկած դրութիւնը էր: Այդպէս միայն  
 Ռիչարդ Բուրբիջ, այն ժամանակուայ հանձարեղ գերասանը,  
 այն միայն այդ Ռիչարդ Բուրբիջը կարող էր սովորեցնել Նէկս-  
 պիրին աւելի շատ քան տաս Մարլովներ: XVI դարից սկսած  
 Անգլիական թատրոնը քանի գնում աճում և բարգաւաճումէր:  
 1578 թուին արդէն Լոնդոնում և Լոնդոնից դուրս ութ ա-  
 ռանձին թատրոն էր գտնվում: 1600 թուին նրանց թիւը  
 հասնումէր մինչև 11-ի: Յակոբ Ա-ի ժամանակ նոր կառու-  
 ցուած և նորոգուած թատրոնների թիւը հասնումէր 17-ի:  
 Թիւ, որ, Հէրվինուսի խօսքերով, չունի և այժմեան Լոնդոնը,  
 որ այն ժամանակուանից վեց անգամ աւելի մեծ է: Կոմս  
 Լէյչեստեր—լորդ Գանձապետը պաշտպան էր բեմական արուես-  
 տին: Եղիսարէթ թագուհին 1583 թուին առաջին անգամ  
 իւր պաշտպանութեան ներքոյ առաւ 12 կայսերական գերա-  
 սանների: Բեմը ծաղկեցաւ չնայելով պուրիտանների ճնշո-  
 ղութեանց, չնայելով մինչև անգամ կոպիտ նախապաշարու-  
 ներին: Այն ընկերութիւնը, որի մէջ սկզբում մտաւ Նէկս-  
 պիրը Լոնդոնում՝ էր այն ժամանակ և եղաւ յետոյ ամենալաւը  
 և ամենանշանաւորը: Դոքա լորդ-գանձապետ-կոմս Լէյչեստերի  
 ծառայողներն էին, որոնք 1589 թուին թագուհու գերասան-  
 ների տիրոջ ստացան: Բուրբիջը այդ ընկերութեան գլուխն  
 էր: Նորան և Նէկսպիրին էր պատկանում բեմը: Ռ. Բուրբիջը

ունէր անշարժ սեփհականութիւն 1000 Փունտ ստէրլինգ արժողութեամբ, իսկ Շէկսպիրին պատկանում էր հանդերձատունը և բեմական կարասիները 500 Փունտ ստէրլինգ արժողութեամբ: 1608 թուին կոմս Սուտագէմպտօն անուանումէ արդէն Բուրբիջն և Շէկսպիրին՝ «շատ հաշակաւոր» զորքեր թատրոնի: Երբ Բուրբիջը մեռաւ (մեռաւ նա հէնց այն ժամանակ, երբ մեռաւ Յակոբ Թագաւորի կինը Աննան) նորա մահուան վերայ Լոնդոնում աւելի ցաւեցան քան թագուհու: Բուրբիջի հանձարը դերասանութեան մէջ, նկատումէ Հէրլինտօրը, պատճառ եղաւ Շէկսպիրի հանձարի այնպէս փայելուն: Բուրբիջը խաղումէր Համլէտի, Օտէլլօի, Ռիչարդ III-ի, Շէլլօկի, Հէրիկոս արքայ որդու և Հէրիկոս V կայսրի, Բօմօի, Պէրիկլէսի, Կօրիօլանտի, Բրուտոսի, Լիրի, Մակբէթի դերերը: Ենթ նա բեմի վերայ էր, այնպիսի դիւթական զօրութեամբ իւր վերայ էր արձանացնում տեսնողների հայեացքը և լսողութիւնը, որ ոչ ոք չէր համարձակվում խօսել զրացիի հետ և ոչ այս այն կողմ նայել: Այդպիսի հանձարեղ դերասանը, արդարև կարող էր օգնել Շէկսպիրի դրամատիկական հանձարի ծաղկելուն: Բանաստեղծը զրեց Պէրիկլէսին, որպէս զի միայն աւելի տայ իւր բարեկամ Բուրբիջին արտայայտելու մի քանի ժամուայ ընթացքում կեանք՝ լի հասակի զանազան աստիճանի յուզմունքներով: Շէկսպիրի մասին, իբրև դերասանի, զանազան կերպով են դատում: Ոմանք նորան դասում են նշանաւորների կարգում, ոմանք—միջակ: Աւելի հաւատալին և յայտնին այն է, որ նա խաղումէր Համլէտի հօր ուրուականի դերը, և այդ դերը բարձր էր նորա արուեստից: Շէկսպիրի առաջին բանաստեղծական փորձերն էին. «Տիտոս Անդրոնիկոս» և «Պէրիկլէս», «Հէրիկոս V», «Մուլթիւնների կատագրիկութիւն» և «Անհնազանդին հնազանդեցնելը»: Շէկսպիրի փառքը տարեց տարի մեծանումէր: Նղիսաբէթ թագուհին կամեցաւ անձամբ ծանօթանալ

բանաստեղծի շատ հետ անգամ հրաւիրումէր նորան իւր ընկերութեան մէջ և շատ անգամ օգնումէր իւր խորհուրդներով: Յակոբոս I կայսրը նոյնպէս պաշտպանումէր Շէկսպիրին: Բանաստեղծը մեռաւ իւր փառքի ամենամեծ փայլով լուսաւորուած: Շէկսպիրի ՈՂԹԵՐԳՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԿԱՏԱԳԵՐԿՈՒԹԵԱՆՑ ԴԱՍԱԻՐՈՒԹԻՒՆԸ: Շէկսպիրի բաղմամբիւ դրամաների մէջ չ'կայ մէկը նմանողութեամբ գրուած, այլ բոլորը ինքնուրոյն են: Ահա նորա դրամաների դասաւորութիւնը, ինչպէս նշանակած է Մալար. «Հէրիկոս V կայսրը. և Նրկու Վերոնցիներ» 1591 թ. «Ռիչարդ II կայսրը» և «Ռիչարդ III կայսրը» 1593 թ. «Անհետեանք սէրի համար աշխատութիւն» «Վենետիկի վաճառական», «Երազ Ամառային գիշերում» 1594 թ. «Անհնազանդին հնազանդեցնելը», «Բօմօ և Յուլիա» «Յովհաննէս կայսրը» 1596 թ. «Հէրիկոս IV-ի առաջին մասը» 1597 թ. «Հէրիկոս IV-ի երկրորդ մասը», «Ինչպէս կամենաք», «Հէրիկոս V կայսրը» 1599 թ. «Մեծ աղմուկ չնչին բանի համար», «Համլէտ» 1), «Վինգզորի կանայք» 1601 թ. «Տրօիլ և Կրէստիգոս» 1602 թ. «Ինչ չափով դատէք, այն չափով էլ կ'պատժուէք» և «Հէրիկոս կայսրը» 1603 թ. «Օտէլլօ կամ Վենետիկի Մաւր» 2) 1604 թ. «Լիր արքայ» 1605 թ. «Ամէն բանի վերջնէ դովելին» և «Մակբէթ» 1606 թ. «Յուլիոս Կեսար» և «Ինչ կամենաք» 1607 թ. «Անտոնիոս և Կլէոպատրա» 1608 թ. «Յիմբէլլին» 1609 թ. «Կօրիօլանտ» 1610. «Ձմեռային առակ» և «Մրրիկ» 1611 թ.

Շէկսպիրի դրամաները կարող են երկու ձիւղ բաժանուել.

- 1) Ուրեշները Համլէտին 1603 և 1604 թ. են վերաբերում:
- 2) Պէյն Կուլլեթը «Օտէլլօին» վերաբերում է 1602 թ. Տես «Օտէլլօի» յաւաքաբանը:

պատմական, որ վերաբերում են մի յայտնի ժամանակամիջոցի, և համարժեցիկն: Պատմական ողբերգութեանց նիւթը առած է մասամբ Յունական պատմութիւնից (Տրոյի և Կրէսիդա, Տիմոն Աթենացի). Հռոմէական պատմութեանից. (Կորիօլանոս, Յուլիոս Կեսար, Անտոնիոս և Կլէոպատրա, Տիտոս Անդրոնիկոս) և Անգլիական պատմութիւնից: Նէկսպիրը, ինչպէս ազգային բանաստեղծ, աւելի սիրում էր արտայայտել իւր ազգի անցեալ կեանքը: Լինե՞նք իսօքերը. «Ճաս դրամաները Անգլիական պատմութիւնից կազմում են իբրև մի ամբողջ և կարելի է նայել նոցա վերայ ինչպէս մի ժամանակամիջոցի հրաշալի դրամայի առանձին առանձին երգերի: Նոցանից ութը (Ռիչարդ III, Հէնրիկոս IV-ի երկու մասերը, Հէնրիկոս V, Հէնրիկոս VI երեք մասերը և Ռիչարդ III) պարունակում են մի դարու ընթացքում պատահած անցքերը և ներկայացնում են մի ամբողջ բանաստեղծական պատկեր այն պատերազմի՝ որ անգլիական պատմութեան մէջ յայտնի է Սպիտակ և Կարմիր վարդերի պատերազմներ անունով. իսկ երկուսը. «Յովհաննէս կայսր» և «Հէնրիկոս VIII» ծառայում են իբրև նախերգանք (prologue) և վերջաբան (epilogue) միւսների համար»: Մալբորոն Անգլիայի ականաւոր մարդկանց մէկը, ասում է. «Անգլիական ողջ պատմութիւնից ես գիտեմ միայն այն, ինչ կարգացել էմ Նէկսպիրում»:

Նէկսպիրի թատերական գրաւածների պսակը կազմում են հինգ ողբերգութիւններ, որոնց մէջ մարդկային բնութիւնը ներկայացվում է ընդհանուր տեսակետերից: Սոքա են. Բոճօ և Յուլիոս, Օթէլլօ, Համլէթ, Լիր արքայ և Մալբէր:

ՆԵԿՍՊԻՐԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ:

Առհասարակ Նէկսպիրի թատերական գրաւածների նշա-

նակութեան վերայ Հէրվինուսը այսպէս է ասում: «Նէկսպիրի նշանակութիւնը երբէք չի բացատրուիլ նորա բանաստեղծական մեծութիւնը խոստովանելով: Ինչպէս, օրինակ, նորա գրաւածները անուանեցին Աշխարհային աստուածաշունչ: Ջոնսօնը ասում էր թէ նորա նկարագրութիւններից մինչև անգամ ճգնաւորը կարող է սովորել գնահատել աշխարհային դործերը: Շատ անգամ կրկնուել է թէ ողջ աշխարհը, ողջ մարդկութիւնը արտափայլում է նորա բանաստեղծութեանց մէջ ինչպէս հայելու մէջ: Եւ այս բոլորը չափազանցութեան հասցրած արտայայտութիւններ չեն, այլ հասուն մտքի, հաստատ հիմքի վերայ յենած դատողութիւններ են: Նորա ստեղծած արդիւնքների մէջ մարդկութիւնը ոչ թէ միայն էական, բանաստեղծական բնաւորութեամբ է ներկայացրած, ինչպէս հին ժամանակուայ դրամատիկական արհեստների մէջ. այլ ամենաշոշափելի անհատական (ИНДИВИДУАЛЬНЫЙ) գծագրութեամբ: Նա միջոց տուաւ մեզ նայելու իւրաքանչիւր անհատի ներքին հոգեկան կեանքի ամենայն դրութիւնները, ընտանեկան և մասնաւոր կեանքի ամենայն վիճակները, հասարակական, հրապարակական, պատմական կեանքի բոլոր փոփոխութիւնները: Նա ծանօթացնում է մեզ Հռոմէական արհեստագրութեան, հասարակագրութեան և կայսերութեան հետ, Գալլերի և Բրիտանեայի բնիկների զիցաբանական, դիւցազնական աշխարհի հետ, միջնադարեան բուհանոտիկական ասպետական առասպելական արկածներով լի կեանքի հետ, վերջապէս մեզ աւելի մօտ իւր ազգի միջին և նոր դարերի կեանքի հետ: Այս բոլոր ժամանակամիջոցների, այս բոլոր բազմատեսակ յարաբերութեանց վերայ, այդ մեծ բանաստեղծը անցնում է այնպիսի կատարեալ տեսութեամբ և հասկացողութեամբ, այնպէս հեռու է նախապաշարումներից և կուսակցական ոգուց, այնպէս բարձր է հասկացողութեամբ ազգից և ժամանակից, սակայն մի տողում ցոյց է տալիս այնպիսի

Հասուն դատողութիւններ և քննութիւններ արուեստների, գիտութեանց, քաղաքակառուցութեան և կրօնի վերաբերմամբ, որ կարծես թէ նա պատկանումէ աւելի ուշ, աւելի լուսաւորեալ դարու: Ընդհանուր մարդկային և սնհատական գրութեանց արտաքին և ներքին կեանքի մէջ, նա ցոյց է տալիս այնպիսի իմաստութիւն և այնպիսի տեղեկութիւն մարդկային սրտի, որ այդ կողմից նա մեր աչքի առաջ հանդիսանումէ անհերքելի մի հեղինակ-ուսուցիչ: Նա դուրս հանեց իւր բարոյական հայեացքը կեանքի վերայ այնպիսի առատ նկատողութիւններից արտաքին աշխարհքի վերայ և լուսաւորեց նորան այնպիսի հարուստ ներքին կեանքով, որ Շէկսպիրին մեծ վստահութեամբ գերադասելով միւս մատենագիրներից կարելի է անուանել ուսուցիչ մեր կեանքի ընթացքի: (Շէկսպիր. Հէրվինուսի)

ԿԱՐԼԷՅԼԻ ԽՕՍՔԵՐԸ. «Շէկսպիրը այն ամենամեծ ծնունդն է, որ մենք Անգլիացիներս արաագրեցինք: Նթէ մեզ հարցնէին. «Անգլիացիներ, որից կ'բաժանուէիք չէր Հնդկական կալուածներից թէ չէր Շէկսպիրից». Մենք կ'պատասխանէինք. «Հնդկական կալուածների հետ կամ առանց նոցա կարող ենք ապրել, բայց առանց Շէկսպիրի երբէք: Հնդկական կալուածները, ամենայն դէպքում, երբ և իցէ կարող են դուրս գալ մեր ձեռքից, բայց Շէկսպիրը երբէք չի հեռանալ մեզանից. նա միշտ կ'մնայ մեզ հետ: Ո՛չ մերք չենք փոխել ոչ մի բանի հետ մեր Շէկսպիրին»:

Ն. Մ. ԿԱՐՍՄՁԻՆԻ ԽՕՍՔԵՐԸ. «Այս հեղինակը ապրումէր Անգլիայում Նդիսարէթ թագուհու ժամանակ և էր մէկը այն մեծ հանձարներից, որոնցով փասաւորվում են դարերը: Նորա աշխատութիւնները զրամատիկական ճիւղին են պատկանում: Փամանակը, այդ զօրեղ ոչնչացնողը արեգակի տակ գտնուած բոլոր իրերին, չէ կարողացել դեռ մինչև այսօր նստացնել Շէկսպիրի ստեղծագործութիւնների վսեմութիւնը և մեծու-

թիւնը: Դժ Անգլիան համարեա միարերան համաձայն է այն գովասանքին, որ տալիս են այդ մարդուն թող հարցնեն ընթերցմամբ պարագող մի Անգլիացու. «Ո՞նչպիսի մարդ է Շէկսպիրը». առանց կտակածելու նա իսկոյն կ'պատասխանէր. «Շէկսպիրը մեծ մարդ է, Շէկսպիրը միակ է». Շէկսպիրից յետոյ ապրող Անգլիայի բոլոր ընտիր մատենագիրները մեծ ջանքով թափանցել են նորա արտագրութեանց վսեմութեան, գեղեցկութեան մէջ:

Միլտոն 1, Իւնգ 2, Տոմսոն 3 և ուրիշ ականաւոր հեղինակները նորա արդիւնքներից շատ օգուտ են քաղել: Շատ քիչ մատենագիրներ այնպէս խոր թափանցեցին մարդկային բնութեան մէջ, ինչպէս Շէկսպիրը. շատ քիչերը այնպէս լաւ իմացան բոլոր մարդկային զաղանիքները, ամենաքաղարկեալ հակամիտութիւնները, իւրաքանչիւր կրքի, իւրաքանչիւր աստիճանի և իւրաքանչիւր տեսակ կեանքի էութիւնը ինչպէս այս զարմանալի Նկարիչը: Նորա բոլոր շքեղ պատկերները անմիջապէս բնութեան է նմանում, այդ պատկերների բոլոր ստուերները զարմանք են պատճառում ուշադիր նշմարողին: Մարդկանց իւրաքանչիւր աստիճանը, իւրաքանչիւր տարիքը, իւրաքանչիւր կիրքը, իւրաքանչիւր բնաւորութիւնը նորա մօտ խօսումէ իւր սեփհական լեզուով: Իւրաքանչիւր մտքի համար նա գտնումէ ձև, իւրաքանչիւր զգացողութեան համար արտայայտութիւն, հոգու իւրաքանչիւր յուզման համար ամենալուծ: Նորա նկարած նկարը է նուրբ զոյները փայլուն՝ երբ կամենումէ ցոյց տալ առաքինութեան փայլը. նորա վրձինը է շատ հրապուրիչ, երբ արտայայտումէ մեղմ կրքերի քնքոյշ

1, 2, 3, Անգլիական մեծ բանաստեղծներ են

յուզմունքը, բայց միևնոյն վրձինը հսկայական է երևում, երբ արտայայտումէ հոգու կոպիտ ալէկոծութիւնը:

Սակայն և այդ մեծ մարդը, շատերի նման նոյնպէս ազատ չէ մի քանի վատ կրիտիկոսների կծու յանդիմանութիւններից: Նշանաւոր սոփիստոս Վօլտէրը ճգնեց հաստատելու թէ Նէկսպիրը էր մի շատ միջակ հեղինակ, թէ էր և շատ պակասութեանց տէր: Նա ասումէր. «Նէկսպիրը գրումէր աւանց կանոնի. նորա արդիւնքները խառնի խուռն են, և ողբերգութիւնները և կատաղերգութիւնները կամ ողբերգա-կատաղերկա-քնարա-հովուերգական Ֆարսեր առանց նախագծի, առանց կապերի տեսարանների մէջ, առանց միութեանց. անախորժելի խառնուրդ վսեմի և ստորինի, սրտաշարժի և ծիծաղականի, ճշմարիտ և սուտ սրամտութեանց, լուրջ և անիմաստ խօսակցութեանց: Նոքա լի են այնպիսի մտքերով, որ արժանի են մի իմաստունի, և միևնոյն ժամանակ այնպիսի ցնորքներով, որ արժանի են միայն ծաղրածուին. նոքա լի են այնպիսի պատկերներով, որ պատիւ կ'բերէր նոյն իսկ Հոմերոսին և այնպիսի տգեղ նկարն երով, որոնցից նոյն իսկ Սկարրօնը 1), կ'ամաչէր»:

Աւելորդ եմ համարում ժխտել այդ սարսափելի կարծիքները, որ ճգնումեն պակասեցնել Նէկսպիրի փառքը: Միայն կասեմ, թէ նոյն իսկ դոքա չ'կարողացան իրանց կամքի հակառակ չ'ասել թէ նա ունի շոտ և գերազանց մտքեր»: Մարդս ինքնասէր է. նա վտխնումէ գովել մի ուրիշին, որպէս զի, իրա կարծիքով, ինքը նորանով չ'ստորանայ: Վօլտէր իւր ողբերգութեանց լաւ տեղերով պարտական է Նէկսպիրին. բայց չ'նայելով դորան, նա համեմատեց նորան ծաղրածուի հետ և

1) Ֆրանսիական VIII դարու մատենագիր.

Սկարրօնից աւելի ստոր դասեց: Այս բոլորից շատ բան կարելի էր դուրս բերել, որ կ'վերաւորէր նորա յիշատակը. բայց ես զսպումեմ ինձ, յիշելով որ այդ մարդը այլ ևս կենդանի չէ:

«Թէ Նէկսպիրը չէ պահպանել թատրոնական կանոնները, ճշմարիտ է: Սորա ճշմարիտ պատճառը, իմ կարծիքով, նորա վառվառն երեւակայութիւնն էր, որ չէր կարող հնազանդուել ոչ մի սահմանադրութեան: Նորա հոգին սլանումէր ինչպէս մի արծիւ և չէր կարող նա չափել իւր սլացումը այն չափով, որով չափումեն իւրեանց թռոյցքը ճ'նձողակները»:

Չկամեցաւ նա պահպանել, եթէ կարելի է այսպէս ասել միութիւնները 1) որոնց մեր այժմեան դրամատիկական բանաստեղծները այնպէս խիստ կ'պշտումեն. չ'կամեցաւ նա շղթայել նեղ սահմաններով իւր երեւակայութիւնը. նա նայումէր միայն բնութեան, առանց ուրիշ բաների վերայ ուշադրութիւն դարձնելու: Նորան յայտնի էր, որ մարդկային միտքը կարող է թռչել արեւմուտքից արեւելք, մոլորական աշխարհքի ծայրիցը մինչև Անգլիայի սահմանները: Նորա հանձարը, բնութեան հանձարի նման, գրկումէր մի հաեացքով և արեգակը և ատոմները, հաւասար ճարտարութեամբ նկարագրումէր նա և հերոսին և ծաղրածուին, խելօքին և անմիտին, Բյոււտոսին և կոշկակարին: Նորա դրամաները, բնութեան անչափելի թատրոնի նման լի են բազմատեսակութեամբ. իսկ բոլորը միասին կազմում են մի ամբողջ, որ չէ պահանջում ոչ մի փոփոխութիւն ներկայ թատերական մատենագիրներից»: (Յառաջարան Յուլիօս Կեսար ողբերգութեան. Վիլեամ Նէկսպիրի. Մ. 1787)

1) Այսինքն միութիւն տեղի, միութիւն ժամանակի և միութիւն գործողութեան: Այս երեք միութեանց պակասելը պահանջումէր կեղծ դասականութեան ուղղութեամբ գրուած ողբերգութիւնները:

Տէկսպիրը շատ ուշ արժանացաւ արսպիսի փառքի: XVIII դարում զեռ ևս ինաստակութիւններ էին անում հանձարեղ ողբերգակի մեծութեան վերայ այնպիսի նշանաւոր մարդիկ ինչպէս էին Վօլտեր և Ֆրիդերիկոս Մեծը: XVIII դարում երբ Լէտուրնէրը հրատարակեց Տէկսպիրի ողբերգութեանց իւր թարգմանութիւնը Ֆրանսիական լեզուով՝ Վօլտերը գրեց, «կարգացել էք դուք նորա զգուելի, անիմաստ գրուածները: Արիւնը եռ է գալիս իմ ուժից ընկած ջղերի մէջ, երբ խօսուեմ նորա վերայ: Բոլոր դժբաղդութեանց և խայտառակութեանց վերջ տալու համար, ամենից առաջ ես սկսեցի խօսել Տէկսպիրի վերայ . . . . Առաջին անգամ ես ցոյց տուի Ֆրանսիացիներին մի քանի աղանանդներ, որոնց գտել էի նորա աղբի դէզը մէջ: Տէկսպիրը է բարբարոս միմս, հարբեցողը: (Московскій Телеграфъ 1831, г. 38 ст-р 127)

Ֆրիդերիկոս Մեծը, որ կրթուած էր Ֆրանսիական ուղղութեամբ, այսպէս է խօսում Տէկսպիրի վերայ. «Դուք կ'տեսնէք Գերմանիայում թէ քնչպէս բեմի վերայ ներկայացնում են Տէկսպիրի մեր լեզուով թարգմանուած, զգուելի (abominables) դրամաները և քնչպէս ողջ հասարակութիւնը բաւականութիւնից թուլանում է լսելով այդ անվայելուչ ֆարսերը՝ որ արժանի են Կանադեան վայրենիներին»: (Библи. д. Чт. 1857 г. № 4 ст-р. 189)

Առաջին մարզը, որ պատճաշ կերպով գնահատեց Տէկսպիրի հանձարը, էր գերմանացի նշանաւոր մատենախօս Լէոֆիֆը: Հերբէրը իւր ինքնուրոյն, հասուն խելքով ցոյց տուեց, որ Տէկսպիրը դրամատիկական հանձար է: Նորանից յետոյ Վի-

յանը 1) Էլէնէուրգ 2) և Նէգէլ 3) իւրեանց թարգմանութեամբ Տէկսպիրի դրամաների՝ հաստատեցին վճռողապէս Անգլիացի բանաստեղծի մեծութիւնը: Անգլիացի մատենագիրների մէջ որոնք բացատրել են Տէկսպիրի գրուածները, նշանաւոր են, Պալլէր, Կոլրիջ, Հալլամ և րիկի Ջէմսոն:

**Թարգմանութիւն Ֆիլոնովի խրիստոմատայի III հատորից. Դրամատիկական բանաստեղծութիւն:**

Ս. Ս.



155

1) Վիւանդ—գերմ. բանաստեղծ. ծնու. 1733. մուտ. 1823 թ. Շելլերի, Գեթէի և Հերդէրի բարեկամներ: Յայտնի է իւր ասպետական ժամանակի սերովը («Օբէրթոն») համարվում է նորա ընտիր քերթուածը ասպետական կեանքից:

2) Էլէնէուրգ. գերմ. մատենախօս. 1733—1820 թ:

3) Նէգէլ—Օդեսոս—Վիլհէլմ: Գերմ. մատենագիր 1767—1845 թ. Գրել է ընդհանուր դրականութեան պատմութիւնը և հրատարակել է Տէկսպիրի հեղինակութեանց իւր թարգմանութիւնը 9 հատորով:

համեմատանքայն քանակով (8 1742 1 (8 1742 1 (1 700  
դրամով) արարողի միջոցառումը միջմեծադր փոխարին  
զեմ փոխարինման վերաբերյալ: զեմ փոխարինման վերաբերյալ  
մի քանակով, զգանալով մի քանակով մի քանակով զգուշ  
մի քանակով, զգանալով մի քանակով մի քանակով զգուշ

# ՕՏԷԼԼՕ

Վ Ե Ն Ե Տ Կ Ի Մ Ա Ի Ր.

ժրամանուկով զիսկով զիսկով զիսկով զիսկով զիսկով  
քանակով մարտիկանակով զիսկով զիսկով III

## Յ ա ո ա Ջ ա բ ա ն:

Շէկուպիրի բնական գրուածներէն ոչ մէկը այնքան հակա-  
ձառութիւն չ'պատձառեց իւր ծագման ժամանակի մասին՝  
ինչպէս «Օտէլլօն»: Համարեա բոլոր մասնախօսները (կրտսիկոս)  
վերաբերում էին «Օտէլլօին» 1612 և 1614 թուին, երբ վեր-  
ջապէս Շէկուպիրի գրողածներն յայտնի հրատարակիչ Պէյն  
Կոլլէրը գտաւ Քովնան Էգերտօնի (որ յետոյ լորդ Էլսմէր կո-  
չուեցաւ) հաշիւներում թէ Նդիսարէթ թագուհու Հերթիւ-  
րում երեք օր մնացած ժամանակ 1602 թուին Օքստօսի Ե-ին  
վճարուած էր 10 ֆունտ ստերլինգ Բոքիջի խմբին «Օտէլլօի»  
ներկայացման համար: Են ինչպէս որ, աւելացնումէ Կոլլէրը,  
այդպիսի փառաւոր տաներին արվում էին միշտ շատ նշանաւոր  
կամ նոր գրամաներ՝ ուրեմն «Օտէլլօն» իհարկէ պէտքէ վերա-  
բերել 1602 թուին: «Օտէլլօն» նիւթը առնուած է Քիրալդ  
Յինտօյի իտալական «Hekatomithi» հաւաքածուից: Շէկու-  
պիրը նորա հետ ծանօթացաւ ոչ թէ ուղղակի բնագրից կամ  
Ֆրանսիական թարգմանութիւնից, ինչպէս կարծուէին առաջ,  
այլ Ուիտսօնի «Heptameron of civil discourses» գրքից: Հե-  
տաքրքիր է ծանօթանալ այդ վէպիկի (nouvelle) նոյն իսկ

220

բովանդակութեան հետ, որպէս զեւրոպացու թէ հիւքան է օգուս-  
թաղել Շէկուպիրը իւր ձեռքի տակ գտնուած Նիւթից: Յինտի-  
օյի հաւաքածուի մէջ այդ վէպը նոյն անունն է կրում (il  
Moro di Venezia) ինչ և Շէկուպիրի գրամանն Սկսվումէ այսպէս:

«Վ Ենեթիկում երբեմն ապրումէր մի քաջ Մար, որ իւր  
քաջասրտութեամբ և փորձառութեամբ պատերազմական զոր-  
ծերում, այնպէս համբաւ հանեց հասարակագետութեան մէջ,  
որ անհրաժեշտ եղաւ նորա համար: Պատահեցաւ որ մէկ շատ  
առաքինի և գեղեցիկ աղջիկ (Վիզլէմնայ) (sic) սիրահարու-  
եցաւ մաւրի վերայ գրաւուելով նորա յաղթութիւններից, իսկ  
մաւրը սիրեց նորան գրաւուելով նորա գեղեցիկութիւնից և ա-  
ռաքինութիւնից: Չ'նայելով զանազան արգելքների և ազգական-  
ների կողմից անհամաձայնութեան՝ Վիզլէմնան ամուսնացաւ  
նորա հետ: Քանի որ նորա ապրումէին Վենեթիկում, ամէն  
բան լաւ էր գնում, ուստի և շատ երջանիկ էին. բայց ահա  
ծերակոյտը մտածեց Մաւրին յանձնել Վիպրոսի զօրաց կառա-  
վարութիւնը: Այդ պատիւը նորա համար շատ ուրախալի կ'լի-  
ներ, եթէ Վիզլէմնայից բաժանուելու վեշտը իրան չ'տիրեց-  
ներ: Բայց Վիզլէմնան չ'կամեցաւ լսել բաժանման խօսքը և  
յայտնեց թէ աւելի պատրաստ է ուրախութեամբ ննթարկուել  
ամենայն վտանգների, զրկանքների և զոհոյութեանց, քան բա-  
ժանուել իւր սիրելի ամուսնուց: Մաւրի հետեորդների (СВИТА)  
մէջ գտնվումէր մի շատ գեղեցիկ և միևնոյն ժամանակ սար-  
սափելի շարահոգի պրսպորչիկ, որի նմանը հազիւ թէ գտնուէր  
աշխարհիս երեսին: Սակայն նա կարողանումէր իւր սրտի ցա-  
ծութիւնը ծածկել այնպիսի անիմաստ և շքեղ բառերով և  
ձեւերով, որ ամէն մարդ նորան կ'համարէր մի Հէկտոր կամ  
Աքիլլէս: Այդ չար մարդը իւր հետ տարաւ Վիպրոս և կնոջը,  
որին Վիզլէմնան շատ սիրում էր և օրուայ մեծ մասը նորա  
հետ էր անցնում: Բայց զորանից մաւրի մօտ գտնվումէր և մի

կապիտան, որին Ռիզդէմոնայի ամուսինը շատ յարգումէր և սիրում, շատ անգամ հրաւիրում էր իւր մօտ և պահումէր ճաշի. Ռիզդէմոնան կամայ ակամայ մտերմացաւ նորա հետ. իսկ մաւրը շատ ուրախանումէր տեսնելով նոցա բարեկամական յարաբերութիւնները:

Այն ինչ, չար պրապորչիկը մոռանալով իւր ամուսնական հաւատարմութեան պարտքը և մաւրի հետ ունեցած բարեկամական յարաբերութիւնները, սաստիկ սիրեց Ռիզդէմոնային և մտածումէր թէ ինչպէս կարողանայ բաւականութեամբ սպասել իր կողմից (sic): Բայց տեսնելով սր Ռիզդէմոնան բոլորովին առաքինի էր և հաւատարիմ ամուսնուն՝ չհամարձակուեցաւ յայտնել նորան իւր ցանկութիւնը, բացի դորանից և վախնումէր սարսափելի մաւրից: Ն գուր տեղը նա ամենայն հնարք գործ դրեց տեղեկացնելու Ռիզդէմոնային իւր զգացումը. նորա կողմից մի պատասխան, մի յոյս չերեկեցաւ: Այն ժամանակ նա կարծեց թէ Ռիզդէմոնայի անտարբերութեան պատճառը այն է, որ նա սիրումէ կապիտանին, ուստի և շուտով նորա անզուսպ սէրը փոխուեցաւ անզուսպ ատելութեան, և նա սկսեց մտածել գտնել մի միջոց, որով սպանի կապիտանին և ապա մաւրին, որպէս զի յետոյ ազատ կերպով իւր ուղածը անի: Այդ նպատակով նա վճռեց զըպարտել մաւրի առաջ Ռիզդէմոնային, իբր թէ սիրումէ կապիտանին: Բայց մաւրը այնպէս ջերմ կերպով սիրումէր իւր կնոջ, որ պրապորչիկը նորան հաւատացնելու համար սպասեց աւելի յարմար առիթի: Պատահեց մի անգամ որ կապիտանը զայրանալով մի դիշերապահի վերայ, բարձրացրեց նորա վերայ իւր սուրը և վերաւորեց. մաւրը իմանալով այդպիսի անզուշուութեան համար՝ իսկոյն հանեց նորան պաշտօնից: Բարի Ռիզդէմոնան խղճալով կապիտանին խնդրեց ամուսնուն որ ների և կրկին առաջուայ պաշտօնը տայ: Մաւրը մի անգամ ասաց պրապորչիկին թէ այնքան ոյժ չունի

ընդդիմանալու Ռիզդէմոնայի խնդիրքին և ստիպուած է կատարելու. իսկ պրապորչիկը, օգուտ քաղելով այդ հանգամանքից՝ ասաց. «երևումէ որ Ռիզդէմոնան դորա համար իւր պատճառները ունի» — «Ի՞նչ պատճառներ» հարցրեց նորան մաւրը: — «Նա չեմ կամենում ձեզ միմեանցից զցել» պատասխանեց պրապորչիկը, «բայց պէտքէ դուք ինքներդ բաց անէք ձեր աչքերը և տեսնէք ամենայն բան»: Այս խօսքերը իսկոյն կասկած ձգեցին մաւրի սիրտը, որ աւելի ևս զօրեղացաւ, երբ Ռիզդէմոնան աւելի և աւելի սկսեց խնդրել կապիտանի մասին, յիշելով նորա երկարամեայ ծառայութիւնները, բարեկամութիւնը և մինչև անգամ պատահմամբ ասաց. «Նա մի այնպիսի ծանր յանցանք չէ գործած, բայց դուք, մաւրներդ, այնպէս տաքարիւն և բորբոքուող էք, որ ամենայն մի շնչին բանի համար բարկանում և կամենում էք վրէժխնդիր լինել»:

Մաւրը սաստիկ վրդովված՝ դարձաւ պրապորչիկին խորհուրդ հարցնելու և նորանից պահանջեց որ իւր առաջուայ մութ դիտողութիւնները բաց կերպով յայտնէ: Նա առաջ ձևացրեց թէ չէ կամենում վերաւորել մաւրին, բայց յետոյ իբր կարեկցելով ասաց. «Ռիզդէմոնան նորա համար է այդպէս արտում կապիտանին պաշտօնից ձգելու մասին, որովհետև միշտ բաւականութիւն էր զգում նորա գեղեցիկ դէմքը տեսնելով, այն ինչ ձեր սև գոյնը դուր չէ գալիս նորան»: Մաւրը այս խօսքերից վերաւորված՝ բարկութեամբ գոչեց. «Այդ լեզուդ, որ համարձակվում է այդպիսի արատներ կայցնել կնոջ», ասկիցք կ'հանեմ»:

Այն ժամանակ պրապորչիկը կրկին իրան տխուր ձևացնելով ասաց. «Եթէ իմանայի թէ դուք կասկածելու էիք իմ հաւատարմութեանս մասին, բոլորովին կ'լռէի և սառնասրտութեամբ հետուից կ'դիտէի թէ ինչպէս կապիտանը և կինդ խարումն ձեզ . . . և այլն»: Մաւրը պատասխանեց նորան

բարկութեամբ. «Ի՞նչ դու քո մեղադրանքները չ'հաստատես ամենաշոշափելի փաստերով, այն ժամանակ աւելի լաւ կ'լինէր որ համբ ծնուէիր»: Եւ պրապորչիկը խոստացաւ շատ շուտով հաստատել իւր խօսքերը դրական փաստերով:

Այդ բոլորէից սկսած դժբաղդ մաւրը վերաւորուած նախանձի ամենասուր նետով, սկսեց սպասել այն օրին, երբ չար պրապորչիկը պէտքէ հաստատէր իւր զրպարտութիւնները նոյն պիսի խորամանկ նոր զրպարտութիւններով:

Երկար ժամանակ մտածումէր պրապորչիկը և վերջապէս ահա թէ ինչ հնարեց: Նա նկատեց որ Իլզդէմնան իւր հետ ման էր ածում մի շատ ճարտարութեամբ նկարուած թաշկինակ, որ ընծայել էր նորան մաւրը և որին Իլզդէմնան նոյնքան սիրումէր, որքան և ամուսինը:

Մենք արդէն վերև յիշեցինք թէ Իլզդէմնան շատ սիրումէր պրապորչիկի կնոջ և շատ անգամ նորան պահումէր իւր մօտ կամ ինքը գնումէր նորա մօտ: Ահա մի այդպիսի այցելութեան ժամանակ, երբ Իլզդէմնան պրապորչիկի փոքրիկ աղջկան զրկած խօսեցնումէր, խաբեբան ճարպիկութեամբ հանեց նորա գրպանից նկարներով զարդարած թաշկինակը և միւս օրը ծածուկ գցեց կապիտանի սենեակը: Իլզդէմնան իսկոյն չ'նկատեց թաշկինակի կորուստը, բայց երբ իմացաւ, շատ վախեցաւ և մեծ վրդովմունքի մէջ սկսեց որոնել: Իսկ ինչ վերաբերումէ կապիտանին, նա գտնելով Իլզդէմնայի թաշկինակը, առանց կասկածելու թէ ինչպէս է վայր ընկել իւր սենեակում, վճռեց իսկոյն վերադարձնել:

Բայց սպասեց այնպիսի միջոցի, երբ, ինչպէս իրան յայտնի էր, մաւրը տանը չէր և այդ ժամանակ գնաց և բախեց մաւրի տան ետևի դուռը: Բաղդը կարծես խօսք էր կապել նենդ պրապորչիկի հետ դաւածանելու անմեղ Իլզդէմնային, որովհետև մաւրը եկաւ տուն հէնց այն ժամանակ երբ կապիտանը

դեռ բախումէր դուռը: «Ով է այդ գոչեց նա բարկութեամբ: Երբ կապիտանը լսեց նորա ձայնը, վախեցաւ, իսկոյն հեռացաւ և սկսաւ փախչել. այնպէս որ երբ մաւրը բացարաւ դռները փողոցում էլ ոչ ոք չ'կար: Կատաղած վերադարձաւ նա տուն և հարցրեց կնոջը թէ ո՞վ էր բախում դուռը: Նա պատասխանեց, «չ'գիտեմ». — «Իսկ ինձ թուումէ թէ կապիտանն էր» — «Չ'գիտեմ նա էր թէ ուրիշը» պատասխանեց անմեղ Իլզդէմնան և մաւրը հարկաւոր համարեց այս անգամ զսպել իւր կատաղութիւնը: Բայց նա չէր կարող այդ բանի մասին չ'տեսլ պրապորչիկին, որը իւր կողմից խոստացաւ տեղեկանալ կապիտանից: Եւ արդարև նա միանգամ պատահելով կապիտանին սկսեց խօսել հետը (իսկ այդ միջոցին Օտէլ լոն Եագօի խորհուրդով գաղտնի դիտումէր մի կողմից) ամենասովորական առարկաների վերայ, բայց ձեռները այնպէս շարժում էր, ծիծաղեց այնպէս թուլանում, որ կարծես թէ խօսակցութիւնը մի շատ զարհուրելի և ծիծաղելի բանի վերայ էր: Սակայն Իլզդէմնայի մասին մի խօսք անգամ չ'եղաւ նոցա մէջ: Երբ կապիտանը հեռացաւ, մաւրը շտապով մօտեցաւ պրապորչիկին, որը երկար այս այն կողմ ձգձգելուց յետոյ ասաց. «Նա ամէն բան ինձ բաց ասաց, երևում է որ ձեր կինը ամենայն անգամ, երբ դուք բացակայ էիք, նորա հետ տեսութիւն էր նշանակած: Դեռ այդ բաւական չէ, նա նորան ընծայել է այն գեղեցիկ թաշկինակը, որ ստացել էր ձեզանից իւր հարսնացու ժամանակ»: Այս խօսակցութիւնից յետոյ վէպիկը դրամայից ուրիշ ընթացքով է գնում: Մաւրը ցանկանալով համոզուել պրապորչիկի խօսքերի ճշմարտութեան մէջ հարցնում է իւր կնոջը թաշկինակի մասին: Նա, որ ոչ մի բանում մեղաւոր չէր, վրդովումէ և չէ իմանում ինչ պատասխանի: Խորհուրդ է առնում պրապորչիկի կնոջ հետ թէ ինչպէս մեղմանցնի իւր ամուսնու բարկութիւնը. բայց նա մասնակից լինելով իւր ամուսնուն

Իրզդէմնայի զրպարտութեանց մէջ, նորան ոչ մի օգտակար  
 և զրական խորհուրդ չի ապրիս: Յետոյ վէպիկի մէջ պատմվումէ  
 թէ ինչպէս պրապորչիկը աւելի ևս զրգուումէ մաւրի նախանձր,  
 հեռուից ցոյց տալով Իրզդէմնայի թաշկինակը մի կնոջ (կար  
 անող) ձեռքին: Մաւրը տեսնելով այդ բանը՝ արդէն մտա-  
 ծումէ սպանել կապիտանին և այդ սպանութիւնը կատարելու  
 համար կաշառումէ պրապորչիկին: Կապիտանի սպանման փորձը  
 կատարվումէ այնպէս ինչպէս ցոյց է տուած դրամայում: պրա-  
 պորչիկը կոտորումէ կապիտանի ոտը և այլ ևս յոյժ չունենա-  
 լով թէ կառողջանայ յայանումէ մաւրին: Իրզդէմնան սրտանց  
 խղճումէ կապիտանին և անգութ պրապորչիկը օգուտ քաղելով  
 այդ դէպքից ասումէ մաւրին. «Չարմանալի չէ, որ նա այնպէս  
 ցաւումէ նորա վերայ, չէ՞ որ կապիտանը նորա հոգին էր:—  
 «Նորա հոգին, զայրացած գոչումէ մաւրը. 0՛ ես կ'հանեմ  
 նորանից այդ հոգին»: Եւ իսկոյն դորանից յետոյ մաւրը խոր-  
 հուրդ է անում պրապորչիկի հետ թէ ի՞նչպէս սպանի Իրզ-  
 դէմնային: Պրապորչիկը նորան առաջարկումէ մի բարբարոս-  
 կան միջոց. լքցնել մի պարկ աւազ և ծեծել նորան այդ պար-  
 կով մինչև որ մեռնի, որպէս զի մարմնի վերայ բռնութեամբ  
 սպանուած լինելու հետք չ'երևայ. իսկ յետոյ խորտակել դիա-  
 կի վերայ ննջարանի առաստաղը և այդ դէպքը համարել նո-  
 րա մահուան պատճառ: Մտածածը—կատարուած էր: Բայց  
 հազիւ թէ թաղեցին անմեղ Իրզդէմնային, որին ցա-  
 ւում և յիշումէին ամէնքը արտասուելով, երբ խիղճը  
 սկսեց անտանելի կերպով տանջել մաւրին և նա սաստիկ բար-  
 կանալով անաստուած պրապորչիկի վերայ, անպատճառ կ'սպա-  
 նէր, եթէ չ'վախենար վենետիկի կառավարութեան առաջ պատաս-  
 խանատութիւնից: Այնուամենայնիւ նա հեռացրեց նորան ծա-  
 օսյութիւնից: Պրապորչիկը վրէժխնդրութեան ոգով վառուած,  
 մեղադրեց մաւրին վենետիկի ծերակոյտի առաջ կապիտանին

սպանելու համար արած փորձի (որ արդէն նոցա ցանկութեան  
 հակառակ առողջացել էր և ման էր գալիս փայտէ շինած  
 ոտով) և Իրզդէմնայի սպանման մասին, հաստատելով թէ  
 մաւրը յորդորեց իրան ևս մասնակցելու այն չարագործութեանց  
 մէջ, բայց թէ ինքը մերժել է և այդ պատճառով ընկել է  
 նորա աչքից: Մերակոյտը հրամայեց բռնել մաւրին Կիպրոսում  
 և ենթարկել տանջանքի. բայց և ամենախիստ տանջանքները  
 անգամ չ'կարողացան խոստովանել տալ նորան իւր յանցանքները:  
 Այն ժամանակ նորան երկար բանտարկելուց յետոյ վճռեցին  
 յաւիտեանս քստորել հայրենիքից և այդ քստորանքի մէջ սպա-  
 նուեցաւ Իրզդէմնայի ազգականներից: Իսկ ինչ վերաբերումէ  
 պրապորչիկին, նորան կալանաւորեցին մի քանի խաբբաների  
 հետ մի չարագործութեան մասնակցելու համար, ենթար-  
 կեցին տանջանքների և այնպէս խիստ չարչարեցին, որ  
 շուտով մեռաւ: «Այսպէս ահա Աստուած» աւելացնումէ վէպիկի  
 հեղինակը, «վրէժխնդիր եղաւ Իրզդէմնայի անմեղութեան  
 մասին: Իսկ այս բոլոր պատմեց նոյն իսկ պրապորչիկի կինը.  
 ամուսնու մահուանից մի քանի օր յետոյ»:

Ահա այն ցանցի նման աղճատեալ նիւթը, որից Շէկս-  
 պիրը ստեղծեց իւր ամենաընտիր արդիւնքներից մէկը, որ մեծ  
 համակրութիւն, մեծ ուշադրութիւն զարթեցրեց: Բայց ի՞նչ-  
 պէս կարողացաւ վարուել այդ մեծ բանաստեղծը վէպիկի այդ-  
 պիսի հասարակ և կոպիտ նիւթի հետ, որ չէ ներկայացնում  
 ոչ մի իրական կեանքի պատկեր: Ի՞նչպէս կարողացաւ նա ստո-  
 րագրել, նուրբ կերպով գծագրել և այդպէս որոշ կերպով հան-  
 դէս բերել երեք հրաշալի ստեղծած բնաւորութիւններ: Զիրարդ  
 Յինտիօյի վէպիկի մէջ բնաւորութիւնները շատ թոյլ են. մեք  
 տեսնումնք պորուչիկի (Սագօ) մէջ—մի աներևակայելի չարա-  
 գործի: Իրզդէմնայի մէջ—մի բարի բայց անհաստատ բնա-  
 ւորութիւն ունեցող կնոջ անգոյն տիպ. նոյն իսկ մաւրը երե-

ուումէ մի շատ սովորական նախանձոտ մարդ:

Բոլոր այս սքանչելի փոփոխութիւնները արու—  
նախանձի զգացման այն հայեցողութեան կէտի վերայ հիմնուած,  
որ զարթեցաւ նորա մէջ կարգարով իտալական այդ վեպիկը,  
և ինչպէս որ այդ հայեցողութիւնը արտայայտուեցաւ գլխա-  
ւորապէս Օտէլլօի բնաւորութեան մէջ, ուստի և դրամայի բոլոր  
մնացած բովանդակութիւնը ենթարկուեցաւ նորա ազդե-  
ցութեան: Բոլոր միւս անձնաւորութիւնները տեղի տուին Օտէլ-  
լօին, կարծես աճելու արձակ ասպարէզ տալու համար այդ զօ-  
րեղ բնաւորութեան, որ իւր առաջ ունի կրքի անվերջանալի,  
այրող պաշարը: Զիրարը Յինտիօյի վէպիկի բարոյական իմաս-  
տը—իսկ վէպիկը առանց բարոյական իմաստի անօգուտ է—այս  
է երևում. մարդ չ'պէտքէ մեծ վտահաւթիւն և հաւատ  
ցոյց տայ մարդկանց, որովհետեւ նորանց մէջ կ'գտնուեն և  
այնպիսի չարագործներ, ինչպէս այդտեղ պրապորչիկը, որոնք շատ  
դժբաղ դութիւններ կարող են պատճառել: Բացի այդ գլխա-  
ւոր իմաստից, հեղինակը վէպիկի մի քանի տեղերում յայտ-  
նումէ իւր գործնական նկատողութիւնները, որ պարզ երևումէ  
թէ պատկանում են նորա անձնաւորութեան և ժամանակին:  
Նոցանից մի քանիսը շատ բնական են. այդպէս օրինակ Դէզ-  
դէմոնան պրապորչիկի կնոջ հետ խորհուրդ անելիս թէ ինչպէս  
մեղմացնի իւր զայրացած և նախանձոտ ամուսնու բարկու-  
թիւնը, ասումէ. «ես շատ եմ վախենում, որ կենդանի օրինակ  
չ'դառնամ աղջկանց համար, որպէս ղի նոքա իրանց ծնողաց  
կամքի հակառակ մարդու չ'գնան»:

Իսկ ինչ վերաբերում է Նէկսպիրի դրամային՝ նա ինչպէս  
և ամենայն մի վտեմ արդիւնք իհարկէ ոչ մի բարոյական կամ  
խրատական գաղափար չէ արտայայտում, այլ որոշ կերպով  
նկարագրում է նախանձից կրած տանջանքի բոլոր ծանրու-  
թիւնը, և նկարում է դորան այնպիսի գոյներով, որ ակամայից

մենք կարեկցում ենք նախանձոտ մարդուն, որ ենթարկուած  
է այդ տանջանքին, կարեկցում ենք մինչև անգամ և այն բո-  
պէին, երբ նա այն աստիճանի իրան մոռանում է, որ ստիպում  
է ուրիշներին վշտանալ: Հետևապէս խօսք չէ կարող լինել  
վէպիկի այդպիսի ազդեցութեան՝ Նէկսպիրի հանձարի վերայ,  
ինչպէս օրինակ Պլուտարքոսի կենսագրութեան ազդեցութեան՝  
«Վօրեօլանոսին» ստեղծելու ժամանակ: Հարցը միայն նորանուսն  
է, թէ Նէկսպիրը ի՞նչ չափով է օգուտ քաղել վէպիկից իւր  
նպատակի համար, ի՞նչպէս է նա կարողացել փոփոխել այն  
թոյլ բնաւորութիւնները, որ պատահում ենք վէպիկի մէջ և  
ի՞նչպիսի նորութիւններ է հարկաւոր համարել մտցնել իւր  
դրամայի մէջ:

Այդ տեսակէտից եթէ քննելու լինենք «Օտէլլօն» կ'տես-  
նենք որ Նէկսպիրը ամբողջապէս մտցրել է իւր դրամայի մէջ  
վէպիկի բոլոր կարևոր դէպքերը և երբէք զոռ չէ տուել իւր  
երևակայութեան նոր բան ստեղծելու: Բայց աւելի մեծ ուշադ-  
րութիւն է դարձրել այն տեսարանների վերայ, որոնց մէջ  
գործում է Օտէլլօն—դրամայի այդ գլխաւոր հերոսը—և հերոսի  
յարաբերութեանց վերայ շրջապատած անձնաւորութեանց հետ:  
Նէկսպիրի արծուի աչքերից ամենից առաջ չ'ծածկուեցաւ  
Օտէլլօի մօտ ներկայացնել մեծ հակառակ անձեր. և երևում  
են Նազօն ու Դէզդէմոնան, որոնք նոյնքան հակառակ են մի-  
մեանց, որքան որ իւրաքանչեւը նոցանից իւր կողմից հակա-  
ռակ է Օտէլլօին: Սակայն Նազօի յարաբերութիւնը Օտէլլօի  
հետ բոլորովին այնպէս չէ, ինչպէս վէպիկի մէջ պրապորչիկի  
և մուրի յարաբերութիւնները: Այնտեղ պրապորչիկը ատում  
է Դէզդէմոնային, որովհետեւ չ'կարողացաւ նորան իւր նպատա-  
կին ծառայեցնել, ուստի և այդ ասեղութիւնից դրդուած հնա-  
րում է ամենայն միջոցներ նորանից վրէժը առնելու համար:  
Մաւրի սիրտը կասկած չ'զել և դորանով կորցնել Դէզգէմոնային—

տհա այն սատանայական միջոցը, որ մտածեց եսասէր և սիրոյ ու ատելութեան մէջ հնարագէտ վննետկեցին: Պէտք է բոլորովին արդարութիւն տալ վէպիկին, որ այդպիսի յարաբերութիւն պրապոզիկի Նէզդէմնայի հետ շատ բնական է և մինչև անգամ ամենին աւելի բնական կ'թուի այդ՝ քան ատելութեան այն պատճառները, որ ցոյց է տալիս Նագօն Օտէլլօի գէմ: Բայց բանը նորանումն է, որ Նէկսպիրը Օտէլլօին բարձր բնաւորութիւն տալով լուրջեամբ անցաւ Նագօի կրքի մասին Նէզդէմնայի վերայ (որովհետև եթէ այդպէս չ'անէր Օտէլլօի անձնաւորութիւնը կ'թուլանար) և շատ ճարտարութեամբ Նագօի ատելութիւնը ոչ թէ Նէզդէմնայի վերայ ուղղեց, այլ Օտէլլօի: Բացի դորանից Նագօի բնաւորութեան հիմնական կէտերը այնպիսի ճշտութեամբ և որոշ կերպով է արտայայտած Նէկսպիրի մէջ, որ էլ հարկաւորութիւն չէ երևում նորա մաւրի գէմ ունեցած ատելութեան պատճառի վերայ ուշադրութիւն դարձնել: Նագօն իւր բնաւորութեամբ բնական օրէնքների համեմատ պէտք է ասէր Օտէլլօին, ինչպէս ամենայն չարութիւն միշտ ատում է ամենայն բարութեան և ճշմարտութեան: Նագօն — այն աստիճանի եսասէր և փառասէր բնաւորութեան տէր մարդէ, որ ամենայն նախանձով և ատելութեամբ նայում է ուրիշների յաջողութեան, բաղդաւորութեան և խաղաղութեան վերայ. այդ կատաղի նախանձին բաւականութիւն տալու համար նա գործում է ամենայն չարագործութիւն. խաբերայութեամբ փող կորզել ուրիշներից, ձեռք ձգել զրպարտութեամբ և ցածութեամբ պատիւ, յարգանք՝ շղթայել մէկին իւր նննք ցանցերով — որպէս զի յետոյ զուարճանայ ուրիշների վշտերով՝ և մի խաղաղ կեանք դժոխայինի դարձնել — այս բոլորը պարաստէ կատարել Նագօն, որովհետև սաստիկ կերպով արհամարհում է բոլոր իւր շրջապատած անձնաւորութեանց և սիրում է միայն իրան: Այդ արհամարհանքի պատճառը հիմնում է նորա վե-

րայ, թէ բոլոր մարդիկ, իւր կարծիքով, յիմար են իրանից և իւր ամէն մի գործի մէջ տեսնում է կամ սեփհական խելք կամ մարդկային յիմարութեանց մեծ պաշար: Այդպիսի սխալ եզրակացութիւն իւր գերեզանցութեան մասին, Նագօն անկասկած հանում է այն յարգանքից, որ զգում է դէպի Եսթրէլային խելք, և այլ ևս ուշադրութիւն չէ դարձնում մարդկային բնութեան միւս յատկութիւնների վերայ, ոչ մի ուշադրութիւն չէ դարձնում մարդու բարոյական կողմի վերայ, որովհետև նորա կարծիքով բարոյական կողմը է յիմարութիւն: Ուրեմն շատ բնական է, որ Նագօն ոչ ճիշտ հաւատ չ'ընծայելով և հաւանելով, պէտք է ծաղրի նորանց, որոնք միամտութեամբ իւր գործիքն են դառնում. բայց որքան էլ ծաղրում է նա ուրիշներին, որքան և խորին կերպով դարմանում է իւր խելքի գերեզանցութեան վերայ, նորան այնուամենայնիւ չէ յաջողվում ոչ մի բանի վերայ հաստատ մնալ. նորան, չնայելով բոլոր աշխատութեան, չէ յաջողվում, իւր համոզումի մէջ պինդ և բարձր մնալ. այնպէս որ նորա սիրտը կրծող նախանձի որդը մի րոպէ հանգստութիւն չէ տալիս և դրդում է նոր խուզարկութեանց, նոր խաբերայութեանց և յանցանաց:

Շատ ճիշտ կերպով զգաց Նէկսպիրը, թէ Նագօի չար հոգին պէտք է բազմակողմանի երևայ: Նորա համար նորա անձնաւորութեան գէմ անհեռատես և թեթևամիտ Ռօդոլֆօին է դնում, որ այնքան կուրացած է իւր լոկ անասնական կրքին բաւականութիւն տալու ձգտումից, որ ընդունակ է լինել խաղալիք բոլորի՝ ով կամենար օգնել նորան իւր նպատակին հասցնելու համար: Բացի դորանից Նագօի կինը, մաւրի կնոջ այն նենգամիտ բարեկամուհին չէ, որ հասկանում է մարդու նախազիծները թէև բոլորովին չէ հաւանում, ինչպէս նկարագրուած է վէպիկի մէջ. ընդհակառակն էմիլեան՝ դրամայի մէջ — անարգուած, միամիտ և անկեղծ արարած է, որ նոյնքան մը-

աւար կերպով զօրեղ է, որքան բարոյական. նա այնպէս հաստատ կերպով համոզուած է Նագօի գերեզանցութեան իւր վերայ, որ մինչև անգամ չէ կարող քննել այն վարմունքները, որոնցով նորտ ամուսինը համոզում է իրան: Նա միշտ պատրաստ է ամէն բան անել իւր ամուսնուն սիրելի լինելու համար: Երբորդ անձը, որի հետ ամուր կերպով կապուած է Նագօն—բարեօրտ, միամիտ և անկեղծ Կասսիօն է: Նորա մէջ տեսնում ենք իւր վիճակից շատ գոհ մարդու, որ իւր գեղեցկութեամբ և ճարտարութեամբ միշտ գրաւում է կանանց և այնքան միամիտ է, որ բոլորովին չէ կասկածում Նագօի նենդ մտադրութեանց մասին: Զարմանալի չէ, որ այդպիսի մարդկանց մէջ Նագօն պէտք է զգայ իւր գերեզանցութիւնը և մեծ ատելութեամբ նայի երջանիկ, գոհ և իւրեանց վիճակով ու բարոյապէս բարձր Բէզդէմնանյի և Օտէլլօի վերայ:

Բէզդէմնան՝ արդարև այն վեհ—գեղեցիկ կանանց մէկն է, որոնք իւրեանց հայեցողութեամբ կեանքի և կանացի պարտաւորութեանց վերայ, չեն յենվում ոչ մի շատ կամ քիչ սահմանափակող բարոյական օրէնքներին, այլ անդադար ամէն քայլափոխում ցոյց են տալիս խորին հասկացողութիւն կանանց կեանքի նշանակութեան վերայ: Այդպիսի կանայք, ինչպէս Բէզդէմնան, երբեք չափից չեն անցնում ոչ թէ երկիւղեց, այլ որ իրանց բնաւորութիւնը այնպէս է. նոքա իւրեանց անկեղծ, մաքուր բնաւորութեամբ չեն հաւատում աշխարհային վատ գործերի և խաբեբայութեանց: Ահա թէ ինչու Բէզդէմնան չէ վախենում փախչելու ծնողական տնից Օտէլլօի մօտ, որին նա ընտրեց իրան ամուսին, բայց միւլենոյն ժամանակ չէ ուղ աշխարհը ստիճան նա մինչև անգամ մի մաղաչափ չէր շեղուիլ իւր պարտաւորութիւններից: Բէզդէմնան հազիւ թէ ընդունակ է մոլեգին սիրելու. բայց և ոչ մէկ կին նորա նման չէ կարող սերտ կերպով կապել իւր բաղդը մի մարդու բաղդի

հետ, որի հետ նա կապել է, ոչ թէ այն պատճառով, որ գրաւուեցաւ նորա արտաքին տեսքից, ճարպիկ ու դրաւիչ վարմունքից, այլ նորա արժանաւորութեանց վերայ հիանալով և բացի դորանից անկեղծ կարեկցութիւնից այն մարդու վերայ որից ամէնքը աւելի վախենում էին քան յարգում, աւելի ստիպուած համբերում էին քան սիրում: Բէզդէմնան պարտաւորութեան ձայնին այնպէս հնազանդ է, որ բոլորովին անընդունակ է քննելու թէ ինչ պատճառներ ունի Օտէլլօն նախանձուելու, ուստի և որևիցէ զգուշութիւն չէ գործ զնում նորա անզսպելի, կործանիչ կրքի կամ Նագօի խարդախութեանց, ինտրիգների և նուրբ հաշիւների դէմ: Համեստ, խաղաղ, ամենայն յարաբերութեանց անտարբեր, այդ վեշտը, տանջանքը իւր սրտում իբրև մի գանձ պահող Բէզդէմնան լինում է զոհ և իւր համեստութեան, անարատութեան և արդարութեան. հաւատարիմ մնալով մինչև վերջին րոպէն իւր սիրոյ և ամուսնուն:

Բայց ինչպէս պատահեցաւ որ այդ մարդը—Օտէլլօն այն աստիճանին հասաւ, որ զօհեց այնպիսի գեղեցիկ, առաքինի արարածի: Զինուոր հողով և մարմնով մեծացած պատերազմական դաշտերում, մշտական վրտանգների և շփոթութեանց մէջ, շատ վաղ զօրացրեց իւր սրտում փառքի, պատի ձգտումը և այդ պատուի համար պատրաստէ ամենայն նեղութիւն կրել, որովհետև դա նորա համար է միակ արժանաւորութիւնը, միակ երջանկութիւնը աշխարհիս երեսին: Առանձնացած բաժանուած լինելով մարդկանցից և ծագմամբ ու իւր տիպին յատուկ յատկութեամբ՝ նա չէ յարգում նորանց, որովհետև նոքա չեն պահպանում իւրեանց պատիւը այն խստութեամբ՝ ինչպէս ինքը աշխատում է իւր պատուի համար: Բայց օտար մարդկանց մէջ առանձնութիւնը ճնշում է նորան, և նա որոնում է մի մարդու, որ հասկանար ու գնահատէր իւր արժանաւորութիւնը: Նա մինչև անգամ աշխատում է բարե-

կամանալ նոցա հետ, որոնք աւելի մօտ են իրան, ուրեմն և  
 աւելի տեղեակ իւր բնաւորութեան: Եւ ահա բաղդը ուղար-  
 կում է մաւրին աներեւակայելի բաղդաւորութիւն: Աննետկի  
 առաջին գեղեցիկ և խելօք աղջիկը յաղթելով բոլոր արգելք-  
 ներին, ընտրում է նորան իւր ամուսին և պարգևում է այն-  
 պիսի երջանիկ օրեր, որոնց ազդեցութիւնից Օտէլլօն փայլում է  
 նոր կեանքով: Աստուծոյ ստեղծած աշխարհը նորան այնպէս  
 պայծառ և գեղեցիկ է երևում, որ նա պատրաստ է սրտանց  
 գրկել ամենայն մարդու: Անոջ սիրոյ հետ միաւորվում է և այն  
 իդէալ պատուի՝ որ անբաժանելի մնաց նորա հետ այնքան  
 ծանր և վտանգներով լի տարիներ ընթացքում, որին անարատ  
 և հեռու պահեց աշխարհային ցածութիւններից: Իւր կնոջ  
 սիրոյ ազդեցութիւնից, նա սկսում է սիրել և իրան շրջապա-  
 տողներին, խօսել, զուարճանալ նոցա հետ. նա վախենում է  
 մինչև անգամ, որ կնոջ վերայ ունեցած սէրը չ'թուլացնի իւր  
 անաչառ քննող բնաւորութիւնը. բայց մարդկանց վերաբեր-  
 մամբ կակղելով նա մնում է միևնոյն պատուին ձգտող մաւրը  
 հեռու մարդկային ամենայն չարութիւնից և նենգութիւնից:  
 Նա մինչև անգամ չէ կարող մտածել թէ մարդիկ մինչև որ  
 աստիճանի նենգ և չար կարող են լինել: Եւ հարեւային սրբի այդ  
 անգիտակցութեան մէջ գտնվում էր և նորա կորուստը: Նա պէտք է  
 չ'հասկանար կեղծաւոր խորամանկ Նագօին, նա պէտք է և  
 չ'գնահատէր Վէզզէմոնային: Նագօի դժոխային թակարդները  
 խորտակեցին այդ սէրը և ստիպեցին Օտէլլօին ուշադրութիւն  
 դարձնել զրպարտութեան վերայ, որ վիրաւորում էր իւր պա-  
 տիւրը, հետեւապէս և ստորեցնում իրան իւր աչքի առաջ, և  
 այդ էր պատճառը, որ նա բացատրութիւն չ'պահանջեց Վէզ-  
 զէմոնայից: Երկար և սարսափելի շփոթութիւններից յետոյ,  
 նա միշտ աշխատում էր համոզուելու և միշտ մտքովը անգամ  
 չէր համարձակվում անցկացնել վիրաւորելու այդպիսի կեխտոտ

մեղադրանքներով այն Վէզզէմոնային՝ որ իւր մէջ պարունա-  
 կում էր բոլորը, ինչ որ ստիպում էր նորան սիրել կեանքը:  
 Բայց թշուառականը չէր տեսնում այն նենգ ձեռքը, որ աւելի  
 և աւելի մոլորեցնում էր իրան անկանելի որոգայթներով: Դժ-  
 բաղդը չէր կարող կանգնել կամ յետ դառնալ, քանի որ նա-  
 խանձը այդ նենգ մարդու շնորհիւ աւելի և աւելի աճում էր  
 իւր մէջ: Բայց ի՞նչպէս վարուեցաւ նա. ի՞նչ վճռեց: Եւ այդ  
 վերջին բայց սոսկալի ներքին կռուի միջոցին, նա չ'ենթար-  
 կուեցաւ իւր այրող կրքի հոսանքին. նա կամեցաւ պատասաել  
 Կասսիօյի մարմինը, բայց միևնոյն ժամանակ չէր կարող կա-  
 տարել ազատ կերպով առանց արատաւորելու իւր պատիւը,  
 ուստի վճռեց սպանել գիշերով. կատաղութիւնը դրդեց սպանել  
 և Վէզզէմոնային, որի մէջ նա միայն խաբբայութիւն և նեն-  
 գութիւն էր տեսնում: Եւ նա սպանեց նորան ոչ թէ կրքից  
 կուրացած ժամանակ, առանց հաշիւ տալու իւր կատաղու-  
 թեան, այլ քննելով գործը զարմանալի սառնութեամբ: Եւ  
 այդ սպանութիւնը ոչ թէ նորա բնութեան սարրիքի ազ-  
 դելուց կատարած պէտք է համարել՝ այլ իրրեւ պատիժ այն  
 կնոջ համար, որ խլեց այն խեղճ, ամենից ձգուած մարդու  
 միակ գանձը—պատիւը. և այն էլ ինչպէս: Նա սպանում է Վէզ-  
 զէմոնային հաստատ համոզուած լինելով իւր արածի արդա-  
 րութեան վերայ, բայց և նորա վերջին շնչի հետ դադարում  
 է նա և ապրելուց, և մտածելուց, և զգալուց, ինչպէս առաջ.  
 Եւ ամենից աւելի ընկճուեցաւ նա, երբ ձակատաղիրը հարու-  
 ծեց նորան վերջին սոսկալի հարուածով: Վէզզէմոնան անմեղ  
 է երևում, նորա և իւր պատիւը չեն արատաւորուած և մաւ-  
 րը երևում է կոյր—անմիտ կործանող՝ իւր սեփհակսն բաղդին:  
 Բոլոր այն դատողութիւնները, վշտերը և համոզումները, որոնց  
 մաւրը այնպէս ուղիղ և հաստատ էր համարում և որոնք  
 նորա կարծիքով, ուրիշ ելք չունէին բայց եթէ Վէզզէմոնայի

մահը — այս բոլորը յանկարծ փոխվում է մի անմիտի անմիտ փեշիսի, նման այն մեծ շինութեան, որի հիմքը աւազե վերայ էր հաստատուած, որը կործանուեցաւ առաջին քամուց և ջախջախեց անմիտ շինողին իւր ծանրութեան տակ: Մի րոպէ առաջ այնպէս խիստ — ինչպէս իւր հայրենիքի թաթար քամին — մաւրը՝ զգայով իւր ոչնչութիւնը՝ Դէզդէմոնայի առաջ, որի պատկերը կրկին հանգիսանում է նորա առաջ իւր բոլոր փայլով և գեղեցկութեամբ՝ դառնում է թոյլ, մի անպաշտպան մանուկ: Նորան վերափոխում են, ստորացնում ինչպէս մի սովորական յանցաւորի, իսկ նա՝ որի առաջ երբեմն գողում էր թշնամիների անհուն բազմութիւնը, կորցնում է իրան և չգիտէ ինչ անէ, երբ մի մանուկ զինաթափ է անում նորան և նորա սեփհական սրով պահպանում է սենեակի դուռը որ չփախչի: Նա ոյժ չունի մինչև անգամ պատառելու այդ բոլոր թշուառութեանց հեղինակին — և միայն իւր վերայ կարողանում է ձեռք բարձրացնել: —

Հէրվնուսը վերջացնում է իւր քննութիւնը «Օտէլլօի» վերայ հետևեալ գեղեցիկ խօսքերով, որ բացայայտում է զըրամայի ողջ միտքը. «Նւ Օտէլլօն Դէզդէմոնայի հետ և Բօմէօն Յուլիայի հետ զոհվում են իւրեանց սեփհական բնաւորութեանց և ոչ բարոյական օրէնքի արդարութեամբ և ճշտիւ չկատարելուց: Ոչ թէ օրէնքի որ և էլ մի տառը, այլ բնութիւնը և մարդկանց յարաբերութիւնը, մեծ բանաստեղծի իմաստուն հայեցողութեամբ, են պատճառը ամենայն բարւոյ և չարի, ամենայն բաղաւորութեան և անբաղաւորութեան: Այդ աղբիւրից իսկ պէտք է հանել այն կանոնը, որի հիմքի վերայ հաստատուելով կարելի է քննել մարդկանց և նոցա յարաբերութիւնները: Նայելով մարդկանց յարաբերութեան և բնութեան, բոլոր լաւութիւնները շատ անգամ բղխում են վատութիւններից, ինչպէս վատութիւնները լաւութիւններից, ըստ

երևութին բաղաւորութիւնը լինում է աղբիւր դժբաղութեան, իսկ դժբաղութիւնը աղբիւր բաղաւորութեան: Շէկսպիրը կատարեալ կերպով զգաց այս և արտայայտեց իւր դրամայում, ուր ազնիւ Դէզդէմոնան իւր անմեղութեամբ և բարութեամբ յանցաւոր է երևում մարդկանց աչքում և այդ սուտ ու զժոխային զրպարտութեան տակ՝ մահուան վերջին րոպէում թողութեան մեծ խօսքն է արտասանում:

Վերջացնելով չի կարելի չ'նկատել, թէ շատերը, և նոյն իսկ մեծ դերասաններից, հիմնուելով Շէկսպիրի մասնացոյց արած մի քանի տեղերի վերայ, Օտէլլօին մաւրից նեզը զարձարին: Մի խօսք անգամ աւելորդ է Օտէլլօի դերի և բնաւորութեան այդպիսի մեծ սխալ հայեացքի վերայ. նա մանաւանդ, որ Շէկսպիրի հասկացողութեամբ Իսպանիայի նշանաւոր աշխարհակալները, որ իւրեանց գիտութեամբ մեծ ազդեցութիւն ունեցան եւրոպական լուսաւորութեան վերայ, ոչ մի կերպով չէին կարող խառնուել նեզրների հետ, որոնք այն ժամանակ դեռ ևս շատ քիչ յայտնի էին և մօօր անունով Շէկսպիրի ժամանակ հասկանում էին Աֆրիկայի հիւսիսային ափերի բոլոր բնակիչներին:

Թարգմանութիւն Նէկզրասովի և Պերբէլի հրատարակած Շէկսպիրի դրամաների լիակատար թարգմանութեան առաջին հատորից:

Ս. Սուլխանեանց:

մա կենցարցիկը զմերս ի ստանի զմեզ ի տարաբար սիկի անկ  
ցողութիւն շնորհակալութեամբ զմերս զմեզ ի տարաբար սիկի  
ձեռնարկը զմեզ  
համեմատելով ի զմեզ զմեզ զմեզ զմեզ զմեզ զմեզ զմեզ զմեզ զմեզ  
- զմեզ  
Նախկին անհամար անհամար անհամար անհամար անհամար անհամար  
անհամար անհամար անհամար անհամար անհամար անհամար անհամար

մերս ի ստանի զմեզ ի տարաբար սիկի անկ  
ցողութիւն շնորհակալութեամբ զմերս զմեզ ի տարաբար սիկի  
ձեռնարկը զմեզ  
համեմատելով ի զմեզ զմեզ զմեզ զմեզ զմեզ զմեզ զմեզ զմեզ զմեզ  
- զմեզ  
Նախկին անհամար անհամար անհամար անհամար անհամար անհամար  
անհամար անհամար անհամար անհամար անհամար անհամար անհամար

# ՕՏԷԼԼՕ, ՎԵՆԵՏԿԻ ՄԱԻՐ.

Վեներսի Գոթիս.  
Բուսուսի, ծերակոյտի անդամ, Դէզդէմոնայի Հայրը.  
Գրուսիւն, Բրաբանցիոյի եղբայրը.  
ԼիւիոՎիկոս, նորա ազգականը.  
ՕՏԷԼԼՕ, Մաւր.  
ԿԱՍՍԻՕ, նորա սպարապետը (лейтенантъ).  
ԵԱԳՕ, նորա պորուչիկը.  
ՌՕԴՌԻԳՕ, Վենետիկի ազնուական.  
ՄՕՆՏԱՆՕ, Կիպրոսի նախկին կառավարիչը.  
ԾԱՂԱՄՈՒ, Օտելլոյի ծառան.  
ՄՈՒՆԵՏԻԿ.  
ԴԷԶԴԷՄՈՆԱ, Բրաբանցիոյի աղջիկը և Օտելլոյի կինը.  
ԷՄԻԼԻԱ, Եագոյի կինը.  
ԲԻԱՆԿԱ, վենետիկցի տարփածու կին.  
Ծերակոյտի անդամներ, Ազնուականներ, Համբաւարներ, Երա-  
ժիշտներ, Նաւաստիներ, Մառաներ և ուրիշները.

## ԳՈՐԶՈՂ, ԵՆՉԻՆԻ.

ՎԵՆԵՏԿԻ ԳՈՒԲՍ.  
ԲՐԱԲԱՆՏԻՕ, ծերակոյտի անդամ, Դէզդէմոնայի Հայրը.  
ԳՐԱՑԻԱՆՕ, Բրաբանցիոյի եղբայրը.  
ԼԻՒԴՈՎԻԿՈՍ, նորա ազգականը.  
ՕՏԷԼԼՕ, Մաւր.  
ԿԱՍՍԻՕ, նորա սպարապետը (лейтенантъ).  
ԵԱԳՕ, նորա պորուչիկը.  
ՌՕԴՌԻԳՕ, Վենետիկի ազնուական.  
ՄՕՆՏԱՆՕ, Կիպրոսի նախկին կառավարիչը.  
ԾԱՂԱՄՈՒ, Օտելլոյի ծառան.  
ՄՈՒՆԵՏԻԿ.  
ԴԷԶԴԷՄՈՆԱ, Բրաբանցիոյի աղջիկը և Օտելլոյի կինը.  
ԷՄԻԼԻԱ, Եագոյի կինը.  
ԲԻԱՆԿԱ, վենետիկցի տարփածու կին.  
Ծերակոյտի անդամներ, Ազնուականներ, Համբաւարներ, Երա-  
ժիշտներ, Նաւաստիներ, Մառաներ և ուրիշները.

Գործողութիւնը առաջ կատարվում է Վենետիկում և ապա  
Կիպրոս կղզու վերայ:

ՄԱՍԻՆԻՆԻ ԲՈՇՊՈՒՄ  
ԱՌԱՋԻՆ ԵՐԵՐՈՒՆԻՆՈՒ

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆՈՒ

Վենետիկ. Փողոց:

Ներսէս Բարսեղ ԲՈՒՄԻՆԻՅՈՒՆ և ԵԱԳՈՆ.

ՌՕԳ. Ո՛չ, ի՛նչ էլ ասես, այնուամենայնիւ ինձ հաճելի չէ, որ դու յոյսդ դնելով իմ քսակիս —ինչպէս քո սեփհակա- նութեանդ վերայ՝ իմացար այդ բանը:

ԵԱԳՕ. Բայց դու չես ուզում լսել: Եթէ այդ բանը մրա- քովս անգամ անցած լինէր՝ այն ժամանակ —ատի՛ր ինձ:

ՌՕԳ. Ասացի՛ր որ ատուես նորան:

ԵԱԳՕ. Այո՛, կրկնում եմ միևնոյնը և այժմ: Վենետիկ երեք նշանաւոր մարդիկ շատ աշխատեցին ինձ նորա լէյտէ- նանսը շինել. իսկ թէ արժանի էի դորան՝ այդ ինքս զիտեմ: Այո՛, ես բոլորովին արժանի էի այդ պատուին, բայց նա մեծա- մտութեամբ, երկար ժամանակ խաղացնումէր ինձ դարդակ խօս- քերով, ժամանակներ որոշելով և վերջապէս բաց է ի բաց

մերժեց ասելով՝ թէ արդէն ընտրած է լէյտէնանտ: Եւ ո՞վ է այդ ընտրուածը. — մեծ թուաբան, մի որևիցէ Միքայէլ Կասսիօ Ֆլորէնտիացի, որ իրան նուիրած է շողքորթ պառաւանդներին, որ երբէք՝ պատերազմի դաշտում չէ կառավարած հեծալազօրների մի դնդի, որ այնքան ծանօթ է պատերազմական կանոններին, որքան մի մանող կին. մի տեսական վարդապետ, որի նմանները շատ շատ են մեր մէջ, շատախօս առանց գործնական տեղե- կութեանց —ասհանորա բոլոր պատերազմական քաջութիւնները: Եւ այդ մարդը ընտրուած է, այն ինչ ես, որ արդէն ինձ ցոյց եմ տուել Հռոդոսում, Կիպրոսում և ուրիշ տեղերում —ինչպէս քրիստոնեա, նոյնպէս հեթանոս երկիրներում —զրկուած եմ ամէնի վստահութիւնից և հալածուած. նա լէյտէնանտ, իսկ ես — թո՛ղ ազատէ Աստուած, նորին մաւրիտանութեան պո- րուչիկը:

ՌՕԳ. Երբեքում եմ որ աւելի նորա դահիճը լինել կ'ցան- կանայի:

ԵԱԳՕ. Ի՞նչ պէտքէ արած. այդպէս է ծառայութիւնը: Երկրորդը այլ ևս չէ ժառանգում առաջին —ինչպէս էր ա- ռաջ, այլ մէկի բարեխօսութեամբ կամ հաճութեամբ բարձր աստիճանների են հասցնում: Այժմ, դատի՛ր ինքդ, արդեօք կայ մի որևիցէ բան, որ կապէր ինձ Մաւրի հետ:

ՌՕԳ. Այդ դէպքում ես չէի ծառայել նորան:

ԵԱԳՕ. Օ՛, սպասի՛ր: Ես նորան ծառայում եմ ինձ ծա- ռայելու համար: Ամէն մարդ չի կարող տէր լինել, ինչպէս և ամէն տէր չի կարող հաւատարիմ ծառաներ ունենալ: Իհարկէ շատ յարգող, շողքորթող յիմարներ կան, որոնք մեծ յօ- ժարութեամբ իւրեանց համար հաց են վատակում, յանձն առնելով ամենայն տեսակ զգուելի ստրկութիւններ. գոքա նման են այն աւանակներին, որոնք քանի ոյժ ունեն աշխատելու՝ ապրուստ են գտնում, բայց երբ ծերանում են՝ արտաքսվում են

տանից: Այդպիսի պարզամիտ ապուշների գլուխները պէտք է ճշմունել: Բայց կան և այնպիսիները, որոնք զանազանվում են առաջիններից իրանց պատրաստակամութեան զանազան ձևեր և եղանակներ ցոյց տալով. դոքա ոչ մի բոպէ չեն մոռանում իրանց շահերը, դոքա ըստ երևութին յօժարութեամբ ծառայելով տէրերին, իւրեանց անձնական դործերն են կարգի գցում և կարգի բերելով ուրեմն իրանց են ծառայում: Ահա սորանում է բանը—այդ տեսակներին պատկանում եմ և ես: Այդ, սիրելիս, եթէ ես Մաւր լինէի, չէի կարող Նագօ լինել, այդ այնպէս ուղիղ է, ինչպէս որ դու Թողոփգօն ես: Նորան ծառայելով միայն ինձ եմ ծառայում: վկայ է երկինքը որ ես պարտաւորութիւններս սիրով կատարելով եմ նպատակներս եմ ծածկում, որովհետեւ եթէ արտաքին ձևերով յայտնեմ սրտիս իսկական ձգտումը—նշանակումէ յիմարանալ, առաջին քայլափոխում խտրուել: Ես այն չեմ— ինչ երևումեմ:

Ռ Օ Գ. Որքան բաղդաւոր կ'լինէր այդ անիծեալ Մաւրը եթէ և դորանում յաջողութիւն գտնի:

Ե Ա Գ Օ. Կանչի՛ր, զարթեցրո՛ւ հօրը, յայտնի՛ր այդ բոլոր անցքը, նա անպատճառ կ'որոնի և կ'թունաւորի նորա ուրախութիւնը. աղաղակ ձգի՛ր ողջ քաղաքում, շարժի՛ր տեղեց ազգականներին: Թո՛ղ այդ Մաւրը ապրի երջանիկ կլիմայի տակ—բայց դու տանջի՛ր նորան ճանձերով. թո՛ղ նա հասնի ամենամեծ բազաւորութեան—բայց դու շփոթի՛ր ամենայն կարելի անախորժութիւններով, որպէս զե ինչպէս էլ լինի թունաւորես նորա երջանկութիւնը:

Ռ Օ Գ. Ահա հօր տունը: Ես կ'զարթեցնեմ:

Ե Ա Գ Օ. Զարթեցրո՛ւ այնպիսի բարձր, այնպիսի սարսափելի աղաղակով—ինչպէս մէկը կ'աղաղակեր բազմամարդ քաղաքում գիշերային խուլ ժամերում բռնկած հրդեհի պատճառով:

Ռ Օ Գ. Բրաբանցիօ, սինիօր Բրաբանցիօ:

Ե Ա Գ Օ. Ղե՛ր կաց, վե՛ր կաց, Բրաբանցիօ: Գողե՛ր, գողե՛ր, գողե՛ր: Հսկի՛ր տանդ, աղջկանդ, հարստութեանդ վերայ: Գողե՛ր, գողե՛ր:

ԲՐԱԲԱՆՑԻՕՆ նայում է պտտահանից:

Բ Ր Ա Բ. Այդ ի՞նչ սարսափելի աղաղակներ են: Ի՞նչ է պատահել:

Ռ Օ Գ. Սինիօ՛ր, ամենքդ էլ տանն էք:

Ե Ա Գ Օ. Փակած են դռները:

Բ Ր Ա Բ. Ինչո՞ւ էք հարցնում:

Ե Ա Գ Օ. Սինիօ՛ր, բոլոր ունեցածներդ յափշտակել են. հագնուեցէ՛ք շուտով: Ի՞նչ զրկուած էք ձեր հոգու կիսից: Այս իսկ ժամիս, այս իսկ վայրկեանիս պառաւ սև ոչխարը գզգզում է ձեր սպիտակ գառին: Շտապեցէ՛ք, շտապեցէ՛ք, նշան տուէք թո՛ղ ողջ քնած քաղաքը զարթնի:—Շտապեցէ՛ք ասում են ձեզ:

Բ Ր Ա Բ. Ի՞նչ էք ասում, խելագարուել էք ի՞նչ է:

Ռ Օ Գ. Յարգելի սինիօր, մի՞թէ ձայնիցս չ'ձանսչեցիք ինձ:

Բ Ր Ա Բ. Ո՛չ, ո՛վ ես դու:

Ռ Օ Գ. Ուղռիգօն:

Բ Ր Ա Բ. Անպիտան, ես քեզ չ'արգելեցի թափառել իմ տան շուրջը, պարզ չ'անացի թէ աղջկա քեզ համար չէ. բայց դու խելագարուելով ընթրիքից և յիմարացնող խմբեղէններից անմիտ քաջութեամբ վողովվում ես իմ խաղաղութիւնը:

Ռ Օ Գ. Սինիօ՛ր, սինիօ՛ր—

Բ Ր Ա Բ. Բայց լա՛ւ իմացի՛ր որ իմ պատուովս և ազգեցութեամբ այդ անցքի մասին քեզ արտասուել կ'տամ:

Ռ Օ Գ. Լսեցէ՛ք ինձ, յարգելի սինիօր:  
 Բ Ր Ա Բ. Ի՞նչ յափշտակութեանց և զողերի վերայ ես  
 խօսում: մենք վենետիկումն ենք, իմ տունը մի առանձնացած  
 ամառանոց չէ:

Ռ Օ Գ. Հաւատացէ՛ք որ ես չար մտադրութեամբ չեմ  
 եկել:

Ե Ա Գ Օ. Սինիօ՛ր, երևում է որ դուք այն մարդկանցից  
 էք, որոնք մինչև անգամ առանց մտածելու կ'մոռանան Աս-  
 տուծուն, եթէ միայն այդ պահանջի սատանան: Մենք  
 եկանք ձեզ մի ծառայութիւն անելու ցանկութեամբ,  
 և զորա համար մեզ անպիտանների տեղէք ընդունում: ինչպէս  
 երևում է դուք կ'կամենայիք, որ մի արարական վայրենի ձի  
 յափշտակէր ձեր աղջկան, որ դուք խրինջացող թռուներ ու-  
 նենայիք, որ թռչկոտող ձիաները ձեր եղբայրները լինէին, իսկ  
 արագավազները ձեր եղբորորդիքը:

Բ Ր Ա Բ. Ո՞վ է այդ անզգամ համբաւաբերը:

Ե Ա Գ Օ. Մի մարդ, որ եկել է ձեզ յայտնելու թէ ձեր  
 աղջիկը և Մաւրը միմիանց առատ համբոյրներ են տալիս:

Բ Ր Ա Բ. Անօրէ՛ն:

Ե Ա Գ Օ. Մէնատօ՛ր.

Բ Ր Ա Բ. Երկուսիդ էլ ցոյց կ'տամ:

Ռ Օ Գ. Սինիօ՛ր, ես այդ բոլորին պատասխանատու կ'լի-  
 նեմ: Միայն թոյլ տուէք ձեզ հարցնելու. ձեր հեռատ ես կար-  
 գադրութեամբ և համաձայնութեամբ է գնում արդեօք ձեր  
 գեղեցիկ աղջիկը, այս խաւար կէս գիշերին, առանց մի ու-  
 ղեկցի, բացի անպիտան վարձուած մակոյկավարից, մաւրի հեշ-  
 տասէր գրկախառնութեան մէջ: Եթէ այդ ձեր համաձայնու-  
 թեամբ է եղած իհարկէ մենք իզուր տեղը անհազնիստ արինք  
 ձեզ բայց եթէ չգիտէք, այն ժամանակ և առողջ դատողու-  
 թիւնը կասի որ դուք անարդար կերպով էք մեզ հայհոյում:

Չ'կարծէք թէ ես այնքան յիմար եմ, որ ամենայն քաղա-  
 քավարութիւն մոռանալով՝ սկսէի յանդուգն կերպով հանաք  
 անել և ծաղրել ձեզ: Կրկնում եմ, ձեր աղջիկը (էնէ այդ բա-  
 նո՛ւմ չ'չոյ չէր համայնա-նիւնը) սարսափելի կերպով մեղք է  
 գործել, զոհելով իւր պարտաւորութիւնները, գեղեցկութիւնը,  
 խելքը և հարստութիւնը՝ շոյոքորթող, գիշերաշրջիկ շրջմա-  
 լիկին: Շտապեցէ՛ք համոզուել ձեր իսկական աչքերով, եթէ  
 նորան գտնէք իւր սենեակում կամ տանը—այն ժամանակ խա-  
 բերայութեանս համար վենետիկի ամենախիստ օրէնքներով  
 դատեցէ՛ք ինձ:

Բ Ր Ա Բ. Լո՛յս! Ճրագնե՛ր!—կանչեցէ՛ք բոլոր ծառաներին!  
 Ո՛հ, այս բոլորը որքա՛ն նման են տեսած երազիս. Աստուած  
 իմ, ես կ'մեռնէի եթէ ուղիւ լինէր:—ձրագ, ասում են ձեզ:

(Էնտանում է պարտահանից)

Ե Ա Գ Օ. Այժմ մեա՛ս բարև: Պաշտօնիս նկատմամբ ան-  
 կարելի է, մինչև անգամ և անօգուտ՝ վկայ լինել Մաւրի դէմ,  
 հակառակ դէպքում իմը ինձ հասած է: Քաջ գիտեմ, որ ծե-  
 րակոյտը Կիպրոսի ներկայ պատերազմի համար նորանից լաւ և  
 հմուտ կառավարիչ չ'գտնելով՝ ոչ մի դէպքում նորան չի զո-  
 հել: մի սրեւիցէ տուգանքով բանը կ'վերջացնի: Ուստի չ'նայելով  
 որ ես նորան դժոխքի չարչարանքներից աւելի եմ ատուծ, այ-  
 նուամենայնիւ գործերի այս հանգամանքում անկարելի է մի  
 կողմ ձգել սիրոյ զրոշակը, իհարկէ ըստ երևութին սիրոյ:  
 Գու առաջնորդիր հօրը նեա \*) բերդը. այնտեղ անպատճառ

\*) The Sagittary—բնակարան է նաւատորմի և հասարակապետու-  
 թեան զօրքերի զինարանում: Նորա դռները վերայ այժմ էլ երևում են նկարած  
 մի նեա լարուած աղեղով: Մի քանի մեկնիչներ են թաղուածն թէ դա մի  
 հիւրանոցի անուն է նեա նշանացոյցով:

կ'գտնես Մաւրին ինձ հետ միասին: Մնաս բարև: (Բոսս և Գնոս):

Ներս և Տրոսոս ԲՐԱԲԱՆՏԻՕՆ շրջապատած լապտերները չեւզելին սպասարներով:

Բ Բ Ա Բ. Ճշմարիտ և ճշմարիտ, նա փախել է և այժմ բացի վշտից ապագայում ինձ էլ ոչինչ չի սպասում:—Որտեղ տեսար նորան, Ռոզոնիգո՛.—Օ՛ թշուառակա՛ն.—Մաւրի հետ ասում ես դու.—Ի՞նչպէս ճանաչեցիր նորան.—Ո՛հ, ի՞նչ սարսափելի կերպով նա ինձ խաբեց.—Ի՞նչ ասաց քեզ: Ե՛լի լապտերներ բերէք, կանչեցէ՛ք բոլոր ազգականներին.—Եւ կարծում ես որ պսակո՛ւնել են:

Ռ Օ Դ. Կարծեմ, սինիօ՛ր:

Բ Բ Ա Բ. Ո՛հ Աստուած իմ.—ինչպէ՞ն համաձայնուեցաւ նա իւր իսկական արիւնը փոխել. Հայրե՛ր այս օրուանից էլ չ'հաւատաք ձեր աղջկանց սուտ համեստութեանց.—Չ'կա՞ն այնպիսի հմայութիւններ, որոնցով կախարդում են երիտասարդներին և աղջկանց: Ասան, Ռոզոնիգո, այդպէս բան չե՞ն կարդացել:

Ռ Օ Դ. Կարդացել իմ, սինիօ՛ր:

Բ Բ Ա Բ. Կանչեցէ՛ք եղբօրս.— Ա՛խ, ինչո՞ւ ես նորան քեզ չ'տուի.—Երկու մաս բաժանուենք. մէկ մասը այս կողմով գնայ, միւսը այն կողմով: Բայց չ'գիտե՞ս որտեղ են նոքա այժմ:

Ռ Օ Դ. Գիտեմ. դուք միայն պահապաններ կանչեցէ՛ք:

Բ Բ Ա Բ. Առաջ ընկի՛ր, խնդրում եմ: Հարկաւոր ժամանակ պահապաններ կ'պահանջեմ իւրաքանչիւր տնից: Վերցրէ՛ք շուտով հրացաններդ. զիշերապահներ կանչեցէ՛ք, դնանք, բարի Ռոզոնիգո. ես քեզ կ'վարձատրեմ նեղութեանդ համար:

### Ե Ր Կ Ր Ո Ր Դ Տ Ե Ս Ա Ր Ա Ն

#### Լ չի այնտեղ: Մ'ի ուրիշ փողոց:

Ներս և Տրոսոս ՕՏԷԼԼՕՆ և ԵԱԳՕՆ, շրջապատած լապտերները չեւզելին սպասարներով:

Ե Ա Գ Օ. Պատերազմում իհարկէ ես մարդիկ եմ սպանել, բայց կանխատրոհուող սպանութիւնը հակառակ է իմ խղճմտանքին: Երբեմն մինչև անգամ անհրաժեշտ խտտարտութիւն չեմ կարողանում գործ դնել: Տասն անգամ արդէն պատրաստուեցայ ծակել նորա կողը—

Օ Տ Ե Լ. Եւ լաւ արիւր, որ քեզ զսպեցիր:

Ե Ա Գ Օ. Նա պարծենում էր: Ձեզ վերայ խօսելիս այնպիսի վերաւորիչ բասեր էր գործ դնում, որ բոլոր մեզմզգացումներս հաղիւ զսպեցին բարկութիւնս: Բայց ասացէ՛ք, պսակուե՞լ էք: Չ'մոռանաք որ ծերունի մանիֆիկոն \*) այստեղ ամենին սիրելի է, որ այդպիսի դէպքերում նորա ձայնը երկու անգամ աւելի զօրուոր է, ինչպէս և դքսինը, նա կ'բաժանի ձեզ կ'ենթարկի պատիժների, և այնպիսի պատիժների, որ կ'թելադրի կատաղութիւնը:

Օ Տ Ե Լ. Թո՛ղ որքան կամենայ կատաղի: Հասարակապետութեան ցոյց տուած ծառայութիւններս կ'ընջեն նորա բոլոր գանգատները: Եթէ տեսնեմ որ պարծանքը ևս փառք է աւելացնում՝ այն ժամանակ կ'իմանան որ ես թագաւորական ծագումից եմ, որ առանց ձերակուտական ղլխարկի ես էլ

(\*) Magnifico—վե՛սակի ձերակոյտի անգամներէ տխրոս է:

կարող եմ ձգտել բաղդաւորութեան և այնպիսի մեծ բաղդաւորութեան՝ որին ինքը հասած է: Օ. Եագօ, եթէ Դէզդէմնայի սէրը չ'ընէր, ողջ ծովային գանձերի հետ չէի փոխիլ ազատ կեանքը:—Բայց այն ի՞նչ ճրագներ են:

Ե Ա Պ Օ. Բարկացած հայրն է իւր ազգականների հետ: Լաւ կ'ընէր եթէ հեռանայիք:

Օ Տ Է Լ. Ոչ, ես մտադրութիւն չունեմ ծածկուելու, իմ ծառայութիւնները, անունս, խղճմտանքս բոլորովին արդարացնում են ինձ:—Նորա՞ են:

Ե Ա Պ Օ. Ոչ երգվում եմ Եանուսի անունով որ նորա չեն երևում:

Ներս է հմտո՞ւմ ԿԱՍՍԻՕՆ և Տի Կանի շողաբերները չե՞սէրին սպասարներ:

Օ Տ Է Լ. Սոքա դքսի ծառաները և իմ լէյտէնանտս են: Բարի երեկոյ, բարեկամներ.—ի՞նչ նոր բան կայ:

Կ Ա Ս. Դուքսը ողջունում է ձեզ և խնդրում է շնորհ տանել իրա մօտ, որքան կարելի է շուտ, այս բոպէիս:

Օ Տ Է Լ. Եթէ չեմ սխալվում Կիպրոսից շատ ծանր լուրեր են հասած: Պատերազմական նաւերով այս գիշեր միմիանց ետեւից մօտ 10 համբաւաբերներ են եկած. անդամներից շատերը վեր են կացել քնից և արդէն հաւաքուել են դքսի մօտ: Ձեր ետեւից էլ մարդ էին ուղարկել բայց տանը չէին գտել, ուստի հրամայեցին ողջ քաղաքում փնտռել:

Օ Տ Է Լ. Լաւ է որ պատահեցաք ինձ: Ես մի քանի խօսք ունեմ ասելու այս տան մէջ. այս բոպէիս կ'գամ. (Դո՞ւս է գնո՞ւմ):

Կ Ա Ս. Այնտեղ ի՞նչ բան ունի:

Ե Ա Պ Օ. Հէնց այս գիշեր գեներալը գերել է մի ամենա-

գերեցիկ պատերազմական նաւ, և այդ օրինաւոր է համարվում— նորա բաղդը բանել է:

Կ Ա Ս. Չեմ հասկանում ասածդ.

Ե Ա Պ Օ. Ամուսնացել է—

Կ Ա Ս. Ո՞ւմ հետ:

Ե Ա Պ Օ. Բրա . . .

ՕՏԷԼԼՕՆ Վերադառնում է:

Գալի՞ս էք գեներալ:

Օ Տ Է Լ. Գնանք:

Կ Ա Ս. Ահա և էլի ուրիշ գեսպաններ . . .

Ե Ա Պ Օ. Բրաբանցիօն է:—Ձգուշացէ՛ք, գեներալ. . .

Ներս էն հմտո՞ւմ ԲՐԱԲԱՆՑԻՕՆ և ՌՕԴՌԻԳՕՆ գիշերապատգաններ և շողաբերները չե՞սէրին սպասարների հետ:

Օ Տ Է Լ. Է՛յ, կանգնեցէ՛ք:

Ռ Օ Դ. Սինիօր, Մաւրն է:

Բ Ր Ա Բ. Բռնեցէ՛ք աւազակին: (Նրի՞ն է ողջն Տերիայնոմ են Լերերը:)

Ե Ա Պ Օ. Այդ դո՞ւք էք, Ռօդուիգօ, ի՞նչ էք կամենում, պատրաստ եմ ծառայելու:

Օ Տ Է Լ. Տեղիները դրէք ձեր փայլուն թրերը—բաց օդում նորա կ'ժանգոտեն:—Յարգելի սինիօր, դուք աւելի կ'շահուէք ձեր ալիքներով քան զէնքերով:

Բ Ր Ա Բ. Ո՛հ, անօրէն աւազակ, որտե՞ղ թաղցրի՛ր աղջկանս: Անիծեա՛լ, դու կախարդեցիր նորան, որովհետեւ—անկարելի է—որ մի այնպիսի համեստ, գերեցիկ և բաղդաւոր աղջիկ, որ այնքան ատում էր ամուսնութիւնը, որ մերժեց մեր

հասարակապետութեան ամենազեղեցիկ անդամի ձեռք՝ այն, անկարելի է, որ այդպիսի աղջիկ—առանց կախարչութեան վճռէր ենթարկել իր անձը ընդհանուր արհամարանքի, վճռէր փախչել ծնողական սնից և գրկել մի հրէշէ, որ ընդունակ է միայն սարսափ ազդել և ոչ սէր: Թո՛ղ ողջ աշխարհը դատի—եթէ լոյսի նման պարզ չէ, թէ դու զգուցի կախարչութեամբ ազդեցիր նորա վերայ, թէ հմայութեամբ կապեցիր նորա աչքերը և այն անփորձ, անարատ աղջկան ճանապարհից հանեցիր: Այս սարսափելի չարագործութիւնը քննութեան պիտի ենթարկուի. իսկ այժմ ձերբակալում եմ քեզ ինչպէս մի համաշխարհային խաբբայի, որ պարապվում է արդելուած կախարչական գրքերով և օրէնքներով: Բռնեցէ՛ք դորան և եթէ կընդիմանայ մի՛ խնայէք:

ՕՏԷԼ. Զսպեցէք ձեզ ինչպէս դուք բարեկամներս, նոյնպէս և դուք թշնամիներս: Այդպիսի մենամարտական դերերում ես հարկաւորութիւն անգամ չեմ ունենալ յուշարարի:— Ո՛րտեղ էք կամենում գնամ ձեր մեղադրանաց պատասխանելու: ԲՐԱԲ. Բանտը, մինչև որ դատաստանի հրաւիրեն:

ՕՏԷԼ. Շատ լաւ կ'լինէր. բայց ձեր այդ ցանկութիւնից աւելի մեծ ցանկութիւն ունի դուքսը ինձ տեսնելու, որ իմ ետեից ծառաներ է ուղարկել հասարակապետութեան գործերի մասին:

ԱՌ. ԾԱՌ. Այո՛, յարգելի սինիօր. դուքսը ժողով է կազմել. կարծեմ ձեր ետեից էլ են ուղարկել:

ԲՐԱԲ. Ի՛նչ, այս ժամանակ ժողովը ճարէ՛ք նորան այնտեղ: Բայց իմ գործս էլ պակաս ծանր չէ: Ինքը դուքսը և ընկերներս չեն կարող իմ կողմն չ'բռնել. չպէտք է անպատիժ թողնել այդպիսի չարագործներին—Ստրուկները և կռապաշտներն են մեր տէրերը դառնում:—

### ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ.

#### Իշի այնտեղ. Ժողովի Դասչիւծը:

ԳՈՒՔԱՐ և ԾԵՐԱԿՈՅՏԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ նստած են սեղանի ստամբ: Սի բանի սպահներ և ծառաներ կանգնած են բէ՛յի խորտուս:

ԳՈՒՔԱՐ. Սակայն այդ լուրերում տարբերութիւններ կան, որոնք կասկածելի են դարձնում նորանց ճշմարիտ լինելը: 1 ԱՆԴ. Ճշմարիտ որ շատ զանազան են: Ինձ հարիւր և եօթ նաւերի մասին են գրում:

ԳՈՒՔԱՐ. Ինձ հարիւր քառասուն:

2 ԱՆԴ. Իսկ ինձ երկու հարիւր. բայց այդպիսի լուրերում կարող է սխալ պատահել, միայն ինչ որ ուղիղ է, այն է որ նաւատորմիղը տաճկական է և թէ Կիպրոսի վերայ է գալիս:

ԳՈՒՔԱՐ. Շատ հաւանական է. ես թուերի տարբերութիւնից չեմ տարակուսում գործի իսկութեան մասին, ընդհակառակը հաւատում եմ իսկական ճշմարտութեան, ուստի և վախենում եմ:

ՆԱԻԱՍՏԻ. (Բէ՛յի եպետից) Էյ ասրէ՛ք ինձ ուղղակի նորա մօտ:

Ներսէս է հիսուն քի ՍՊԱՀ ՆԱԻԱՍՏԻՒ 4եք:

ՍՊԱՀ. Սա ուղարկուած է պատերազմական նաւից:

ԳՈՒՔԱՐ. Ի՛նչ նորութիւն:

ՆԱԻԱՍ. Սինիօր Անջէլօն հրամայեց ինձ որ ժողովին յայտնեմ թէ տաճկական նաւատորմիղը գալիս է Հոողոսի վերայ:

Գ Ո Ւ Ք Ս. Ի՞նչ կասէք այս փոփոխութեան մասին :

Ի Ա Ն Գ. Թէ դա ցնորք է, թէ ընդդէմ է առողջ դատողութեան, խաբեբայութիւն է մեզ քննացնելու համար: Կա մտածեցէք որ Կիպրոսը Տաճիկների համար Հռոդոսից աւելի հարկաւոր է. նորան տիրելը աւելի հեշտ է, որովհետեւ ոչ ամբարցրած է և համարեալ ոչ մի պաշտպանելու միջոց չունի. այն ինչ Հռոդոսը ամուր է: Տաճիկները այնքան յիմար չեն լինի որ գլխաւորը փոխեն երկրորդականի հետ, որ աւելի շահաւէտ և հեշտութեամբ ձեռք բերելուն թողնեն անօգուտի և պաշտպանուածի համար:

Գ Ո Ւ Ք Ս. Այդ անկարելի է, նաւատորմիցը գնաց Հռոդոսի վերայ:

Ս Պ Ա Հ. Ահա և մի ուրիշ համբաւաբեր:

Նէրո է հինում թէ ՀԱՄԲԱՒԱԲԵՐ:

Հ Ա Մ Բ. Յարգելի և ազնիւ սինիորներ, Օտտոմանները Հռոդոսի վերայ գնալու ժամանակ միացան իրանցից ոչ հեռու մի ուրիշ նաւատորմիցի հետ:

Ի Ա Ն Գ. Այդ արդէն գուշակումէի: — Բայց չ'գիտես թէ որքան մեծ է այդ նոր նաւատորմիցը:

Հ Ա Մ Բ. Էրեսուն նաւից է բաղկացած. միանալուց յետոյ նորա շուռ եկան և ընթացքը ուղղեցին Կիպրոսի վերայ: Սինիոր Մօնտանիօն, ձեր հաւատարիմ և քաջ ծառան ուղարկումէ ձեզ այս համբաւը և խնդրումէ հաւատալ:

Գ Ո Ւ Ք Ս. Ուրեմն անկասկած նորա Կիպրոսի վերայ են ուղում արշաւել: — Քաղաքը՞նք է Մարկոս Լիւչէզը:

Ի Ա Ն Գ. Ոչ, զնացել է Յլորէնցիա:

Գ Ո Ւ Ք Ս. Առանց յետաձգելու զրեցէք, որ որքան կարելի է շտապի վերադառնայ:

Ի Ա Ն Գ. Ահա և Բրաբանցիօն քաջ Մարի հետ:

Նէրո է հինում ԲՐԱԲԱՆՑԻՕՆ, ՕՏԷԼԼՕՆ, ԵԱԳՕՆ, ՌՕԴՌԻԳՕՆ և ՍՊԱՀՆԵՐ:

Գ Ո Ւ Ք Ս. Քաջդ Օտէլլօ, պէտք է առանց ուշանալու խկոյն զնաս մեր ընդհանուր թշնամի Օտտոմանների դէմ: (Բրաբանցիօյն) Ա՛, ձեզ չ'նկատեցի, բարև, յարգելի սինիոր. մենք շատ կարօտութիւն ունենք ձեր խորհրդին, ձեր օգնութեան:

Բ Ր Ա Բ. Իսկ ինձ ձերը: Ներեցէք մի ծերունու, ազնիւ գութ, թագաւորութեանց վերաբերեալ նշանաւոր գործերը քննելու պարտաւորութիւնները և համբաւները ինձ չ'վերկացրին անկողնուց. հասարակագետութեան շահերին վերաբերեալ հոգսերը չ'վերջովեցին ինձ, որովհետեւ անձնական վեշտս այնքան մեծ և այնքան անբուժելի է, որ խեղդումէ իմ մէջ միւս բոլորին՝ բոլորովին չը թուլանալով այդ կռուից:

Գ Ո Ւ Ք Ս. Ի՞նչ է պատահել:

Բ Ր Ա Բ. Աղջիկս, ո՛հ աղջիկս:

Գ Ո Ւ Ք Ս. Մեռել է . . .

Բ Ր Ա Բ. Այո՛ ինձ համար. նորան արատաւորել, յափըշտակել, կախարղել են զանազան կախարղական զեղերով, խօտերով: որովհետեւ մի աղջիկ, որ անզամալոյց չէ, կոյր չէ, անխելք չէ՝ առանց կախարղութեան անկարելի է որ ընկնի այդպիսի հրէշաւոր մօլորութեան մէջ:

Գ Ո Ւ Ք Ս. Ով որ էլ լինի, այդպիսի ստոր, զգուշելի միջոցներով ձեր աղջկան խելքից հանողի հաւար՝ ես բաց կանեմ օրինաց արխնոտ գիրքը և կ'զնեմ ձեր առաջ, որ զուրք ընտրէք ամենախիստ պատիժը. չեմ ներել մինչև անգամ հարազատ որդուս:

ԲՐԱԲ. Ծնորհակալ եմ: Մեղաւորը ահա այստեղ է, մաւրը, որին, ինչպէս տեսնում եմ, տէրութեան գործի համար էք կանչել:

ԴՈՒՔՍԸ և ԱՆԴԱՄՆԵՐԸ. Ո՛հ, ինչ ցաւալի:

ԴՈՒՔՍ. (հարկն): Դու ի՞նչ կասես:

ԲՐԱԲ. Ոչինչ, կամ ինչ ասել եմ ուղիղ է:

ՕՏԵԼ. Քաջ և յարգելի անդամներ, բարի և արնիւ տէրեր. թէ ես այս ծերունու աղջկան տարել եմ—այդ ճշմարիտ է. ճշմարիտ է և այն, որ ամուսնացել եմ նորա հետ. բայց միայն դորա մէջ է կայանում ողջ յանցանքս: Աս հմուտ չեմ որ պանազան պերճախօսութեամբ, բանաստեղծական Ֆրաղներով հաշտութիւն խնդրեմ, որովհետեւ այս ձեռքերը մինչև օրս—դուրս հանելով այս վերջի իննը ամուսայ պարապութիւնը—գործել են վրաններով պատած արեան դաշտերի մէջ: Իմ խօսակցութեան նիւթը կարող են լինել այն բոլոր պատերազմները, որոնք եղել են իմ կեանքի միակ պարապմունքը և պարծանքը: Բայց ինչպէս էլ լինի ձեր թոյլտուութեամբ ես կ'պատմեմ պարզօրէն, առանց ծաղկեցնելու՝ իմ սիրոյ ողջ պատմութիւնը թէ ինչպիսի կախարչութեամբ, ինչպիսի խաբէութեամբ հմայութեամբ, որոնց մէջ մեղադրում են այժմ ինձ, գրաւեցի դորա աղջկան:

ԲՐԱԲ. Այնպիսի երկչոտ, համեստ, խաղաղ աղջիկ, որ կարմրում էր ամէն մի շարժումից և կարող էր հակառակել բնութեան, իւր օտարիներին, հայրենեաց, հարստութեան, բոլորին՝ նորան սիրելու համար, որի վերայ նայել անգամ վախենում էր: Միայն անգամալոյժները և անմիաները կարող են ընդդիմանալ բնութեան օրէնքներին, ուստի այդ կ'բացատրուի միայն դժոխային խորամանկ հմայութիւններով: Կրկին անգամ պնդում եմ, թէ նա նորա վերայ ազդել է հմայութեամբ, արիւնը բորբոքելով կամ այնպիսի խմբիքներով, որոնք այդպիսի թմրութեան են հասցնում:

ԴՈՒՔՍ. Պնդելով ոչինչ չեմ հաստատուիլ: Աւելի զրական վկայութիւններ բերէք մեղադրանքը ցոյց տալու համար. դոքա միայն են թագրութիւններ և կարծիքներ են:

ԴԱՆԴ. Խօսի՛ր, Օտէլլօ, արդեօք ուղիղ է թէ դու այդ աղջկայ զգացմունքներին իշխեցիր գաղտնի արգելած միջոցներով. թէ այդ կատարուել է առանց մտածած խորամանկութեանց, ծրագիրների. սրտերը միացնող բնական զօրութեամբ:

ՕՏԵԼ. Խնդրեմ մարդ ուղարկեցէք Նետ ամրոցը նորա ետևից, թո՛ղ ինքը պատմի հօր ներկայութեամբ: Եթէ կրտսնէք նորա խօսքերից թէ ես մեղաւոր եմ, այն ժամանակ զրկեցէք ինձ ոչ թէ այն իշխանութիւնից և վստահութիւնից, որ այժմ վայելում եմ, այլ և կեանքից:

ԴՈՒՔՍ. Այստեղ բերէք Կէզզէմօնային:

ՕՏԵԼ. Էլագօ՛, առաջնորդի՛ր դրանց. դու գիտես թէ որտեղ է նա (նազօն դոն է գնում մի հանդիպման հետ): Իսկ այժմ ես կ'պատմեմ ձեզ իմ սիրոյ պատմութիւնը այնպիսի անկեղծութեամբ, ինչպէս թէ խոստովանում եմ մեղքի՛րս Աստուծուն:

ԴՈՒՔՍ. Պատմի՛ր Օտէլլօ:

ՕՏԵԼ. Նորա հայրը սիրում էր ինձ, շատ անգամ հըրաւիրում էր իւր մօտ, խնդրում էր պատմել իմ կեանքի պատմութիւնը: Պաշարումները, կռիւները, կեանքիս մէջ պատահած արկածները աստիճանաբար պատմում էի, մանկութիւնից ըսկսած՝ մինչև այն ժամանակ, որ նա կամենում էր Պատմելիս իհարկէ պատմում էի և այն վտանգների, անբաղդութեանց մասին, որոնց ենթարկուել եմ ծովերի և ցամաքների վերայ: Թէ ինչպէս մի խրամատի միջով փախչելով ազատեցի կեանքս, որ մազեց էր կախուած, ինչպէս թշնամիները գերեցին ինձ, ծախեցին իբրև սարուկ և թէ ինչպէս ազատուեցայ—պատմեցի այն բոլորը ինչ որ տեսել եմ ճանապարհորդութեանց միջոցին:—

ահագին քարայրներէ, անապատ սարածութեանց, սոսկալի անդունդներէ, ժայռերի և երկնքին հասնող լեռների մասին, պատմեցի միմեանց լափող կաննիրալների, գլուխները ուսերի մէջ խըրուած Անտրոպոֆոգների \*) և ուրիշ շատ վտանգների մասին: Պատմութիւններս ինչպէս երևում էր շատ գրաւում էին 'Կէզգէմնային, որովհետեւ ամենայն անգամ երբ տնային հոգսերը նորան կանչում էին, որ յաճախ էր պատահում նա շուտով վերջացնելով, իսկոյն վերադառնում և մեծ հաճութեամբ ահանջ էր դնում: Այդ բանը նկատելով յաջող ժամանակներ գտայ սկզբից պատմելու համար նորան իմ կեանքս, որի մասին կցկուտւր կերպով էր լսել: Շատ անգամ նորա ուշքերը արտասուքով լցվում էին կեանքիս մէջ պատահած թշուառութեանց նկարագիրները լսելով: Երբ վերջացնում էի, ինձ վարձատրում էր անվերջանալի անկեղծ հաւաչանքներով, երգվում էր թէ այդ սարսափելի, զարմանալի և սրտաշարժ խիստ սքրտաշարժ է—թէ էլ չէր կամենում ինձ հետ պատահի այդպիսի փորձանքներ և միևնոյն ժամանակ ո՛րքան ուրախ կ'լինէր եթէ երկինքը իրան այդպիսի մարդ ստեղծէր: Նա շնորհակալութիւն էր յայտնում ասելով. «եթէ դու ունիս բարեկամ, որ սիրահարուած է մէկի վրայ, այդպիսի պատմութիւններով նա շատ հեշտութեամբ կարող է ստանալ նորա սէրը»: Օգուտ քաղելով այս դէպքից բացարի սիրտս նորա առաջ: Նա սիրեց ինձ, որովհետեւ ես քաջութիւն ունեցայ կրելու այնքան վշտանգներ և ես սիրեցի նորան իւր կարեկցութեան համար: Ահա բոլոր իմ կախարհութիւններս, բայց ահա՛ և նա. թո՛ղ ինքը վկայի առաձններս:

1) Ինչպէս երևում է Եկեղեցիքը այս կտորը հանել է Բալէյգէ Գլեա նայի նկարագրութիւնեց, որ դուրս է եկել 1596 թուականին:

Ներսէս Կոնստանդնուպոլսեցի ԳԵՂԵՄԱՆ ԵՒ ԵԱԳՕՆ ԿԵՄԵՆՆԵՐՈՎ:

Գ Ո Ւ Ք Ս. Այդպիսի պատմութիւն անշուշտ կ'գրաւէր և իմ աղջկան: Բարի Բրաբանցիո՛ ի՞նչ պէտք է արած, հաշտուցէք այն բանի հետ, որին էլ ուղղել չէ կարելի: Կոտրուած թրով անելի բան կ'չինես քան բռունցքներով:

Բ Բ Ա Բ. Խնդրումեմ լսեցէք նորան: Եթէ նա ևս միևնոյն սէրը ցոյց տայ, այն ժամանակ անիծեալ լինեմ եթէ յանդիմանութեան մի խօսք անգամ ասեմ այս մարդուն: Սօսեցէք, աղջիկս: Գիտե՞ք թէ այս յարգելի ժողովի մէջ աւելի ո՞ւմ էք պարտական:

Գ Ե Ջ Գ. Հայրիկ, զիտեմ որ այստեղ ինձ վերայ երկու պարտաւորութիւն կայ: Ձեզ պարտական եմ կեանքովս և կրթութեամբ, և կեանքը ու կրթութիւնը սովորցրին ինձ յարգելու ձեզ: Գուք իմ հրամանատարս էք, հայր իմ, բայց ահա՛ և ամուսինս, ուստի կ'խնդրեմ իրաւունք տաք նորան նոյնքան հաւատարիմ լինեմ, որքան հաւատարիմ էր ձեզ իմ մայրս, որ նոյնպէս իւր հօրից զերազանցեց:

Բ Բ Ա Բ. Աստուած քեզ հետ: Նս վերջացրի:—Եթէ ձերդ պայծառութիւնը կամենայ այժմ անցնենք հասարակապետութեան գործերին: Աւելի բաղդաւոր կ'լինէի եթէ հարազատ աղջկայ տեղ մի որդեգրուհի ունենայի: Սօսեցիր, Մար, ողջ հոգւով յանձնումեմ նորան քեզ. եթէ տիրած չ'լինէիր, իսկոյն կը յափշտակէի: Գոնէ ուրախ եմ որ էլի ուրիշ աղջիկ չունեմ, որովհետեւ այս դէպքը ինձ բռնաւոր կ'զարձնէր միւսի համար. նորան շղթայակապ կանէի: Նս վերջացրի—ազնիւ դուքս:

Գ Ո Ւ Ք Ս. Թո՛ղ տուէք ինձ ևս մի քանի խօսք ասելու որոնք ձեր վեշտը սփոփելու կ'ծառայեն: Երբ այլ ևս օգնութեան յոյս չ'կայ, թշուառութեան խոստովանուլը իւր բոլոր

խստութեամբ վերջ է տալիս և տխրութեան, որը մինչև այդ ժամանակ յուսով էր պահպանվում: Անցած վշտի վերայ արտասուել—նշանակումէ իրա համար մի ուրիշը պատրաստել: Երբ ճակատագիրը մեզ մի հարուած է տալիս, որ անբժշկելի է—մենք համբերութեամբ ծաղրումենք նորա անարդարութեան վերայ: Թալանած մարդը ժպտով աւելի կարող է մի բան կորզել աւազակից քան անօգուտ գանգամներով:

Բ Բ Ա Ք. Եթէ այդպէս է, թողէք Կիպրոսը թուրքերին, մենք ժբպտով կարող ենք նորան էլի տիրել: Իհարկէ մի ուրախ մարդու համար այդպիսի յաւելուածներ ոչինչ են, բայց ի՞նչպէս կարող է տանել դոցա այն մարդը, որին խորհուրդ էք տալիս համբերութեամբ և լուութեամբ կամ ժպտով մոռանայ իւր տխրութիւնը: Այդ բոլոր—ձեր ասածները, որոնք նոյնքան սփոփանք կարող են պատճառել, որքան և տխրութիւն, երկու կերպ կարելի է բացատրել: Բայց խօսքը միշտ խօսք է և մինչև այսօր զեռ չէի լսել թէ վիրաւորված սիրտը կարելի է բժշկել ականջով: Խընդրում եմ խօսենք հասարակապետութեան վերաբերեալ գործերի մասին:

Գ Ո Ւ Ք Ս. Տաճկական մեծ նաւատորմիցը գալիս է Կիպրոսի վերայ: Ի՞նչ, Օտէլլօ, աւելի լաւ միջոցներ կարող ետ գործ զնել այդ կղզին պաշտպանելու: Մենք թէև այնտեղ բաւականի քաջ հրամանատար ունենք, բայց հասարակական կարծիքը, յառաջադիմութեան այդ անսահման տէրը, քեզ աւելի հաւատ է բնծայում և ահա ուրեմն լաւ միջոց է շլացցնելու ամէնի աչքերը նոր քաջութիւններով և յանձն առնելով այդպիսի վտանգաւոր և դժուար արշաւանք:

Օ Տ Է Լ. Յարգելի անդամներ, այնպիսի նեղ դրութիւնների եմ պատահել որչ կեանքումս, որ ինձ համար պատերազմական երկաթէ անկողիները աւելի փափուկ են փետրալից սօփաներից: Մինչև անգամ խոստովանումեմ որ նեղութիւնները

և ձախորդութիւնները ինձ համար մի տեսակ խաղալիք են եղել: Պատրաստ եմ գնալ մոռուլմանների դէմ, բայց խոնարհարար խնդրում եմ ձեզանից, որ կնոջս համար աւելի յարմար կարգադրութիւններ անէք, նշանակէք բնակարան, պահպանութիւն, ծառաներ իւր ծագման համեմատ:

Գ Ո Ւ Ք Ս. Կամենա՛ս, թող նա իւր հօր մօտ ապրի:

Բ Բ Ա Ք. Ես համաձայն չեմ դորան:

Օ Տ Է Լ. Եւ ոչ ես:

Գ Ե Զ Գ. Եւ ոչ ես, հօրս տանը ապրելով, գտնուելով նորա աչքերի առջ միշտ կ'բարկացնէի նորան: Ողորմած դուքս, բարեհաճեցէ՛ք ուշադրութիւն դարձնել, քոջալերեցէ՛ք ձեր գթոտ խօսքերով իմ անփորձութիւնս:

Գ Ո Ւ Ք Ս. Ի՞նչ էք կամենում, Դէզդէմնա:

Գ Ե Զ Գ. Իմ վճռական վարմունքովս ցոյց տուի աշխարհին թէ ես սիրեցի Մաւրին նորա հետ միասին ապրելու համար. ես չ'վախեցայ աղմկալից ապագայից: Հէնց այդ ձգտումով ևս նա ինձ զրաւեց: Օտէլլօի դէմքը տեսայ նորա հոգու և փառքի մէջ և նորա քաջութիւններին նուիրեցի իմ հոգիս և բաղբս: Ուստի, ազնիւ անդամներ, ինձ հանգստութեան պատճառով այստեղ պահելով՝ կ'զրկէք հէնց նորանից, որի պատճառով ես սիրում եմ նորան և շատ դառը կ'լինի իմ կեանքը միայնութեան մէջ: Թոյլ տուէք զնամ նորա հետ:

Օ Տ Է Լ. Թոյլ տուէք, յարգելի տէրեր: Վկայ է Աստուած, որ ես այդ խնդրումեմ ոչ թէ իմ զգացմունքներին բաւականութիւն տալու համար, կամ թէ երկտասարդական ոգևորութիւնից վառուած, որ վաղուց իմ մէջ հանգած է, ո՛չ, այլ որպէս զե չ'տիրեցնեմ նորան այդ մերժումով: Եւ թո՛ղ երկինքը հեռու պահի ձեզ այն մտքից թէ նորա ներկայութիւնը մոռացնել կ'տայ ինձ ձեր ամենահարկաւոր և մեծ գործերը: Եթէ թեւաւոր Կուպիդոնի անհօգս խաղերը ծուլութիւն և

փափկութիւն ազդելով թուլացնի իմ խոհականութիւնը, շղջ-  
թայի գործունէութիւնս և մոռացման տայ ինձ վրայ դրած  
ծանր յանձնարարութիւնը՝ այն ժամանակ թո՛ղ թուլասիրտները  
թրիս տեղ ինձ ծաղկամաններ տան, թո՛ղ իմ փառքը, անունը  
ենթարկուի ամենայն տեսակ հայհոյանքների, արհամարհանաց:

Գ Ո Ւ Ք Ս. Ինքներդ վճռեցէք, կամենաս տար, կամենաս  
մնայ: Գործը շուտափոյթ օգնութեան է կարօտ. դու պէտք է  
այս իսկ գիշեր ճանապարհ ընկնես:

Գ Ե Ջ Գ. Ա՛յս գիշեր:  
Գ Ո Ւ Ք Ս. Ա՛յո՛:  
Օ Տ Է Լ. Պատրաստ եմ:

Գ Ո Ւ Ք Ս. Առաւօտեան իննը ժամին մենք էլի այստեղ կ'հա-  
ւաքվինք: Դու կ'թողնես քո ծառաներից մէկին. նորա հետ  
կուղարկենք հաւատարմութող թ և բոլորը ինչ հարկաւոր կ'լինի:

Օ Տ Է Լ. Ես կ'թողնեմ իմ պարուչիկին: Նա ազնիւ և  
հաւատարիմ մարդ է, նորան յանձնում եմ բերելու և կնոջս  
և բոլորը, ինչ կ'յանձնէք ինձ տալու:

Գ Ո Ւ Ք Ս. Ուրիմն վճռուած է: Ամենիդ, բարի գիշեր  
եմ ցանկանում: (Բրաթանոյեջն) Իսկ ձեզ յարգելի սինիօր, թոյլ  
տուէք նկատելու, որ առաքինութիւնը գրաւիչ տեսքից ևս  
զըզուած չէ—ձեր փեսան այնքան սև չէ որքան գեղեցիկ:

1 Ա Ն Գ. Մ'նա՛ս բարև, քաջ Մաւ'ր, եղի՛ր Դեզդէմո-  
նայի բաղդաւորողը:

Բ Բ Ա Բ. Հսկի՛ր նորան, Մաւր, լաւ հսկիր. նա խարեց  
հօրը, կարող է խարել և քեզ. (Գորս է գալիս Դոնի, Անտոն-  
երի, Սպահնէրի և ուրիշների հետ):

Օ Տ Է Լ. Ողջ կեանքովս երաշխաւոր եմ նորա հաւատար-  
մութեան մասին: Ազնիւ եագօ՛, քեզ եմ յանձնում Դեզդէմո-  
նայիս, պատուիրի՛ր կնոջդ որ նորան մենակ չ'թողնի: Գործերդ  
վերջացնելով յաջող գեղաբում նորանց հետ կ'գաս ինձ մօտ:

Գնա՛նք, Դեզդէմոնա՛, միայն մի ժամ կարող եմ նուիրել քեզ  
և հարկաւոր կարգադրութեանց: Ի՞նչ արած. պէտք է հնա-  
զանդուել ժամանակի պահանջներին: (Գորս է գնում Դեզդէմո-  
նայի հետ):

Ռ Օ Գ. Եագօ՛.

Ե Ա Գ Օ. Ի՞նչ ես ուզում, ազնիւ հոգի:

Ռ Օ Գ. Ի՞նչ ես կարծում, ի՞նչ պէտք է անեմ այժմ:

Ե Ա Գ Օ. Կ'զնաս քնելու:

Ռ Օ Գ. Խեղդուելու եմ:

Ե Ա Գ Օ. Ի՞նչ, խեղդուել, էլ չեմ սիրել քեզ: Եւ ի՞նչու  
յիմար գլուխ:

Ռ Օ Գ. Յիմարութիւն է ապրելը, երբ կեանքը տանջանք  
է, աւելի լաւ է մեռնել, երբ մահը բժշկումէ:

Ե Ա Գ Օ. Ա՛յդ ինչ դատարկ խօսքեր են: Ահա՛ 28 տարի  
է որ նայում եմ ըյս աշխարհ, այն ժամանակից սկսած երբ  
ընդունակ եղայ չարը բարիից զանազանել՝ դեռ չեմ պատահել  
մի մարդու, որ իւր անձը սիրել իմանար: Ճշմարիտ ողջ մարդ-  
կութեամբս աւելի լաւ կ'համարեմ սիրել մի կապիկի, քան  
ինձ խեղդել մի որևիցէ հասարակ կնոջ սիրոյ համար:

Ռ Օ Գ. Ի՞նչ անեմ. խոստովանումեմ, որ ամաչում եմ ան-  
գամ նորա վերայ այդքան յուփշտակուելուս համար, բայց ի՞նչ  
անեմ. այնքան կամք չունեմ ինձ յողթելու համար. առա-  
քինութիւնս այդքանի չի հասնում:

Ե Ա Գ Օ. Առաքինութիւն, ահա քեզ ցնորք, մեզանից է  
կախուած լինել այսպէս կամ այնպէս. Մեր մարմինը—մեր այ-  
զին է, իսկ նորա այգեպանը—մեր կամքը. կամենումենք ցանել  
այդ այգում եղէգնի թէ ախցանի, ծաղկի թէ ուրիշ բոյսերի  
սերմեր, մտածումենք զարդարել մի կամ զանազան տեսակ  
բոյսերով, վճռումենք անինամ թողնել նորան, կամ ուշի ու-  
շով մեծացնել այդ բոլորի զօրութիւնը և կառավարութիւնը

Ռ Օ Գ. Ի՞նչ անեմ. խոստովանումեմ, որ ամաչում եմ ան-  
գամ նորա վերայ այդքան յուփշտակուելուս համար, բայց ի՞նչ  
անեմ. այնքան կամք չունեմ ինձ յողթելու համար. առա-  
քինութիւնս այդքանի չի հասնում:

Ե Ա Գ Օ. Առաքինութիւն, ահա քեզ ցնորք, մեզանից է  
կախուած լինել այսպէս կամ այնպէս. Մեր մարմինը—մեր այ-  
զին է, իսկ նորա այգեպանը—մեր կամքը. կամենումենք ցանել  
այդ այգում եղէգնի թէ ախցանի, ծաղկի թէ ուրիշ բոյսերի  
սերմեր, մտածումենք զարդարել մի կամ զանազան տեսակ  
բոյսերով, վճռումենք անինամ թողնել նորան, կամ ուշի ու-  
շով մեծացնել այդ բոլորի զօրութիւնը և կառավարութիւնը

Ռ Օ Գ. Ի՞նչ անեմ. խոստովանումեմ, որ ամաչում եմ ան-  
գամ նորա վերայ այդքան յուփշտակուելուս համար, բայց ի՞նչ  
անեմ. այնքան կամք չունեմ ինձ յողթելու համար. առա-  
քինութիւնս այդքանի չի հասնում:

Ե Ա Գ Օ. Առաքինութիւն, ահա քեզ ցնորք, մեզանից է  
կախուած լինել այսպէս կամ այնպէս. Մեր մարմինը—մեր այ-  
զին է, իսկ նորա այգեպանը—մեր կամքը. կամենումենք ցանել  
այդ այգում եղէգնի թէ ախցանի, ծաղկի թէ ուրիշ բոյսերի  
սերմեր, մտածումենք զարդարել մի կամ զանազան տեսակ  
բոյսերով, վճռումենք անինամ թողնել նորան, կամ ուշի ու-  
շով մեծացնել այդ բոլորի զօրութիւնը և կառավարութիւնը

Ռ Օ Գ. Ի՞նչ անեմ. խոստովանումեմ, որ ամաչում եմ ան-  
գամ նորա վերայ այդքան յուփշտակուելուս համար, բայց ի՞նչ  
անեմ. այնքան կամք չունեմ ինձ յողթելու համար. առա-  
քինութիւնս այդքանի չի հասնում:

Ե Ա Գ Օ. Առաքինութիւն, ահա քեզ ցնորք, մեզանից է  
կախուած լինել այսպէս կամ այնպէս. Մեր մարմինը—մեր այ-  
զին է, իսկ նորա այգեպանը—մեր կամքը. կամենումենք ցանել  
այդ այգում եղէգնի թէ ախցանի, ծաղկի թէ ուրիշ բոյսերի  
սերմեր, մտածումենք զարդարել մի կամ զանազան տեսակ  
բոյսերով, վճռումենք անինամ թողնել նորան, կամ ուշի ու-  
շով մեծացնել այդ բոլորի զօրութիւնը և կառավարութիւնը

Ռ Օ Գ. Ի՞նչ անեմ. խոստովանումեմ, որ ամաչում եմ ան-  
գամ նորա վերայ այդքան յուփշտակուելուս համար, բայց ի՞նչ  
անեմ. այնքան կամք չունեմ ինձ յողթելու համար. առա-  
քինութիւնս այդքանի չի հասնում:

Ե Ա Գ Օ. Առաքինութիւն, ահա քեզ ցնորք, մեզանից է  
կախուած լինել այսպէս կամ այնպէս. Մեր մարմինը—մեր այ-  
զին է, իսկ նորա այգեպանը—մեր կամքը. կամենումենք ցանել  
այդ այգում եղէգնի թէ ախցանի, ծաղկի թէ ուրիշ բոյսերի  
սերմեր, մտածումենք զարդարել մի կամ զանազան տեսակ  
բոյսերով, վճռումենք անինամ թողնել նորան, կամ ուշի ու-  
շով մեծացնել այդ բոլորի զօրութիւնը և կառավարութիւնը

յանձնած է մեր կամքին: Եթէ մեր կեանքի կշիռի մի կողմը  
 ևս չծանրացնէր բանականութիւնը հաւասարակշռելով զգաց-  
 մանց թաթին—մեր արիւնը և բնական ցածութիւնները մեզ  
 ամենամտաւոր հետեանքների կ'հասցնէին. բայց մենք ունենք  
 բանականութիւն որ բարեխառնումէ մեր բորբոքող կրքերը,  
 որ զսպումէ մեր անասնական զրգռումները, աննուաձի ջան-  
 կութիւնները և դորա համար եզրակացնումեմ, որ այն բանը որին  
 դու սէր ես անուանում՝ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի ծիլ, որին  
 ինչ ուղղութիւն կամենաս կարող ես տալ:

Ռ Օ Գ. Զի կարելի . . .

Ե Ա Գ Օ. Ոչ այլ ինչ է, եթէ ոչ արեան բորբոքում և  
 կամակատարութեան հաճոյք: Բաւական է, այր եղի՛ր. խեղ-  
 դուելու ես. խեղդի՛ր կատուններին և կոյր շներին: Արդէն յայտ-  
 նեցի քեզ, որ բարեկամդ եմ, արդարեւ քեզ հետ ամուր  
 կապերով եմ կապուած և երբէք չեմ կարող այնքան օգտաւէտ  
 լինել քեզ որքան այժմ: Աքցրո՛ւ դու քսակդ փողով, զնա՛  
 պատերազմ, փոխի՛ր դէմքդ արուեստական միրուքով, իսկ քսակդ  
 լքցրու շատ շատ: Անկարելի է, որ Բէզդէմոնայի սէրը Մաւրի  
 վերայ երկարատե լինէր—լքցրո՛ւ դու քսակդ փողով, կամ  
 նորանը նորա վերայ. այդ ամուսնութեան սկիզբը շատ աղմկա-  
 լեց եղաւ, կ'տեսնես որ վերջը ևս այդպէս կ'լինի. լքցրո՛ւ դու  
 քսակդ փողով: Այդ Մաւրները դարմանալի փոփոխամիտ են.  
 լքցրո՛ւ քսակդ փողով. այն բաժինը, որ նորա համար այժմ  
 մորեխից 1) քաղցրէ, շուտով քինաքինից դառը կ'լինի: Եւ  
 կինն էլ նոյնպէս կ'փոխուի, կ'յուզենայ նրանից, շուտով  
 աչքերը կ'բացուին և կ'տեսնի թէ ո՞րքան խաբուած է ինքը:  
 Նորա համար անպատճառ—փոփոխութիւն կ'հարկաւորուի,

1) Տոնկէնում մորեխը համարվումէր ամենախորթելի կերակուր:

այո՛ անպատճառ. ուրեմն դու լքցրո՛ւ քսակդ փողով: Եթէ  
 կամենումես կորցնել քեզ—կորցրո՛ւ, միայն խեղդուելուց աւելի  
 հեշտ միջոցով: Իսկ որքան կարող ես—շատ փող ձեռք ձգի՛ր:  
 Եթէ անտուն Մաւրի և խորամանկ Վենետիկահու փարիսական  
 ձեւերը և անհաստատ երգումները չ'յաղթեն Նագօի սրամտու-  
 թեանց և ողջ դժոխքին՝ նա քոնը կ'լինի, ուրեմն—փող  
 ձեռք ձգիր: Խեղդուելէ՛լ այդ ինչ միտք է, աւելի լաւ է բաւա-  
 կանացած կախուել, քան ոչնչի չ'հասած խեղդուել:

Ռ Օ Գ. Բայց կարո՞ղ եմ հաւատացած լինել թէ յաջո-  
 ղութիւնը չի դաւաճանիլ յոյսերիս:

Ե Ա Գ Օ. Յոյսդ դի՛ր ինձ վերայ, Գնա՛ ձեռք ձգի՛ր փող:  
 Ես շատ անգամ առել եմ քեզ, ասումեմ և այժմ, կասեմ և  
 միշտ—ատումեմ Մաւրին. շատ պատճառներ ունեմ դորա համար—  
 այդ ամէնը ունիս և դու: Միանանք որ աւելի մեծ ուժով վրէժ  
 առնենք. կ'յաջողուի քեզ նպատակիդ հասնել, այն ժամանակ  
 իհարկէ և ինձ և քեզ համար մեծ մխիթարութիւն և ուրա-  
 խութիւն կ'լինի: Շատ բան որ այժմ դեռ ևս ծածկուած է  
 ապագայի քոյն տակ—կարճ միջոցում կ'բացուի: Ճանապարհ  
 ընկի՛ր, ապահովի՛ր քեզ փողով: Վաղը մենք աւելի մանրամասն  
 կ'խօսենք: Մնաս բարև:

Ռ Օ Գ. Ո՞րտեղ մենք կ'տեսնուենք վաղը:

Ե Ա Գ Օ. Արի՛ ինձ մօտ:

Ռ Օ Գ. Անպատճառ կ'գամ:

Ե Ա Գ Օ. Դէհ, մնաս բարև, բայց լաւ նայի՛ր, Ռօդուիգօ—

Ռ Օ Գ. Ի՞նչէ—

Ե Ա Գ Օ. Խեղդուելու վերայ ոչ մի խօսք—լսո՛ւմես:

Ռ Օ Գ. Ի՛նչ, անցա՛ւ. գնումեմ դրա գնեմ ողջ երկիրներու:

Ե Ա Գ Օ. Եւ շատ լաւ կանես. լքցրո՛ւ քսակդ որքան կա-  
 րելի է շատ: (Ռօդուիգօն դուրս է գնում): Ահա՛ միշտ այդպէս  
 եմ իմ կողմն քաշում յիմարներին. այդպիսի շատախօսների

հետ միայն զուարճութեան համար ժամանակ կորցնելը— կ'ըշա-  
 նակէր արտաւորել եւմ անձնաւորութիւնս: Մաւրին ես ատում  
 եմ. ասումեն թէ նա կցորդ է եղել իմ ամուսնական առա-  
 քաստին. շատ կարելի է և այդ ցնորք է, բայց այդպիսի դէպ-  
 քերում ևս ես այնպէս կ'զործեմ, իբրև ճշմարիտ լինէր: Նա  
 ինձ վերայ մեծ վատահուծիւն ունի. դորանով շատ հեշտ է  
 նպատակիս հասնել: Կասսիօն գեղեցիկ է— ի՞նչ, եթէ նորան  
 խելքից հաննամ և միւսնոյն ժամանակ միասին կատարեմ մտա-  
 դրութիւնս: Այո՛, դա շատ սրամիտ խորամանկութիւն կ'լինի:  
 Մտածե՛նք, ինչպէս անենք: Մի քանի ժամանակից յետոյ  
 կասկած ձգենք Մաւրի սիրտը, թէ Կասսիօն շատ բարեկամ է իւր  
 կնոջ հետ: Կասսիօն կարծես ստեղծուած է միայն նախանձ 1)  
 գրգռելու և կանանց շողքորթելու համար: Իսկ Մաւրը այն-  
 քան պարզամիտ է և հաւատացող, որ ամէն մի իրա սիրտը  
 թափանցող, կասկած ձգող մարդուն՝ ազնիւ է համարում:  
 նորան այնքան հեշտ է եղէզնի պէս այս կողմ այն կողմ թեքել,  
 որքան և աւանակներին: Այդպէս է, այդպէս. դործը սկսուել է.  
 զժնխք և խաւարը լոյս կ'հանեն այդ հրեշաւոր ծնունդը:

1) Անգ. jealousy, Ֆրանսերէն, la jalousie Ռուս. ревность:  
 Ուրան աշխատեցայ չ'զոտայ հայերէնում մի բառ, սը բուն նշանա-  
 կութեանը յարմար լինէր. խորենացին և Նիղշէն մականք են զործածել, այդ  
 միւսնոյն բառը ես էլ կամեցայ զործ ածել. բայց աչքի առաջունենալով,  
 որ մեծամասնութիւնը չի հասկանալ թարգմանեցի նախանձ ինչպէս զործ են  
 դրել և ուրեշները:

### ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵՐՈՒՄ:

#### ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ:

#### Ծովեզրեա քաղաք Ախպրոս կղզու վերայ:

Ներսէն հօտում ՄՕՆՏԱՆՕՆ և ԵՐԿՐՈՒ ՍՊԱՀՆԵՐ.

Մ Օ Ն Տ. Հրուանդանից ոչինչ չի՞ երևում:  
 1 Ս Պ. Ոչինչ, սաստիկ ծփումեն ալիքները, իսկ նրանց և  
 երկնքի մէջ ոչ մի առազաստ չի երևում:

Մ Օ Ն Տ. Սաստիկ փշումէր քամին ցամաքի վերայ. երբէք  
 այնպէս խստութեամբ նա չի դղրդել հիմքից բերդերը: Եթէ  
 այնպէս կատաղի է և ծովի վերայ տարերքի ամբողջ լեռներին  
 չի դիմանալ ոչ մի նաւի կաղնեայ կողերը. բայց այն ի՞նչ ձայն է:

2 Ս Պ. Թէ տաճկական նաւատորմիցը ցրուած է:  
 Այդ բանում համոզուելու համար բաւական է միայն զուրս  
 գալ փրփրացող ափը. կատաղի յորձանքը հասնումէ ամպերին.  
 նա որպէս խաղալիք բարձրացնումէ ժայռերին մինչև երկինք  
 և լափումէ ջրով համաստեղեան արջին կարծես կամենալով

խեղդել յաւիտենական անշարժ բեւեռի պահպաններին: Նրբէք դեռ չեմ տեսած ծովը այդպիսի սարսափելի դրութեան մէջ:

Մ Օ Ն Տ. Լ՛յո՛, եթէ տաճկական նաւատորմիդ պաշարս պարուած չ'լինի մի որեւիցէ նաւահանգստում՝ կորած է. անկարելի է դիմադրել այդպիսի ալէկոծութեան, փոթորկի:

Ներսէ Գրեհոր ԵՐՐՈՐԻ ՍՊԱՀ

3 Ս Պ. Լ՛ո՛ւր, լ՛ո՛ւր, սինիօրներ, պատերազմը վերջացաւ: Կատաղի փոթորիկը այնպէս հարուած տուաւ թուրքերին, որ նրանք փկամայ իւրեանց ձեռնարկութիւնը թողին: Վենեակի նաւերից մէկը տեսաւ նաւատորմի մեծ մասի կորուստը:

Մ Օ Ն Տ. Էլ ճշմարիտ է այդ:

3 Ս Պ. Նաւը, որ պատկանումէ Վերոնցիներին, այս րոպէիս մտաւ նաւահանգիստ, և անյաղթելի Օսկէլլօ լէյաէնանտ Միքայէլ Կասսիօն արդէն ափի վերայ է: Իսկ ինքը Մաւրը, որ այստեղի կառավարիչ է նշանակուած, դեռ ևս ծովը վերայ է:

Մ Օ Ն Տ. Բոլոր հոգուովս ուրախ եմ այդ կարգադրութեան համար. նա ամէն կերպով արժանի է այդ պաշտօնին:

3 Ս Պ. Բայց Կասսիօն թէև թուրքերի կորստեան համբաւով մեզ ուրախացրեց, սակայն մեծ վրդովմունքի մէջ է. նա աղօթումէ Մաւրի համար, որից կատաղի փոթորիկը իրան խլեց:

Մ Օ Ն Տ. Թո՛ղ պահպանեն նորան աստուածները, ես ծառայելեմ նորան. նա կատարեալ զօրապետ է: Գնանք նաւահանգիստ, նայե՛նք մօտեցող նաւին, որոնք աչքերով Մաւրին, հեռու այնտեղ՝ ուր այլքները կռվումեն երկնքի հետ:

3 Ս Պ. Այո՛ գնանք. այժմ ամեն րոպէ պէտք է սպասել նորանոր հարուածների:

Ներսէ Գրեհոր ԿԱՍՍԻՕՆ

Կ Ա Ս. Շնորհակալութիւն այս պատերազմական կզգուքաջերին, Մաւրի արժանաւորութիւնները ճանաչելու համար: Ո՛հ թո՛ղ պաշտպանի նորան բարի երկինքը սպաննացող տարրերից: Ես յետ մղուեցայ ամենասուկայի րոպէին:

Մ Օ Ն Տ. Լ՛մո՛ւր է նորա նաւը:

Կ Ա Ս. Նաւը ամուր է, ղէկավարը փորձուած և իւր գործին հմուտ. ուստի և յոյս դեռ չեմ կորել, ընդհակառակը սպասումեմ շուտափոյթ ազատութեան: (Բէ՛ի էպիտի լալո՛ւէս աշաղհներ. նա՛ւ նա՛ւ)

Ներսէ Գրեհոր ԶՈՐՈՐԻ ՍՊԱՀ

Կ Ա Ս. Այդ ի՞նչ պղտկակներ են:

4 Ս Պ. Քաղաքը բոլորովին դարդակուել է, այն ինչ ափին կանգնած է ամբոխը և աղաղակում: Նա՛ւ, նա՛ւ:

Կ Ա Ս. Նախագգացումս յայտնումէ թէ իշխանի նաւն է: (Թարսնուի չոյնէր):

2 Ս Պ. Ողջունումեն նաւին: Գոնէ երևումէ բարեկամական է:

Կ Ա Ս. Խնդրեմ սինիօ՛ր, իմացէք ո՞վ է եկողը և իսկոյն մեզ իմաց տուէք:

2 Ս Պ. Ե՛յս րոպէիս. (դա՛ւր է գո՛ւմ):

Մ Օ Ն Տ. Ե՛սացէք պսակուած է մեր կառավարիչը:

Կ Ա Ս. Որքան կարելի է յաջողակ—այնպիսի կնոջ վերայ, որ արդարացնումէ ամենայն մի հիանալի նկարագրութիւն, ամենայն մի չափազանցութեան հասցրած համբաւ, որ կ'զերազանցի ամենագեղեցիկ գովումած թաշունին, որովհետև կատարեալ զեղեկութեան ամենայն արժանաւորութիւնները ունի:

ԵՐԿՐՈՐԴ ՍՊԱՆ ՎԵՐԿՐՈՒՄՆԵՐ:

Հը ի՞նչ կայ, ո՞վ է:

Չ Ս Պ. Երգո անունով մի մարդ—կառավարչի պարուչիկը:

Կ Ա Ս. Ո՛հ, ի՞նչ շուա և յաջողութեամբ: Նոյն իսկ փոթորիկը, կատաղի ալիքները, խիստ քամիները, խուժերը և ծանծաղուաները—նաևերի այդ յանդուգն ծածկուած թշնամիքը, կարծես զմայլելով գեղեցկութիւնից, փոխել են իւրեանց մահաբեր բնաւորութիւնը, տեղի տալով յաւերժահարսն Դէզդէմոն նային յաջողութեամբ այստեղ հասնելուն:

Մ Օ Ն Տ. Ո՞վ է այդ Դէզդէմոնան:

Կ Ա Ս. Նա, որի վերայ այս բուպէիս խօսումէի, մեր քաջ հրամանատարի հրամայողը: Նա նորան յանձնել էր քաջ Եագօին, որը մեր սպասածից մինչև անգամ մի շարաթ առաջ եկաւ: Ո՛հ, ամենակարող Իւպիտէր, պահպանի՛ր Օտէլլօին, ուռցրո՛ւ նորա նաւի առագաստները քո հզօր շնչովդ, տօ՛ւր կարողութիւն երջանկացնելու այս նաւահանդիստը իւր հպարտ նաւով, հանդարտեցնելու իւր վրդովմունքը Դէզդէմոնայի գրկախառնութեան մէջ, կենդանացնելու մեր թմրած հոգիքը նոր բոցով, խաղաղացնելու ողջ Կիպրոսը.—Օ՛, նայեցէ՛ք:

Նէր- էն հոն-ճ ԳԼԶԳԼՄՈՆԱՆ, ԷՄԻԼԵԱՆ, ԵԱԳՕՆ, ՌՕԴՌԻԳՕՆ  
և ՀԵՏԵԻՈՐԴՆԵՐ:

Նաւի գանձը արդէն ափի վրա է: Չոքեցէ՛ք նորա առաջ կիպրիացիներ: Այջունումենք ձեզ, սինիօրա, Աստուծոյ օրհնութիւնը ձեզ վերայ լինի:

Գ Է Զ Գ. Ենորհակալ եմ, աղիւ Կասաիօ: Ի՞նչ լուր ունէք ամ.ւսնուցս:

Կ Ա Ս. Նա դեռ չե եկել, միայն դիտեմ որ առողջ է և շուտով այստեղ կ'ընի:

Գ Է Զ Գ. Ենումենայնիւ վախենումեմ.—Ի՞նչպէս բաժանուեցաք միմիանցից:

Կ Ա Ս. Ելքները սոսկալի կռիւր երկնքի հետ մեզ իրարից բաժանեց: (Ի՛նչ էտեից շուտ էն աղաղակներ. Նա- նա-ն:) Լսումէ՞ք նաւ (Ներսիսի ջայներ):

Չ Ս Պ. Եհա ողջունումէ միջնաբերդին—այդ էլ բարեկամական է:

Կ Ա Ս. Իմացէք շուտով, ո՞վ է եկել: (Սպանելից Դէլլ դորոն է գնում) Բարե պարուչիկ. (Եմիլիանոն) բարե սինիօրա՛ (համբուրելով նորոն) Մի՛ բարկանար Եագօ. այսպիսի յանդգնութեանս համար, մեր երկրում այդ թոյլ է տրվում ինչպէս մի անկեղծ քաղաքավարութիւն:

Ե Ա Գ Օ. Ես կ'ցանկանայի, սինիօ՛ր, որ նա ձեզ իւր շըրթունքներով այնպէս պատուէր, ինչպէս ինձ լեզուով, որովհետեւ շուտով կրճանձրանայիք:

Գ Է Զ Գ. Ներեցէ՛ք, նա այնքան շատախօս չէ:

Ե Ա Գ Օ. Օ, անասելի շատախօս...ամենայն անգամ երբ պատրաստվում եմ քնելու այդ բանում համոզվում եմ Ձեր ներկայութեամբ այդ ուրիշ բան է, լեզուն փորումն է պահում և միայն մտքումը ինձ հայհոյումէ:

Է Մ Ի Լ. Չեմ իմանում, ինչպիսի սիրտ ունիս դու որ այդ ասումես:

Ե Ա Գ Օ. Բաւական է, բաւական ձեզ լու եմ ճանաչում: Դուք տանից դուրս պատկերներ էք. ննջարաններում և հիւրանոցներում կախարդող զանգակներ, վայրենի կատուններ խոհանոցներում, սրբուհիներ երբ անպատվումէք մէկին, սատանաներ երբ անպատվումեն ձեզ, հանաքչիներ տանախնութեան միջոցին և տիկիւններ անկողնոյ մէջ:

Գ Է Զ Գ. Եմօ թ ձեզ համար, որ այդպիսի զըպարտութիւններ էք անում:

ԵԱԳՕ. Աս բոլորովն չեմ զըզպարտում, այդ բոլորը կատարեալ ճշմարտութիւն է: Դուք վեր էք կենում միայն զբանքի, պառկումէք միայն աշխատելու համար:

ԵՄԻԼ. Եթէ այդպէս է, էլ ինձ վերայ ոչ մի գովասանական բան չգրես:

ԵԱԳՕ. Ետա լաւ:

ԳԵՁԴ. Բայց ի՞նչ կասէիք եթէ ես ձեզ մի գովասանական նամակ գրել տայի:

ԵԱԳՕ. Ո՛չ, զեղեցիկ սինիորա, ազատեցէք ինձ այդ գրութիւնից, ես միայն չարախօսել կարող եմ:

ԳԵՁԴ. Փորձեցէք չարախօսել. բայց մնորդ էք ուղարկել նաւահասնգիստ:

ԵԱԳՕ. Ինչպէս չէ, ուղարկել ենք, սինիորա:

ԳԵՁԴ. Ետա տխուր եմ, բայց կաշխատեմ ինձ խաբել կեղծ ուրախութեամբ: Դէ՛հ, ի՞նչ կասէք:

ԵԱԳՕ. Որքան մտածում եմ կանանց վերայ, այնքան իմ ուղեղս այսպիսի եզրակացութեան է հասնում. եզրակացութեան, որից բաժանուելու համար պէտքէ ուղեղս էլ զըլ-խիցս հանեմ. ահա՛ թէ ինչ. եթէ կինը խելօք է և զեղեցիկ՝ խելօքութիւնը նորան օգուտ կտայ, խկ զեղեցիկութիւնը վնաս:

ԳԵՁԴ. Ետա լաւ. խկ եթէ ազեղ է բայց խելօք:

ԵԱԳՕ. Տղեղ և խելօք — այդպիսին կարող է զեղեցիկ ամուսին գտնել:

ԳԵՁԴ. Այնքան հեշտ չէ որքան կարծումես:

ԵՄԻԼ. Իսկ եթէ յիմար է բայց զեղեցիկ:

ԵԱԳՕ. Ը՛հ այդպիսին թշուառ գաւակներ կ'պարաստէ:

ԳԵՁԴ. Այդ բոլորը հին անմիտ զրոյցներ են, որոնց յիմարները իւրեանց զուարճութեան համար մտածել են: Բայց

ի՞նչ հեգնական գովասանութիւն կ'ապրէք տղեղին և միևնոյն ժամանակ յիմարին:

ԵԱԳՕ. Մի՞թէ չկայ այնպիսի տղեղ և յիմար կին, որ իրան գեղեցիկ և միևնոյն ժամանակ խելօք ձևացնէր:

ԳԵՁԴ. Ի՞նչ անիմաստ խօսքեր. վատին դուք աւելի գովասանութեան արժանացրիք. Ինչպէ՞ն կ'զովէիք այն կնոջ որ արդարև արժանի է ամենայն գովասանքի, բայց իւր բոլոր արժանաւորութեամբ էլ չարախօսութեանց ենթակայ է լինում:

ԵԱԳՕ. Կին, որ գեղեցիկ է և ոչ սնապարծ, խօսելու շնորհք ունի և չէ շատախօս, հարուստ է բայց ոչ շուայլ, որ բանականութեամբ խելջրումէ կրճքում իւր ցանկութիւնները, որ բարկութեան միջոցին անգամ տանում է և մոռանում վերադարձը, այնքան խելօք որ վրէժ առնելու համար ոչ մի բռնութեան չէ դիմում, որ բոլոր մտածմունքները իւր մէջ է պահում և արհամարհանքով նայում է իրան հեռեղ գիշերաշըրժիկներին, այդ՝ այդպիսի կին, եթէ միայն կայ, պէտք կ'գայ:

ԳԵՁԴ. Ի՞նչ:

ԵԱԳՕ. Յիմարներին բաւականութիւն և ցանկացողին գարեջուր տալու համար:

ԳԵՁԴ. Ո՛հ, ինչ անմիտ վերջարանութիւն: Նորանից ոչինչ չստիճորես, Եմիլա՛, թէև քո ամուսինդ է: Ասացէ՛ք, Կասսիօ՛, կարելի՞ է այդպէս սնամօթ, անխղճմտանք լինել:

ԿԱՍ. Ե՛ս պարզ կերպով ասումէ այն՝ ինչ մտածումէ, սինիորա՛. ես հաւատացածեմ որ Եագոն իւր պատերազմական քաջութեամբ աւելի շուտ կարող է ձեր համակրութիւնը գրաւել քան հասկացողութեամբ. (խօսելով հետանում է Դեղրէմոնայի հետ թէ կողմէ):

ԵԱԳՕ. (Ինչն իրան) Ահա՛ նա բռնումէ նորա ձեռքը — հիա-

նայի է: Փսիսացէք, փսիսացէք—ինձ համար այդ օտարոտայնն էլ բաւական է կաստիոյի նման մեծ ճանճ որսալու համար: Այո՛ ժպտի՛ր.—հէնց այդ քաղաքավարական ձևերովդ քեզ կ'բռնեմ: Այդ ժպտաներդ կ'զրկեն քեզ լէյտէնանութիւնից, սպասի՛ր... (Քողի շայնէր Բեմէ Էպիսկոպոս) Մաւրն է, նորա փողի ձայնը ճանաչում եմ:

Կ Ա Ս. Արդարեւ նա է:

Դ Է Ջ Դ. Ետպե՛նք նորա առաջը դուրս գալու:

Կ Ա Ս. Բայց ահա՛

Ներսէս Իրանձ օՏԵԼԼՕՆ ՀԵՏԵԻՈՐԴՆԵՐՈՎ:

Օ Տ Ե Լ. Ո՛հ, սիրուն պատերազմոյ:

Դ Է Ջ Դ. Սիրելի՛ Օտէլլօ:

Օ Տ Ե Լ. Այնքան զարմացած եմ, որքան և հիացած՝ քեզ այստեղ գտնելու համար: Ո՛հ երջանկութեանս. եթէ ամենայն փոթորկին յաջորդէր այդպիսի խաղաղութիւն—այն ժամանակ թո՛ղ կատաղի քամիները շառաչէին մինչև մահուան հասնելս, թո՛ղ նաւերը բարձրանային Օլիմպի նման բարձր ջրէ լեւո՛ւների վերայ և իջնէին անդունդները խո՛ր ինչպէս դժոխք: Եթէ մահը այժմ վրա հասնէր ինձ՝ դա կ'լինէր ամենամեծ բողբոջութիւն, որովհետև վախենում եմ որ այդպիսի երջանկութիւն անորոշ ապագայում չի գտնեմ:

Դ Է Ջ Դ. Օ՛, ո՛չ. օրհնի՛ր Աստուած որ և մեր սէրը և բողբոջութիւնը օր աւուր աւելի ևս աճէր:

Օ Տ Ե Լ. Ա՛մէն, երկնքի բարի զօրութիւններ: Ես չեմ կարող խօսքով յայտնել ողջ իմ երջանկութիւնս—ահա նա, այստեղ է այստեղ, մեծ շատ մեծ ուրախութիւն: (Համբարելով նորան) Այո՛ այս՝ կ'լինի յախտեան մեր սրտերի միակ բացատրութիւնը:

Ե Ա Գ Օ. (Ինչո՛ւ երեսն). Այո՛, այժմ դուք շատ սիրով էք,

բայց երդվում եմ որ դա կ'լինի և ձեր թշուառութիւնը:

Օ Տ Ե Լ. Գն նք ամրոց: Ուրախացէք, աղնիւ բարեկամներս, պատերազմը վերջացաւ. թուրքերը փոթորկին զո՛հ գնացին: Ի՞նչպէս են կառավարվում իմ հին ծանօթները: (Դէպքէ՛մնային) Քեզ, սիրելիս, այստեղ ուրախութեամբ կընդունեն, ինձ առաջ շատ էին համակրում: ձմարի՛տ, բողբոջութիւնից և ուրախութիւնից չ'գիտեմ ի՛նչ եմ խօսում: Նեղութիւն քաշի՛ր, բարի Եագօ, դնա՛ նաւահանգիստ, վերցրո՛ւ իմ ծանապարհօրդական շորերս, բայց չ'մոռանաս և նաւավարին ամրոցը բերելու: Նա քաջ մարդ է, մեծ յարգանքի է արժան: Գնո՛ւք, Դէպքէ՛մնա, կրկին անգամ ողջունում եմ քեզ Վիպրոսի վերայ: (Դուրս է գնում Դէպքէ՛մնայի և Գեորգիոսի հետ)

Ե Ա Գ Օ. (Ծանօնելից Դէլին) Գնա՛ նաւահանգիստ և սպասի՛ր ինձ այնտեղ: Հ'ր Ռոյալթո, եթէ քեզ մօտ բաւականի քաջութիւն կայ լսի՛ր ինձ, ասում են որ սէրը ազնուացնում է և այնպիսի մարդկանց, որոնց բնութիւնը դորանում չզկել է: Լէյտէնանա՛ր այս գիշեր պետք է հսկի ամրոցի պահպանութեան: Բայց նախ դեռ պետք է ասեմ, որ Դէպքէ՛մնան բոլորովին սիրահարուած է նորա վերայ:

Ռ Օ Գ. Երբն վերայ, այդ անկարելի է:

Ե Ա Գ Օ. Սա...լսի՛ր, ես քեզ կ'բացատրեմ: Լա՛ւ իմացիր, որ նա սիրեց Մաւրին միայն այն սնապարծութեանց և անհնարին առասպելաբանութեաց համար, որոնցով նա լքցրեց նորա գլուխը: Մի՞ թէ կարծում ես թէ շատախօսութեան համար միշտ կ'սիրի նորան, մի՛ կարծիր: Դէպքէ՛մնայի աչքերին գեղեցիկ դէմք է հարկաւոր և ինչ բաւականութիւն պէտք է զգայ Մաւրի սև, կոպիտ զծագրութիւնը տեսնելով: Նրբ արիւնը բաւականութիւն ստանալուց յետոյ մեղմանում է, նորից բորբոքելու, նորից նորա մէջ բաւականութեան ծարաւ զարթնեցնելու համար անհրաժեշտ է գրաւիչ սիրուն դէմք, մատաղ տա-

բիք, ճարպիկութիւն, սէր, բոլորը մի խօսքով ինչ պակաս է Մաւրին: Այս բոլոր անհրաժեշտութեանց պակասութիւնը կ'վերաւորի նորա քնքոյշ զգացմունքը, ցոյց կ'տայ թէ նա խաբուել է ընարութեան մէջ, առաջ կ'սկսի հառաչներ արձակել, յետոյ ձանձրոյթ կ'զգայ և վերջապէս զգուանք զէպի Մաւրը. ինքը բնութիւնը նորան այդպէս կ'հասցնի և կ'զըրզոի մի սրիշ բազր որոնելու իրա համար: Այժմ ընդունելով այդ—որ անկարելի է չ'ընդունել, որովհետեւ շտտ պարզ է—նիկ կարողէ այնպէս շուտ նորան դրաւել—եթէ ոչ Կասսիօն, այն քաղցրախօս խաբերան, որ սյնքան հմտութեամբ իւր բոլոր կեխատութիւնները և ցածութիւնները ծածկումէ նուրբ քաղաքավարութեամբ, աշխարհային ձևերով և գեղեցկութեամբ: Այո՛ բացի Կասսիօյից ոչ ոք: Նա խորամանկ է և ճարպիկ, կարողանումէ խորամանկութեամբ օգուտ քաղել պատահած զէպից, իրան այնպիսի արժանաւորութիւնների տէր ձեացնել, որոնցից իսկազէս ոչ մէկը չունի. սարսափելի ճարպիկ խաբերայ է: Դոցա հետ միացրու և այն, որ դեղեցիկ է, երիտասարդ, ամենայն յատկութեանց տէր, սատանայի նման սրամիտ:

Ռ 0 Դ. Չեմ հաւատում. Դէզդէմնան այնքան առաքինի է:

Ե Ա Գ 0. Կորի՛ր գլխիցս քո առաքինութեամբ. կարծեմ այն գինին էլ որ նա խմում է միևնոյն խաղողից է. եթէ նա առաքինի լինէր երբէք չէր սիրիլ Մաւրին: Առաքի՛նի—մի՞ թէ չ'տեսար ինչպէս հիանումէր Կասսիօյի ձեռքերից . . . չ'տեսնիր, ի՞նչ է:

Ռ 0 Դ. Տեսայ, բայց այդ քաղաքավարութիւն էր միայն:  
 Ե Ա Գ 0. Անառակութեան նշան է—երգվում եմ արևովս, դա սկիզբը, յառաջարանն է հեշտասիրութեան և մեղանչական մտածութեանց: Նոցա՛ շրթունքները այնքան մօտեցան իրար,

որ միմիանց շնչառութիւնները զգումէին: Մեղանչական մտքեր, Ռօզաիգօ: Փոխադարձութիւն արդէն երևեցաւ—շտտ չի քաշել և զլխաւոր ձգտումին, իսկական նպատակին, զուգաւորութեան կ'զիմեն: Թո՛յլ աուր ես քո աւաջնորդը լինեմ, ի զուր տեղը՝ քեզ Աննետից քարշ չ'տուի այտտեղ: Այս զիշեր դու էլ եղի՛ր պահապանների կարգում. . . ես կ'հոգամ որ նշանակեն. . . Կասսիօն քեզ չէ ճանաչում. ես մօտիկ կ'լինեմ: Աշխատի՛ր մի որևէիցէ բանով բարկացնել Կասսիօին, կամենաս բարձրաձայն խօսելով կամ նորա կարգադրութեանց վերայ ծիծաղելով—ի՛նչ որ էլ յարմար կ'լինի:

Ռ 0 Դ. Ելա:

Ե Ա Գ 0. Կասսիօն տաքարիւն և շուտ բորբոքուող է. կարելի է որ խփի անգամ քեզ, այ՛ հէնց այդ աստիճանին հասցնելու աշխատի՛ր, որովհետեւ գորանով ես Կիպրիացիներին այն աստիճանի կ'զրգուեմ, որ նրանք չեն հանդարտուիլ մինչև որ Կասսիօին իւր չափը ճանանչացնել չ'տան: Այդպիսի դրութեան նորան հասցնելով—առանց որի անկարելի է և յաջողութեան յոյս ունենալ—դու շտտ կ'կարձացնես քո ցանկութեանդ հասնելու ճանապարհը:

Ռ 0 Դ. Պատրաստ եմ եթէ միայն յարմար դէպք պատահի:

Ե Ա Գ 0. Անպատճառ կ'պատահի: Այժմ գնա՛ ամրոց. ես պէտք է իջնեմ նաւահանգիստ Մաւրի շորերի համար: Մնաս բարև:

Ռ 0 Դ. Յտեսութիւն (Դոսրս է գնոմ):

Ե Ա Գ 0. Թէ Կասսիօն սիրահարուած է նորա վերայ—այդ ճշմարիտ է, իսկ թէ և նա սիրահարուած է Կասսիօյի վերայ՝ այդ կարելի է, մինչև անգամ հաւանական: Մաւրը—չ'նայելով, որ ասումեմ նորան—ազնիւ, գեղեցիկ հօգու տէր է և հաստատ համոզուած եմ որ արժանաւոր ամուսին կ'լինի: Աերջապէս

ես էլ սիրու՞մե՞մ Դէզրէ՛մնային, բայց միայն ոչ թէ հեշտասիրու-  
 թիւնից, թէև այդ դուցէ չէ թե թեւացնում մեղքերս — ես նորան  
 սիրու՞մե՞մ վրէժխնդրութեան ծարաւով, որովհետև այն կաս-  
 կածը թէ հեշտասէր Մաւրը կցորդ է եղել անկողնոյս լափու՞մէ  
 սիրտս, ինչպէս թունաւոր մետաղ և երբէք նա չի հանդար-  
 տուիլ մինչև որ հաշիւս չ'վերջացնեմ նորա հետ — մինչև որ  
 նա իմ կնոջ փոխարէն իւր կնոջ չի վճարիլ: Իսկ թէ այդ չի  
 յաջողուիլ — կ'զարթեցնեմ գոնէ այնպիսի նախանձ, քէն, որի  
 առաջ բանականութիւնը չի դիմանալ: Գորա համար Վենետ-  
 կուհուն ես կաշխատեմ աւելի ևս մօտեցնել Կասսիօյին:  
 Իսկ Մաւրին կ'ստիպեմ շնորհակալ լինել ինձանից, սիրելի  
 վարձատրել իրան ամենամեծ աւանակը շինելու, հանդստու-  
 թիւնը խանգարելու և խելագարութեան հասցնելու համար:  
 (Խփելով շահաբին) Այս բոլորը այտուել է այտուել, բայց դեռ  
 խառնուած, դեռ ձևաւորած չէ — բայց և ի՞նչպէս կարող է  
 ձևաւորած լինել չ'իրագործուած:

**Ե Ր Կ Ր Ո Ր Դ Տ Ե Ս Ա Ր Ա Ն .**

**Փողոց:**

Նէրս էն Տոնո՛ւ՝ ՄՈՒՆԵՏԻԿ և ՄԵՐ ԲԱԶՄՈՒԹԻԻՆ ԺՈՂՈՎՐԴԻ:

Մ Ո Ւ Ն . Մեր քաջ և ազնիւ իշխան Օտէլլօն ցանկանաւ՞մէ  
 որ ճաճկական նաւատորմի հաստատ ոչնչանալուն համար՝  
 ողջ կղզու բնակիչները յայտնէին իրանց ուրախութիւնը ծա-  
 փահարութեամբ, խաղերով, զուարճութիւններով, ամէն մարդ  
 իւր ցանկութեան և ուզածի համեմատ: Բայց քանի որ բացի  
 զօրանից նա տօնումէ այժմ և իւր հարսանիքը, ուստի հրա-

մայեց յայտնելու թէ ամրոցի ողջ դահլիճ'ները բաց են և  
 ամէն մարդ կարող է խնջոյք կազմել այնտեղ այժմ հինգ  
 ժամից սկսած մինչև տասնու՞մէկը: Թո՛ղ երկինքը պահպանի  
 մեր Կիպրոս կղզուն և քաջ իշխան Օտէլլօին: (Իո-րս է գնո՛ւ՝):

**Ե Ր Ր Ո Ր Դ Տ Ե Ս Ա Ր Ա Ն .**

**Ամրոցի մի սենեակ.**

Նէրս էն Տոնո՛ւ՝ ՕՏԷԼԼՕՆ, ԴԵԶԴԵՄՈՆԱՆ, ԿԱՍՍԻՕՆ և ՀԵՏԵԻ-  
 ՈՐԳՆԵՐ:

Օ Տ Է Լ . Սիրելի Միքայէլ, այս գիշեր դուք պէ՛տք է  
 հսկէք պահպաններին. չ'մոռանաք որ և զուարճութեանց  
 չափ կայ, որից անցնելը ներելի չէ:

Կ Ա Ս . Ես արդէն կարևոր զգուշութիւնները յայտնել  
 իմ Նազօին, աւելի վստահանալու համար ինքս էլ կ'պտտեմ  
 բոլոր կայարանները:

Օ Տ Է Լ . Երգօն հաւատարիմ մարդ է: Բարի գիշեր, Մի-  
 քայէլ: Եկէք ինձ մօտ առաւօտը վաղ, ձեզ հետ խօսելիք  
 ունեմ: Գնա՛նք, սիրելիս, պարոքս կատարեցի, այժմ մնումէ օդ-  
 տուել նորա պտուղներով: Բաժաննիք սիրով այդ պտուղները:  
 Բարի գիշեր: (Իո-րս է գնո՛ւ՝ Դէզրէ՛մնայի և հետադարձելի հետ):

Նէրս է Տոնո՛ւ՝ ԵԱԳՕՆ

Կ Ա Ս . Ահ Նազօ՛, ի՞նչ յարմար ժամանակ եկար, ժամա-  
 նակ է մի անգամ պատելու:

Ե Ա Գ Օ . Ի՞նչ էք ասում, լէյտէնանտ, դեռ ժամի տասը

չկայ. գեներալը հեռացաւ մեզանից այդպէս շուտ միայն Դէզ-  
գէմոնայի սիրոյն համար: Բայց և ի՞նչպէս կարելի է մերադ-  
րել նորան, չէ՞ որ առաջի գիշերն է որ անց է կացնում նորա  
հետ, նորա՞ որ Եւպիտէրի համար անգամ համեղ պատառ  
կլինէր:

Կ Ա Ս. Գեղեցիկ կին:

Ե Ա Գ Օ. Մի խօսքով տեղովը կրակ:

Կ Ա Ս. Դժուար թէ գտնուի այնպիսի կայտառ և թարմ  
գեղեցիկութիւն:

Ե Ա Գ Օ. Իսկ աչքերը—ըզուի տեղ խօսումեն:

Կ Ա Ս. Աննաման և միւսնոյն ժամանակ որքան գրաւիչ:

Ե Ա Գ Օ. Բայց ձայնը—ճշմարիտն ասած սէր է խօսում:

Կ Ա Ս. Ո՛հ, որքան կախարհող է:

Ե Ա Գ Օ. Ողջ սրտով յաջողութիւն եմ ցանկանում նրանց  
անկողնուն. է՛հ բայց թողնե՛ք, գնա՛նք լէյտէնանտ, մեզ սպա-  
սումէ գինու տակառը, և մի խումբ կիպրիական քաջ երի-  
տասարդներին, որոնք և պատրաստ են սեւամորթ Օտէլլօի կենացը  
խմելու:

Կ Ա Ս. Ես էլ պատրաստ եմ, սիրելի Նագօ, բայց ոչ այժմ,  
գինին ինձ վերայ սաստիկ վատ է ազդում. կ'ցանկանայի որ  
ընդհանրութիւնը մի ուրիշ զուարճութեան միջոց որոնէր:

Ե Ա Գ Օ. Բայց դուք պէտք է բարեկամների խմբի մէջ  
լինէ՛ք: Մի բաժակ գինին նոցա սիրտը շահելու համար խմել,  
ի՞նչ մեծ բան է: Ես, եթէ կամենաք, ձեր տեղը կ'սման:

Կ Ա Ս. Այս երեկոյեան ես արդէն խմեցի մէկը ջրի հետ  
խառը, բայց չ'նայելով դորան ատենումես որքան ազդել է  
ինձ: Ուստի թոյլութիւնս հասկանալով չեմ կամենում կրկին  
փորձել:

Ե Ա Գ Օ. Է՛հ, բաւական է. ուրախութեան գիշեր է. խընդ-  
րողները բարեկամներ են:

Կ Ա Ս. Որտեղ են:

Ե Ա Գ Օ. Մերձակայ դահլիճում, խնդրեմ հրախրեցէ՛ք  
նորանց այստեղ:

Կ Ա Ս. Հրամայեցէ՛ք, բայց խոստովանումեմ որ դուր չէ  
զալիս ինձ: (Դուրս է գնում):

Ե Ա Գ Օ. Եթէ այն խմած բաժակ գինուն յաջողուի ինձ  
գոնէ մէկը ևս աւելացնել—այն ժամանակ Կասսիօն գեղեցիկ  
Դէզդէմոնայի շնիկից աւելի կ'ուռատէր և չար կ'գառնայ Յիմար  
Ռօգոլիգօն բոլորովին Դէզդէմոնայի սիրով կախարդուած՝ ամէն  
ասածս կատարումէ. մի քանի աշխոյժ հպարտ կիպրիացիների  
էլ իմ կողմն քաշեցի: Այժմ հարկաւոր է միայն Կասսիօյին  
այնտեղը հասցնել, որ այդ հարբածների մէջ մի որեւիցէ վե-  
րաւորական խօսք արտասանէր կղզու դէմ:— Բայց զալիս են.—  
Սպասած հետևանքներս իրագործվումեն—ազատութեամբ  
կ'լողայ նաևս, քամին և հոտանքը նորան յառաջ կ'մղեն:

ԿԱՍՍԻՕՆ վերադառնալէ ՄՕՆՏԱՆՕԻ և Ֆի Կասի ԿԻՊՐԻԱՑԻ-  
ՆԵՐԻ Գե.:

Կ Ա Ս. Երկինքը վկայ, որ արդէն կոնծել տուին ինձ:

Մ Օ Ն Տ. Ի՛չ, այդ ինչ ասելու բան է. մի բաժակ անգամ  
չէ՛ք խմել:

Ե Ա Գ Օ. Գինի (երգումէ):

Վերցրէ՛ք լի լի բաժակներ,

Հնչեցէ՛ք եղջայրարար—

Բարեկամ—զինուորներ

Կեանքը ժամ է մեզ համար.

Զինուորին պէտք է շատ շատ խմել:

Է՛յ, գինի, գինի տուէ՛ք. (Էլուրմէն գինի)

Կ Ա Ս. Ըրևս վկայ երևելի երգ է:

Ե Ա Գ Օ. Այդ երգը ես սովորել եմ Անգլիայում: Այնտեղ  
այն էն խմում. և ոչ թէ ձեր Գանիացիների, Գեր-  
մանացիների և հաստափոր Հոլլանդացիների նման— դէ՛հ խմիր,  
Կասսիօ. հետևենք Անգլիացիներին:

Կ Ա Ս. Մի՞թէ արդարև Անգլիացիք այդպէս վարժ են  
խմելում:

Ե Ա Գ Օ. Բա՛ ի՞նչպէս էիք կարծում: Անգլացին խմելու  
մինչև անգամ տեղիցը չէ շարժվում, այն ինչ Գանիացին էլ  
ոչ մեռած է ոչ կենդանի, Գերմանացին արդէն փռուած է  
սեղանի տակ, իսկ հաստափոր Հոլլանդացին փսխաղեղ խմած  
մարդու նման դուրս է թափում բերանից:

Կ Ա Ս. Մեր քաջ գեներալն կենացը:

Մ Օ Ն Տ. Խմումեմ, սիրելի լէյտենանտ:

Ե Ա Գ Օ. Ո՛հ, սքանչելի Անգլիա. (էրգր-մէ)

Ստեփան կայսր մի քաջ մարդ էր.

Կարեց վարտիկ վեց զրօշով. և ի՞նչ

Կասկածեցաւ թէ անպիտան

Գող գերձակը՝ զրօշ երեք զողացել էր:

Ողջ նորա կեանք էր փառքով լի,

Իսկ դու արժան պատիժների.

Զեղխութիւն է քանդում երկիր

Գու քո հին շոր, տէր իմ, հազիր: 1)

Գինի, գինի:

Կ Ա Ս. Այդ երգը աւելի լաւ է:

Ե Ա Գ Օ. Ամենա՞ք կրկնեմ:

Կ Ա Ս. Ո՛չ. անիրաւութիւն կ'լինի կրկնել տալը:— Սակայն

\* Այս տունը Շեկոպերը հանել է հին երգերից, որ Պէրսին սեղաւորել  
էր էւր Reliques of ancient poetry զբերում:

Աստուած ամէնիս նայումէ. այնպիսի հոգիք կան որոնք տեղ  
են գանում երկնքի արքայութեան մէջ, կան և այնպիսիները,  
որոնք թափանցել անգամ չեն կարողանում:

Ե Ա Գ Օ. ձյմարիտ է, բարի լէյտենանտ:

Կ Ա Ս. Իսկ ինչ վերաբերում է ինձ— առանց վերաւորելու  
գեներալն կամ ուրիշ պատիւը— յոյս ունեմ որ կ'թափանցեմ:

Ե Ա Գ Օ. Նայնպէս և ես:

Կ Ա Ս. Այո՛. բայց— եթէ թոյլ կ'տաք— երբէք ինձանից  
չուս. լէյտենանտը պէտք է պարուչիկից առաջ թափանցի:  
Բայց այդ թողնենք. դէպի գործ ուրեմն: Ների՛ր Աստուած մեր  
մեղքերը. — Չ'մոռձէք սակայն թէ ես հարբած եմ. ահա՛ իմ  
պարուչիկը, ահա՛ և իմ աջ ձեռը, ահա՛ և ձախը. — ես հար-  
բած չեմ, ոտիս վերայ ամուր եմ կանգնում, ամուր, ասումեմ  
ձեզ:

Ա Մ Ե Ն Ք Ը. Ես հիանալի:

Կ Ա Ս. Ուրեմն դուք իրաւունք չունեք կարծելու թէ ես  
հարբած եմ (Գաւրս է գրում):

Մ Օ Ն Տ. Հողարուրի վերայ, սինիօրներ, պէտք է պահա-  
պաններ դնել:

Ե Ա Գ Օ. Ի՞նչպէս է երևում մեր առաջ տուող սրտտոր:  
Բայց նա իւր պատերազմական քաջութեամբ կարող էր հա-  
ւասարուել Կեսարի հետ, մեծ զօրապետ կ'լինէր, եթէ միայն  
այդ թշուառ թուրութիւնը չունենար, որ բոլոր ընդունակու-  
թիւններին հողի հետ հաւասարեցնումէ, այդ պակասութիւնը  
ևս այնպէս զօրեղ է, ինչպէս ընդունակութիւնները: Վախե-  
նում եմ, որ մի օր այդ թուրութեամբ պակասեցնէր Սաէլլօի  
վտաահութիւնը իւր վերայ. այդ մեծ թշուառութիւն կ'լինէր  
կզզու համար:

Մ Օ Ն Տ. Բայց այդ դէպքերը շատ է պատահում նորա  
հետ:

Ե Ա Պ Օ. Առանց այդպիսի յառաջարանի նա չի անկողին մանուս և եթէ գինին չ'օրօրի նորա օրօրօցը, երբէք չի փակիլ աչքերը մինչև անգամ ամբողջ գիշերներ:

Մ Օ Ն Տ. Ուրեմն պէտք է նախադուշացնել գեներալին, կարելի է նա չ'գիտէ, բայց և կարելի է որ տեսնելով նորա լու յատկութիւնները իւր բարեսրտութեամբ չի ուզում տեսնել վատերը...

Ներսէս Ե Կրտսէ՛ս ՌՕԳՈՒԳՕՆ.

Ե Ա Պ Օ. (Կամայ Ռօքուֆօն) Ի՞նչու ես եկել շուտ հասիլ լէյտէնանտին (Ռօքուֆօն Կրտսէ՛ս Ե Գնուս):

Մ Օ Ն Տ. Ցաւալի է, շատ ցաւալի, որ ազնիւ Մարը լէյտէնանտութեան ծանր և կարևոր պաշտօնը հաւատաց այդպիսի զինեմու մարդուն: Ամենայն մի ազնիւ մարդու պարտականութիւնն է այդ նորան իմաց տալ:

Ե Ա Պ Օ. Երբէք ես յանձն չեմ առնել—մինչև անգամ եթէ ամբողջ Կիպրոսը ինձ տային: Ես շատ սիրումեմ Կասսիօին: Աստուած գիտէ թէ ինչեր չէի տայ եթէ նա այդ ատից ազատուէր:

Ռ Օ Գ. (Բէֆ Էփօն) Օգնութիւն, շօնութիւն—

Ռ Օ Գ. Այս ի՞նչ բան է, Լսումէ՞ք—

Ներսէս Ե Կրտսէ՛ս ԿՍՍՍԻՕՆ Կշելով ՌՕԳՈՒԳՕՆ

Կ Ա Ս. Անպիտան, անզգամ:

Մ Օ Ն Տ. Ի՞նչ է պատահել լէյտէնանտ:

Կ Ա Ս. Անպիտան— ինձ իմ պարտաւորութիւններս է յիշեցնում, այնպէս կ'իծեմ քեզ:

Մ Օ Ն Տ. Ի՛նձ ինձ ծեծել:

Կ Ա Ս. Դեռ խօսում ել ես, անօրէն. (Ծէծում է նայան):

Մ Օ Ն Տ. (Նորան պահելով) Խնդրումեմ ձեզանից սիրելի լէյտէնանտ, հանդարտուեցէք:

Կ Ա Ս. Թողէ՛ք ինձ, եթէ ոչ ծնոտս կ'փշրեմ:

Մ Օ Ն Տ. Դուք հարբած էք:

Կ Ա Ս. Հարբած (նորան հանում է լեզու և հաշտ):

Ե Ա Պ Օ. (Կամայ Ռօքուֆօն) Դէ՛հ վաղիւր, օգնութիւն կանչէ՛ր. նշան տո՛ւր, թող քնած ժողովուրդը զարթնի: (Ռօքուֆօն Կրտսէ՛ս): Ապասեցէ՛ք, լէյտէնանտ.— սինիօ՛ր Մօնտանօ.— լու պահպաններ են— (Չանգահարում է) Ո՞վ է այս զանգահարողը, կ'զարթեցնեն ողջ քաղաքը.— վերջապէս բուսական է լէյտէնանտ. դուք յաւիտեանս ձեր սնունը կ'խայտատակէք:

Ներսէս Ե Կրտսէ՛ս ՕՏԷԼԻՕՆ Մօնտանի Կէս

Օ Տ Է Լ. Այստեղ ի՞նչ է պատահել:

Մ Օ Ն Տ. Արիւնաքամ եմ լինում: մահացու կերպով վերաւորում եմ Բայց նա էլ չի սպրկւ:

Օ Տ Է Լ. Ապասեցէ՛ք, եթէ կեանքը ձեզ համար թանկ է:

Ե Ա Պ Օ. Ապասեցէ՛ք, սպասեցէ՛ք լէյտէնանտ.— սինիօ՛ր Մօնտանօ— պարօններ, մի՞թէ բոլորովին մոռացել էք ձեր կոչումը, պարտաւորութիւնը: Հանդարտուեցէ՛ք, հանդարտուեցէ՛ք. գեներալը հրամայում է ձեզ, հանդարտուեցէ՛ք. ամօթ է վերջապէս:

Օ Տ Է Լ. Ի՞նչ է նշանակում այս բոլորը. ի՞նչից ծագեցաւ ի՞նչ է թօ՛ւրք ենք, որ այսպիսի յիմարութիւններ ենք անում: Մողզները անգամ այդ չեն անիլ մի՛ արտատօրէք քրիստոնէութիւնը: Վերջացրէ՛ք այդ վայրենի կոխը: Զպակեցէ՛ք ձեզ. կանգնեցէ՛ք անշարժ, եթէ ոչ կեանքերդ կ'խաւարեցնեմ: Ընդհատեցէ՛ք այն սարսափելի զանգահարութիւնը.— ողջ կղզին

կ'վճռովվի:—Ասացէք ի՞նչ բանից յառաջ եկաւ: Ազնիւ Եա-  
զօ՛, դու մեռելի պէս գունաթափուել ես. ասա՛ ո՞վ սկսեց. զի-  
տեմ թէ դու ինչպէս ինձ հաւատարիմ ես, ուստի պա-  
հանջուամբ որ բոլորը յայտնես:

Ե Ա Գ Օ. Ես ոչինչ չ'զիտեմ.—մի ըստէ չկայ, որ ամէնքը  
սիրով էին, այնպէս խաղաղութեամբ խօսումէին, ինչպէս երի-  
տասարդները քնից առաջ: Բայց յանկարծ, կարծես թէ մի  
չար դէ շփոթեց նրանց միտքը.—թրերը մերկացրին և մե-  
նամարտութիւն: Ես մտածել անգամ չեմ կարողանում թէ  
ի՞նչից ծագեցաւ այդ կռիւր: Այս ի՞նչու մի որեւիցէ ահեղ  
պատերազմում չ'կոտորուեցին ինձ այստեղ բերող ուները, որ  
այժմ ականատես չ'լինէի այդ տխուր անցքին:

Օ Տ Է Լ. Ի՞նչ պատահեցաւ, Միքայէլը որ այդ աստիճան  
մոռացաք ձեզ:

Կ Ա Ս. Ո՛հ, ներեցէք զեներալ—ոչինչ չեմ կարող ասել:

Օ Տ Է Լ. Ազնիւ Մօնտանօ, դուք միշտ բարեսիրտ էք  
եղել երիտասարդութեան միջոցին. ձեր համբաւը, անշահասէր  
վարմունքը ամէնի խօսակցութեան առարկայ են եղել. ձեզ  
գովումէին մինչև անգամ ամենախիստ դատաւորները: Ի՞նչը  
ստիպեց արհամարհել ընդհանուր կարծիքը, փոխել բարի անունը  
կէս գիշերային կատաղի ածականով, պատասխանեցէ՛ք:

Մ Օ Ն Տ. Քաջ Օտէլլօ, վերաւորուած եմ, չեմ կարող ցա-  
ւից խօսել, ձեր պարու չեկ Եագօն կ'պատմի բոլորը. բայց այս-  
քանը կարող եմ ասել, որ այս գիշեր—եթէ ինքնապաշտպանու-  
թիւնը մեղք չէ և կատաղի յարձակման դէմ առնելը յանցանք՝  
ոչինչ վատ խօսք չեմ ասած, ոչինչ յանցանք չեմ գործած:

Օ Տ Է Լ. Երկինքը վկայ որ արիւնը գլխովս է տալիս և  
կիրքը ճնշելով առողջ դատողութեանս՝ կարող է առաջնորդ  
դառնալ վարմունքիս: Մի շարժուածքս կամ ձեռք բարձրաց-  
նելս կարող է ձեզանից ընտիրի կեանքի թելը կտրել: Բացատ-

րեցէ՛ք ինչից ծագեցաւ այդ վէճը. ո՞վ սկսեց, յաւիտեանս  
կ'հեռացնեմ ինձանից յանցաւորին եթէ մինչև անգամ մանկու-  
թեանս ընկերը լինէր: Ի՞նչ, մի՞թէ ներելի է մոռանալ որ  
Էկզզին դեռ ևս պատերազմական դիրքի մէջ է գտնվում, որ  
ժողովուրդը դեռ ևս երկիւղի և վտանգի մէջ է, ներելի՞ է  
այսպիսի ժամանակ կռիւ սկսել, աղաղակներ բարձրացնել, այն  
էլ գիշերը ամրոցում, քաղաքի կենդրոնում:—Սարսափելի է.—  
խօսի՛ր, Եագօ՛, ո՞վ սկսեց:

Մ Օ Ն Տ. Եթէ համակրութիւնից կամ բարեկամութիւնից  
զրդուած՝ մի որեւիցէ բան աւելացնես կամ պակասեցնես—զին-  
ուօր չես:

Ե Ա Գ Օ. Կենդանի կենդանի ինձ մի՛ սպանէք: Աւելի  
ուրախ կ'լինէի զրկուէի լեղուիցս, քան թէ մի որեւիցէ խօսք  
ասէի ՚ի վնաս Միքայէլ Կասսիօյի: Ելել լաւ է որ այս դէպքում—  
համոզուած եմ—ճշմարտութիւնը չի վնասիլ նորան ոչնչով:  
Ահա թէ ինչպէս պատահեց, զեներալ: Այստեղ ես խօսումէի  
Մօնտանօի հետ, յանկարծ ներս է վազում մի մարդ, բարձր  
ձայնով օգնութիւն գոռալով և նորա ետեւից Կասսիօն սպառ-  
նալով մերկացրած թրով: Սինիօր Մօնտանօն իսկոյն ընկաւ  
Կասսիօյի վերայ խնդրելով որ զսպի իրան. իսկ ես վախենալով որ  
աղաղակից քաղաքը չ'վճռովվի—որ և յետոյ կատարուեց, վազեցի  
մոռնետիկի ետեւից, բայց նորա ոտները իմիցս աւելի թեթեւ  
էին. չ'հասայ. յետ դարձայ, որովհետեւ արդէն ականջիս հաս-  
նումէին թրերի հարուածները և Կասսիօյի բարձր հայհոյանք-  
ները. հայհոյանքներ, որ մինչև այժմ նորա բերանից չէի լսել:  
Վերադառնալով—բայց պէտքէ ասած կրակի պէս հասայ—զը-  
տայ նրանց կռուի հէնց այն կատաղի դրութեան մէջ, որին  
դուք ևս ներկայ եղաք: Ել ոչինչ չ'զիտեմ: Ի՞նչ պէտք է արած.  
մարդս միշտ մարդ է և լաւերը երբեմն իրանց մոռանումեն:  
Կարելի է Կասսիօն մի որեւիցէ խօսքով վերաւորած լինի

սինիօրին—բայց ախր կատարութեան մէջ չեն խնայում և իւրեանց սրտակից բարեկամներին և հաւատացած եղէք, որ և Կասսիօն այնքան վերաւորուած էր այն անձանօթ մարդուց, որ բարկութիւնը չէր կարող զսպել:—

ՕՏԷԼ. Տեսնու՞մե՞մ, Եագօ, որ դու քո բարեսրտութեամբ և բարեկամասիրութեամբ նուազեցնու՞մես Կասսիօյի յանցանքը:— Կասսիօ, ես սիրումե՞մ ձեզ. բայց այսօրուանից դուք էլ իմ լէյտէնանտս չէք:

Եւրո է հոս—ՏԵՂԵՄՈՆԱՆ ՀԵՏԵՐՈՐՆԵՐՈՎ:

Տեսնո՞ւմէք որ սիրուհուս էլ զարթեցրիք: Քեզանով թող ամէ՛քը խրատուին:

ԴԵՁԿ. Ի՞նչ է պատահել, ընկերս:

ՕՏԷԼ. Ա՛յնչ—ամէն բան կարգի ընկաւ, սիրելիս: Գնանք քնելու. (Մտախօսելով) Իսկ ինչ վերաբերումէ ձեր վերքերին, ես կ'խնամեմ, սինիօր: Տարէ՛ք նորան տուն. (Մտախօսելով) Դէ՛ս: Եագօ, պտտի՛ր ողջ քաղաքը և հանդարտեցրու նրանց, որոնք վրդովվուել են այս ախուր անցքից:—Գնանք, Վեզբէմանա՛. զինուորի քունը շատ անգամ ընդհատվումէ կատաղի վէճերի աղաղակներից: (Դուրս էն գնում ամէնքը բայց Կասսիօյից եւ Եագօյից)

Ե Ա Գ Օ. Վերաւորում՞ ձ էք, լէյտէնանտ:

Կ Ա Ս. Մահացու կերպով:

Ե Ա Գ Օ. Պահպանի՛ր Աստուած:

Կ Ա Ս. Պատիւս, բարի անունս:—Ո՛հ, ես կորցրի իմ բարի անունս, ոչնչացաւ—անձիս անմահ մասը—մնաց միայն անբզգայ մարմինս: Պատիւս, յարգս, Եագօ՛, բարի անունս:

Ե Ա Գ Օ. Իսկ ես, երգվումե՞մ որ կարծումէի թէ ձեր մարմնի վերայ ստացած որ և իցէ վերքը աւելի զգալի կ'լինի

ամենայն մի պատուի վերաւորանքից: Բարի անունը—յիմար և սարսափելի սուտ զրպարտութիւն է. նա շատ անգամ և դարդակ բանով մարդ ստանումէ և դարձակ բանով կորցնում: Դուք բողբոջվէ՛ն. չէք կորցրել ձեր բարի անունը. միայն եթէ ինքներբք ձեզ չըհամոզէք թէ կորցրել էք նորան: Մխիթարուեցէք, դեռ հնարք կայ գեներալի սէրը գրաւելու. չէ՞ որ բարկութեան միջոցին այդպէս վճռեց և ոչ թէ չարութիւնից: Նա միևնոյն ժամանակ դորանով խորամանկութիւն բանեցրեց, որովհետեւ շատ անգամ ստակալի առիւծին ահագիլու համար ծեծու՞մեն անմեղ շան: Խնդրեցէք, որ նա ձեզ ների և դուք էլ առաջուայ պաշտօնում կ'լինէք:

Կ Ա Ս. Երբէք, աւելի կ'խնդրէի, որ նա ինձ անարգէր, քան թէ խարէի այնպիսի բարի գեներալի, որ ներէր ինձ պէս թեթեամիտ, հարբեցող, անամօթ աստիճանաւորի: Խմեցի—թութակի նման շատախօսեցի, գնացի ցնորքներ դուրս տալու, կռուելու, հայհոյելու և սկսեցի կատաղի խօսքերով կռուել իմ ստուերի հետ:—Օ, զինու հոգի—եթէ՛ դեռ չունիս անուն, կնքումե՞մ քեզ օտտանայ անունով:

Ե Ա Գ Օ. Ո՞ւմ ետեւից էիք վազում մերկացրած թրով: Ի՞նչ արաւ նա ձեզ:

Կ Ա Ս. Չ'գիտեմ:

Ե Ա Գ Օ. Ինչպէ՛ս թէ չ'գիտեմ:

Կ Ա Ս. Շատ բան եմ յիշում, բայց խառք. յիշումե՞մ որ վէճ ծագեցաւ, բայց թէ ի՞նչու—չ'գիտեմ: Ո՛հ, մեզ ինչո՞ւ բնդունակութիւն է տուած տեղ տալ թշնամու, բանականութեան թշնամու. ի՞նչու մեզ բնդունակութիւն է տուած խնջոյքներով, ուրախութեամբ, զուարճութեամբ հաւասարուել առնառնի:

Ե Ա Գ Օ. Բայց զարմանալի բան. այժմ դուք բողբոջվէ՛ն

առողջ դատողութեան մէջ էք. այդ ի՞նչպէս շուտ սթա-  
փուեցաք:

Կ Ա Ս. Գինու սատանան կամեցաւ տեղ տալ կատարու-  
թեան սատանային: Մի վիշտը զարթեցրեց մի ուրիշը, կարծես  
նորա համար որ աւելի շուտով ստիպէր ինձ անարգել, ատել  
իմ անձը:

Ե Ա Գ Օ. Է՛հ, բաւական է, դուք շատ խիստ բարոյա-  
կանութեան վարկապետ դառաք: Իհարկէ ժամանակին, տե-  
ղին և դրութեան նայելով՝ չ'պէտքէ այդպիսի դէպք պատա-  
հէր, և Աստուծոյ յայտնի է թէ իմ կողմից ի՞նչեր չէի զո-  
հիլ . . . բայց անցել է. այժմ պէտք է հնարք գտնել կրկին  
ձեռք բերելու կորցրած պատիւը . . . վշտանալով ոչինչ չի  
դառնալ:

Կ Ա Ս. Եթէ խնդրեմ նորանից կրկին իմ տեղը՝ նա պէտ-  
քէ ասի. դու հարբեցող ես: Այս խօսքը բաւական է պա-  
պանձեցնելու ինձ—եթէ մինչև անգամ հիգրայի չափ բերան-  
ներ ունենայի: Լինել կարգին մարդ և յանկարծ դառնալ յի-  
մար և ապա անասուն . . . Օ՛հ սարսափելի է:—Իւրաքանչիւր ա-  
ւելնորդ բաժակը անիծեալ լինի. նորա միջի եղածը սատա-  
նայ է, սատանայ:

Ե Ա Գ Օ. Է՛հ բաւական է. լաւ գինին բարի, քնքոյշ ա-  
րարած է. միայն շնորհք պէտք է ունենալ վարուել նորա հետ:—  
Ձեր բոլոր հայհոյանքները նորա դէմ բոլորովին անիրաւացի են:  
Դուք կարծեմ համոզուած էք իմ ձեր վերայ ունեցած համակ-  
րութեանը:

Կ Ա Ս. Գործով համոզուեցայ—խմելով:

Ե Ա Գ Օ. Այդ ի՞նչ խօսք է. թէ դուք և թէ ամէն մարդ  
այնպիսի դէպքում կ'իմէր: Ես ձեզ կ'սովորցնեմ թէ ինչ ա-  
նէք: Այս բոպէիս մեր գեներալը—Դէզդէմնան է: Ես այդ  
ասուամեմ որովհետև գեներալը բոլորովին անձնատուր է եղած

նորա տեսքին, կերպարանքին և գեղեցկութեան. այս բոպէիս  
Դէզդէմնան նորա Աստուածն է: Ուրեմն խոստովանուեցէք  
այդ աստուծուն ձեր բոլոր արածները և խնդրեցէք որ կրկին  
տայ ձեր առաջուայ տեղը: Նա այնքան ներողամիտ, այնքան  
բարի և ցաւակցող է, որ խնդիրք չ'կատարելը յանցանք է  
համարում: Խնդրեցէք նորան որ կրկին միացնի այն օղը, որ  
կապումէր ձեզ իւր ամուսնոյ հետ, և դրաւ կ'դնեմ ողջ ունե-  
ցածս, որ նա առաջուանից աւելի ևս խիստ կերպով կ'բարե-  
փամանայ ձեզ հետ:

Կ Ա Յ. Բո խորհուրդը վատ չէ:

Ե Ա Գ Օ. Երբեքում եմ ձեզ վերայ ունեցած սիրոյս և ան-  
կեղծութեան վրայ:

Կ Ա Ս. Հաւատումեմ, և հէնց վաղը առաւօտեան կ'խնդ-  
րեմ բարեսիրտ Դէզդէմնային բարեխօսելու ինձ համար: Եթէ  
այդ յոյսը ևս զաւաճանի ինձ՝ այն ժամանակ—մնա՛ս բարև  
կեանք իմ:

Ե Ա Գ Օ. Ձի դաւաճանիլ: Սակայն բարի գիշեր, լէյտե-  
նանտ, պէտքէ մէկ անգամ էլ պտտեմ քաղաքը:

Կ Ա Ս. Բարի գիշեր, ազնիւ եագօ. (Դուրս է գնում):

Ե Ա Գ Օ. Դէհ ո՞վ կուսի թէ ես այստեղ խաբեբայու-  
թիւններ եմ անում, երբ իմ խորհուրդը այնքան խելքի մօտիկ,  
այնքան օգտաւէտ է: Արդարև այդ ամենագեղեցիկ միջոցն է  
Մաւրի համակրութիւնը կրկին գրաւելու համար. որովհետև  
Դէզդէմնային բարի գործ գործել տալուց հեշտ բան չ'կայ. նա  
այնքան բարի է, որքան և բնութիւնը. նորա մի խօսքը  
բաւական է որ Մաւրը եղէգնի պէս աստանուի: Դէզդէմնան  
իւր գեղեցկութեամբ այնպէս կախարդել է նորան, որ կարողէ  
հաշտեցնել և թշնամացնել ում հետ կամենայ, կատարել այն  
բոլորը ինչ կամենումէ և որքան բարեհաճումս Մի՛ թէ այդ  
խաբեբայութիւն է կամ ստորութիւն երբ կասսիօյին բաղ-

դաւորութեան հասնելու ճանապարհ եմ ցոյց տալիս: Էհնց բանն էլ դորանում է. Կթորքի հողիները այդպիսի խաբէութիւն չեն կարող հնարել: Պէտք է նրանց աշխատել մի սոսկալի մեղանշութեան աստիճանի հասցնել—բայց նոքա, զիտեմ, աշխատելու են այդ մեղքը նրկնային առաքինութեան զիմնակով ծածկելու Այդպէս և ես պէտքէ վարուեմ: Հէնց այն ժամանակ երբ այդ յիմարը Քէզզէժոնայից օրնութիւն կ'ինդրի և նա կ'համաձայնի բարեխօսել Մաւրի մօտ՝ ես կ'թափեմ Սեւի ահանջը թոյն և մասնացոյց կանեմ թէ նոցա մէջ կապակցութիւն կայ—մեղանշական մտքեր և որքան կ'ինը բարեարութիւնից դրդած կ'աշխատի Կասսիօյին ամուսնու հետ հաշտեցնել ևս այնքան Մաւրի սիրտը աստիճանաբար դժոխային նախանձ կ'ձգեմ: Այսպիսով կ'նոջ առաքինութիւնը կ'գարձնեմ մում, նորանով կ'հիւսեմ ուռկանս և այդ ուռկանով կ'որսամ ամէնին:

Նէրս է հոնում ՌՕԳՌԻԳՕՆ:

Ի՞նչ կայ, Ռօդաիգօ:

ՌՕԳ. Ի՞նչ այն որ ես այս որսում ոչ թէ որսկան շան դեր եմ կատարում այլ հաչողը Համարեա մնխեցի բոլոր փողերս, այս գիշերուայ քօթակն էլ իւր կարգին և զիտեմ վերջանալու է նորանով, որ պէտքէ ստիպուեմ յետոյ առանց պօռուչկի վերադառնալ Վեներտիկ—միայն հետս տանելով մի փոքր փորձառութիւն:

Ե Ա Գ Օ. Որքան կարեկցութեան արժանի են անհամբեր մարդիկը: Որտե՞ղ ես լսել թէ մի որեւիցէ վէրք յանկարծ առողջանար: Ի՞նչ պիտես որ մենք խելքով ենք զործում, իսկ խելքը սպասում, յարմար ժամանակի: Բայց ի՞նչ կայ վերջապէս. մի թէ մեր զործերը վատ են դնում: Կասսիօն ծեծեց

քեզ—բայց չէ՞ որ դու էլ այդ դէպքով զրկեցիր նորան տեղից: Նղենին իհարկէ աճուռէ և առանց արեգակի, բայց նորա պտուղները այնուամենայնիւ հասնումեն ծաղկելուց յետոյ: Սպասիր: Սահայն ահա լուսանումէ. գործերի և զուարճութեան մէջ մարդ չի իմանում ինչպէս է անցնում ժամանակը: Գնա՛ տուն.— գնա՛ ասումեմ—յետոյ աւելի կ'իմանաս: Դէհ գնա խնդրումեմ: (Ռօդաիգօն դուրս է գնում): Այժմ ինձ երկու բան է մնում անելու. կ'նոջ համոզել որ խնդրի Քէզզէժոնային Կասսիօյի համար և յետոյ կանչել մի որեւիցէ տեղ Մաւրին և ապա նորա հետ միասին գնալ հէնց այն բոպէին այնտեղ, ուր Կասսիօն խնդրում կ'լինի նորա կ'նոջը: Այդպէս է, այդպէս, այդ ամենալաւ միջոցն է: Ի՞նչ ի զործ ուրեմն առանց յետաձգութեան:

*[Faint bleed-through text from the reverse side of the page, including a decorative separator line.]*

... արքայի անունով զիջեցին իրացած ընդ իսկ որ ինչ ընդ...  
... արքայի անունով զիջեցին իրացած ընդ իսկ որ ինչ ընդ...  
... արքայի անունով զիջեցին իրացած ընդ իսկ որ ինչ ընդ...

### ԵՐՐՈՐԴ ԵՐԵՐՈՒՆԾ.

#### ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ.

##### Ամրոցի առաջ:

Ներսէս Բարեպետ ԿԱՍՍԻՕՆ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԻ Կէտ:

Կ Ա Ս. Խաղաղէք այստեղ. դուք գոհ կ'մնաք ձեր աշխատութեան վարձատրութիւնից: Միայն առաջ մի փոքր կամաց և ապա բարձր ձայնով գոչեցէք. Ողջոյն մեր իշխանին: (Նրա ժիշկները ածուեն:)

Ներսէս Բարեպետ ԾԱՂՐԱԾՈՒՆ:

Ծ Ա Ղ. Այս ի՞նչ բան է, պարոններ, ձեր գործիքները չ'լինի թէ նէսպղի հոտ են առել. ձայնը քրթերից է դուրս գալիս:

2 Ե Ր Ա Ժ. Այդ ինչպէս...

Ծ Ա Ղ. Չէ՞ որ գործիքները շունչ քաշելով պէտք է ածել:

1 Ե Ր Ա Ժ. Շունչ քաշելով:

Ծ Ա Ղ. Ուրեմն պոչաւոր են:

1 Ե Ր Ա Ժ. Ինչպէ՞ն թէ պոչաւոր:

Ծ Ա Ղ. Այդպէս են իմ տեսած երաժշտական գործիքներից շատերը: Ահա՛ ձեզ փող, պարոններ. ձեր երևելի երաժշտութեանը այնքան հաւանեց գեներալը, որ ՚ի սէր Քրիստոսի խնդրում է վերջացնել:

1 Ե Ր Ա Ժ. Այս բոլորիս:

Ծ Ա Ղ. Բայց եթէ ջիւղներումը այնպիսի գործիք ունէք, որ ածելիս ձայն չի հանում—աճեցէք. ձայնաւորը դեներալը կրկնումեմ չի սիրում:

1 Ե Ր Ա Ժ. Այդպիսին մենք չունենք:

Ծ Ա Ղ. Այդ դէպքում շտապեցէք շուիններդ քսակում դնել և հեռացէք. ես ժամանակ չունեմ ձեզ հետ մասլահատներ անելու:—Դէ՛հ, ցրուեցէք օդի մէջ, անյայտացէք: (Նրա ժիշկները հեռանում են):

Կ Ա Ս. Լսի՛ր, սիրելի բարեկամ:

Ծ Ա Ղ. Ես լսումեմ, բայց թէ բարեկամն էլ լսումէ, այդ չ'զիտում:

Կ Ա Ս. Խնդրեմ լսեցէք առանց յիմարութեանց: Եթէ գեներալը կնոջ մօտ դտնուող սինիօրան վեր է կացել, յայտնի՛ր նորան թէ Կասսիօ անուռով մէկը մեծ կարևորութիւն ունի մի քանի խօսք ասելու նորան: Իհարկէ չես մերժիլ խնդիրքս:

Ծ Ա Ղ. Նա արդէն վեր է կացել և եթէ միտք ունենայ ներկայանալ ձեզ՝ կ'յայտնեմ: (Նրա և Գնաւի):

Կ Ա Ս. Խնդրումեմ, սիրելիս:

Ներսէս Բարեպետ ԵԱԳՕՆ

Ա՛հ ինչ յարմար ժամանակ, Եազօ:

Ե Ա Պ Օ. Ինչպէս երևումէ չէք էլ քնել:

Կ Ա Ս. Ոչ, արդէն լուսանումէր, երբ մենք բաժանուեցանք: Ես այնքան յանդուզն գտնուեցայ, սիրելի Նագո, որ մարդ ուղարկեցի կնոջդ ետևից. կամենումեմ խնդրել նորան, որ յարմար ժամանակ գտներ ինձ Դէզդէմոնային ներկայացնելու համար:

Ե Ա Պ Օ. Այս բոպէիս կ'ղրկեմ ձեզ մօտ և կաշխատեմ զանազան միջոցներով Մաւրին հեռացնել, որպէս զի արձակ ու համարձակ խօսէք:

Կ Ա Ս. Ողջ հոգուովս շնորհակալ եմ քեզանից (Նագոն քնոմէ) ես դեռ կեանքումս չեմ պատահել այսպիսի բարի և ազնիւ Ֆլորէնտիացու:

Ներսէս Դեմոն ԷՄԻԼԵԱՆ.

Է Մ Ի Լ. Բարև, սիրելի լէյտենանտ, շատ ավրեցայ այդ անախորժ անցքի մասին, բայց ամէն բան կ'անցնի: Դորա մասին գեներալը խօսեց իւր կնոջ հետ. — նա մեծ եռանդով խնդրումէր ձեզ համար. գեներալը ասաց թէ այն վերաւորված մարդը այս տեղ մեծ ազդեցութիւն և յարգանք ունի, խոհեմութիւնը պահանջումէր պատժել. բայց աւելացրեց թէ սիրումէ ձեզ և առանց մի որևիցէ բարեխօսութեան հէնց սպասումէ յարմար ժամանակի որ կրկին ձեզ ձեր առաջուայ պաշտօնը սայ:

Կ Ա Ս. Այնուամենայնիւ — խնդրումեմ, եթէ կարելի է յարմար ժամանակ գտնէք, Դէզդէմոնայի հետ առանձին պէտք է խօսեմ:

Է Մ Ի Լ. Շատ կարելի է — գնա՛նք — ես շուտով այդ յարմար ժամանակը ձեզ կրնեմ ներկայացնեմ:

Կ Ա Ս. Դուք ինձ շատ կ'պարտաւորացնէք: (Դեմոն էս քնոմէ):

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Ամրոցի մի սենեակում:

Ներսէս Դեմոն ՕՏԷԼԻՕՆ ԵԱՊՕՆ և Ք Գոնի ՍՊԱՀՆԵՐ.

Օ ՏԷ Լ. (Նագոն) Տո՛ւր այս նամակները նուա՛վարին և խնդրի՛ր իմ խոնարհ յարգանքս մատուցանի ծերակոյտին. իսկ այժմ գնումեմ ամրութիւնները քննելու, այնտեղ կ'գտնէք ինձ:

Ե Ա Պ Օ. Այս բոպէիս կ'գամ. (Դեմոն է քնոմէ):

Օ Տ Է Լ. Դէ՛հ, սինիօրներ, կամենա՞ք ամրութիւնները նայելու:

Ս Պ Ա Հ Ն Ե Ր Ը. Պատրաստ ենք, գեներալ:

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Ամրոցի առաջ:

Ներսէս Դեմոն ԴԷԶԴԵՄՈՆԱՆ, ԿԱՍՍԻՕՆ և ԷՄԻԼԵԱՆ

Դ Է Զ Դ. Հաւատացէ՛ք, սիրելի Կասսիօ, ամէն միջոց ձեր օգտին դորձ կ'գնեմ:

Է Մ Ի Լ. Աշխատեցէք, բարի սինիօրա: Տեսնումեմ քանի որէ ամուսինս այնպէս տխուր է երևում, որ կարծես թէ իրան պատահած լինէր այդ անբաղութիւնը:

Դ Է Զ Դ. Բարեկիրտ մարդ: Մի վշտացէք Կասսիօ, անպատճառ կ'հաշտեցնեմ ձեզ:

Կ Ա Ս. Բարի սինիորա, ինչ որ էլ չ'պատահէր Միքայէլ  
Կասսիօյին, այնուամենայնիւ նորա մէջ կ'գտնէք մի անձնանուէր  
սիրտ, որ բարասու մէ ձեզ համար:

Գ Է Զ Գ. Հաւատումեմ և շնորհակալ եմ: Ի ուք սիրումէք  
ամուսնուս, վաղուց է ձանաչումէք նորան—ուրեմն պէտքէ հաս-  
կանայիք թէ այդ անգթութիւնը ժամանակաւոր է և թէ խո-  
հեմութիւնը այդպէս էր պահանջում:

Կ Ա Ս. Ճշմարիտ է, սինիորա՛. բայց այդ խոհեմութիւնը  
այնքան երկար կարող է քաշել, այնպիսի կերակրով, ջրային  
բոյսերով կ'աճ ի, հանգամանքները այնքան նորան կ'մեծաց-  
նեն, որ գեներալը՝ իմ բացակայութեան միջոցին ընտրելով մի  
ուրիշին—իհարկէ և բողբոլին կ'մոռանայ սէրս և ծառայու-  
թիւնս:

Գ Է Զ Գ. Երբէք, ահա էմիլեայի մօտ տալիս եմ խօսք որ  
զուք ձեր տեղը կ'ստանաք: Իմացէ՛ք, որ թքածս ես երբէք  
չեզոյ չեմ, տուած խօսքս մինչև վերջին կէտը կ'կատարեմ: Ես  
նորան հանգիստ չեմ տալ, կ'համոզեմ, կ'ձանձրացնեմ, անկո-  
ղինը դարոց կդարձնեմ, իսկ սեղանը քարոզի տեղ, ամէն խօ-  
սակցութեան մէջ կ'խառնեմ Կասսիօյի խնդիրքը, թէկուզ նե-  
ղանայ էլ. միամիտ եղէք: Թո՛ղ մահը փակէ աչքերս եթէ չ'կա-  
տարեմ ձեր խնդիրքը:

Բէմի խորհում էրեւոմէն ՕՏԷԼԼՕՆ և ԵԱԳՕՆ.

Է Մ Ի Լ. Սինիորա, ձեր ամուսինը գալիս է:

Կ Ա Ս. Պէտքէ թողնեմ ձեզ, սինիորա:

Գ Է Զ Գ. Բայց ի՞նչու, նայեցէք թէ ինչպէ՞ս պէտքէ  
խնդրեմ ձեզ համար:

Կ Ա Ս. Ոչ, ոչ այժմ, սինիորա՛: Այնքան շփոթուած,  
այնքան վրդովված եմ:

Գ Է Զ Գ. Ինչպէս կ'ամենաք. (Կասսիօն դուրս է գալիս):

Ե Ա Գ Օ. Ա՛, էդ դուր չեկաւ ինձ:

Օ Տ Է Լ. Այդ ի՞նչ ասացիր:

Ե Ա Գ Օ. Ոչինչ, գեներալ. բայց եթէ ճշմարիտ, չ'գի-  
տեմ—

Օ Տ Է Լ. Վարձեմ այն Կասսիօն էր, որ կնոջս հետ խօ-  
սումէր:

Ե Ա Գ Օ. Կասսիօն, գեներալ: Ա՛հ ո՛չ, ես երբէք չեմ  
երևակայիլ թէ Կասսիօն ձեզ տեսնելով, յանցանք գործած  
մարդու պէս ծածուկ փախէր:

Օ Տ Է Լ. Վարձեմ նա էր:

Գ Է Զ Գ. Ես, ընկերս՛, այս ըոպէիս խօսումէի խնդրողի  
հետ, այն մարդու հետ, որին քո անգթութիւնը բողբոլին  
վշտացրել է:

Օ Տ Է Լ. Ո՛ւմ:

Գ Է Զ Գ. Վրո լէյտէնանտ Կասսիօյի հետ: Լսի՛ր, ընկերս՛,  
եթէ ինձ գոնէ մի փոքր սիրումես, եթէ մի որևիցէ ազդե-  
ցութիւն ունեմ քեզ վրայ, խնդրումեմ հաշտուի՛ր հէնց այժմ  
նա, ճշմարիտ եմ ասում, բողբոլին հաւատարիմ է քեզ և  
այդ յանցանքը առանց մտածելու է գործել, միայն տարու-  
թիւնից. եթէ սխալ եմ, այն ժամանակ թո՛ղ ինձ ասեն որ  
բողբոլին զրկուած եմ աղնիւները խաբբաներից զանազանելու  
ընդունակութիւնից: Խնդրեմ յետ տուր նորան իւր պաշտօնը:

Օ Տ Է Լ. Ուրեմն նա՞ էր, որ թողեց քեզ այժմ:

Գ Է Զ Գ. Նա, և այնպէս վշտացած, որ իւր վշտի մի մասն  
էլ ինձ տուաւ, ես ցաւումեմ նորա հետ: Ընկերս, սիրելիս, կան-  
չի՛ր նորան:

Օ Տ Է Լ. Ոչ այժմ, սիրելի Ռէզդէմոնա, մի ուրիշ ժամանակ:

Գ Է Զ Գ. Բայց շո՛ւտ կ'լինի:

0 ՏԵԼ. Յարմար ժամանակին, այն էլ քեզ վերայ ունեցած սիրոյս համար:

Դ Ե Զ Դ. Այսօր ընթրիքի ժամանակ:

0 ՏԵԼ. Ոչ, ոչ այսօր:

Դ Ե Զ Դ. Ուրեմն վաղը ծաշե ժամանակ:

0 ՏԵԼ. Վաղը ես տանը չեմ ճաշում. ինձ հրաւիրել են միջնաբերդի սոյսհները:

Դ Ե Զ Դ. Դէհ եթէ այդպէս է վաղը երեկոյեան կամ երեքշաբթի առաւօտեան, կէսօրին, երեկոյեան կամ չորեքշաբթի առաւօտեան: Խնդրումեմ որ նշանակիր երբ, բայց միայն ոչ աւել երեք օրից. հաւատա՛ բողբոլին զղջացել է, հէնց վարձունքն էլ—թէև պատերազմի ժամանակ, ասումեն, լէյտէնանտը պէտքէ լաւերի օրինակ լինի—այնուամենայնիւ մարդուս բնաւորութեան հետ համեմատենք՝ այնքան չնչին է, որ հարկաւոր էլ չէ դորա վերայ այդքան երկար խօսել: Ե՛րբ կարող է զայ: Դէհ, ասա Օտէլլօ: Եթէ դու ինձնից մի բան խնդրէիր, չ՛դիտեմ ի՞նչ պատճառ կարող էի բերել չ՛կատարելու, կամ տարակուսանաց մէջ ընկնելու: Ե՛նչ. մի՞ թէ և Միքայէլ Կասսիօյին քեզ հետ հաշտեցնելու համար պէտքէ այսքան խնդրեմ, նորան՝ որ քո առաջնորդդ էիր շինում իմ սէրս ստանալու ժամանակ, որ ամենայն անգամ քեզ պաշտպանել է իմ մօտ: Հաւատա՛ ես շատ բան—

0 ՏԵԼ. Ի՛նչ ոչ մի խօսք. թո՛ղ զայ երբ կամենումէ: Ես չեմ կարող մերժել խնդիրքդ:

Դ Ե Զ Դ. Բայց այդ խնդիրք էլ չէ. դա միևնոյնէ եթէ ասէի. հագիր ձեռնոցներդ կամ աք շոր, կէ՛ր մի որևիցէ աւելի անդաւոր կերակուր, մի խօսքով աշխատիր գործել այն՝ ինչ քեզ օգտաւէտ է: Բայց կ՛պատահի այնպիսի մի բան կ՛խնդրեմ որով կամենում լինեմ քո սէրը փորձել—այն ժամանակ իհարկէ արդէն աւելի ծանր և աւելի դժուար կ՛լիներ:

0 ՏԵԼ. Ա՛յն խնդիրքդ կ՛կատարեմ—իսկ այժմ խնդրեմ թո՛ղ ինձ մի քանի բոպէ:

Դ Ե Զ Դ. Բայց մի՞ թէ կարծու մեծ թէ ես չեմ կատարիլ—սխալվումես: Մնաս բարև, իշխանս:

0 ՏԵԼ. Գնա՛ սիրելիս. այս բոպէիս կ՛գամ քեզ մօտ:  
Դ Ե Զ Դ. Գնա՛նք, Եմիլիա՛:—Մի վշտանա՛ր, ինչ որ կամենամ կ՛կատարեմ բոլորը: (Դուրս է գալիս Եմիլիայի հետ):

0 ՏԵԼ. Գեղեցիկ արարած. — այո՛ թո՛ղ կորչի՛ իմ հոգին եթէ մի բոպէ անգամ դադարեմ քեզ սիրելուց, Դէզդէմոնա: Բայց դադարեցի—այն ժամանակ դժոխք և խաւար թո՛ղ պատեն ինձ:

Ե Ա Գ Օ. Ասացէ՛ք, գեներալ:

0 ՏԵԼ. Ի՞նչ, Եազօ:

Ե Ա Գ Օ. Յայտնի՞ էր Միքայէլ Կասսիօյին ձեր սէրը, երբ դու չէիք պսակուած գեղեցիկ Դէզդէմոնայի հետ:

0 ՏԵԼ. Սկզբից մինչև վերջ. ինչո՞ւ ես հարցնում:

Ե Ա Գ Օ. Ոչէ՛նչ. միայն անմիտ կասկածանքներս փարատելու համար, ճշմարիտ ուրիշ ոչինչ:

0 ՏԵԼ. Ի՛նչ կասկած:

Ե Ա Գ Օ. Ես չէի կարծում թէ նա ծանօթ էր նորա հետ:

